ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018 թվականի N – Ա

«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» , «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ «Բարձրագույն կրթության մասին», «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությունը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակները

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության և հետազոտական բնագավառների իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները:

2. Սույն օրենքի նպատակներն են՝

1) ստեղծել բարձրագույն կրթության համակարգի կարգավորման, որակի ապահովման և կատարելագործման արդյունավետ իրավական հենք,

2) խթանել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի մրցունակությունը, միջազգայնացումը և նորարարությունների շարունակական ներդրումը միջազգային (այդ թվում՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի) զարգացման միտումներին համահունչ,

3) խթանել համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև և բարձրացնել դրանց հանրային պատասխանատվությունը,

4) կարգավորել հասարակության և պետության դերակատարությունը Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության շարունակական զարգացման գործում:

Հոդված 2. Բարձրագույն կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության բնագավառի հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

3. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների վրա՝ անկախ դրանց կազմակերպաիրավական և սեփականության ձևերից:

4. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ռազմական, ոստիկանական, աստվածաբանական, միջազգային պայմանագրերով, ինչպես նաև պետության մասնակցությամբ ստեղծված ուսումնական հաստատությունների գործունեության կարգը սահմանվում է սույն օրենքով, եթե այլ օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **բարձրագույն կրթություն՝** առնվազն միջնակարգ կրթության հենքի վրա ակադեմիական և (կամ) հետազոտական կրթական ծրագրերով բարձրագույն ուսումնական հաստատություններում և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում իրականացվող ուսուցման և ուսումնառության գործընթաց,
2) **բարձրագույն ուսումնական հաստատություն՝** օրենքով սահմանված կարգով իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն, որն ունի պետության կողմից սահմանված կարգով բարձրագույն կրթական (ըստ անհրաժեշտության՝ նաև կրթության այլ մակարդակներում) և (կամ) հետազոտական ծրագրեր իրականացնելու իրավասություն,
3) **ուսանող (կուրսանտ)՝** սահմանված կարգով բուհ ընդունված և բարձրագույն կրթության առաջին, երկրորդ կամ երրորդ աստիճանում ուսումնառող անձ,
4) **ասպիրանտ՝** բարձրագույն կրթության երրորդ աստիճանում սովորող ուսանող,
5) **բարձրագույն կրթության որակավորում (այսուհետ՝ որակավորում)՝** սահմանված կարգով անձին շնորհված բարձրագույն կրթության որևէ աստիճան, որը հաստատվում է համապատասխան ավարտական փաստաթղթով (դիպլոմ) և հավաստում տվյալ մակարդակի կրթական ծրագրի ավարտը,
6) **նախաբակալավրի որակավորում (associate degree)՝** ուսուցման կարճ շրջափուլի արդյունքում շնորհվող որակավորում, որի ուսումնառության ավարտը հավաստվում է համապատասխան ավարտական փաստաթղթով,
7) **բակալավրի որակավորում՝** բարձրագույն կրթության առաջին աստիճանում շնորհվող որակավորում, որի ուսումնառության ավարտը հավաստվում է համապատասխան ավարտական փաստաթղթով,
8) **մագիստրոսի որակավորում՝** բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում շնորհվող որակավորում, որի ուսումնառության ավարտը հավաստվում է համապատասխան ավարտական փաստաթղթով,
9) **մասնագիտության դոկտոր (գիտությունների թեկնածու, PhD)՝** բարձրագույն կրթության երրորդ աստիճանում շնորհվող որակավորում և գիտական աստիճան, որը շնորհվում է բարձրագույն կրթության երրորդ աստիճանի ուսումնառության ծրագիրն ավարտելու և ատենախոսությունը պաշտպանելու արդյունքում և հավաստվում է համապատասխան փաստաթղթով,
10) **կլինիկական ռեզիդենտ (օրդինատոր)՝** բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի հենքի վրա բժշկության ոլորտում ինքնուրույն մասնագիտական գործունեության իրավունք ունեցող բժշկի հսկողությամբ մասնագիտական ուղղվածությամբ ուսումնառող անձ, որի ուսումնառության ավարտը հավաստվում է համապատասխան ավարտական փաստաթղթով,
11) **ակադեմիական կրեդիտ՝** չափման պայմանական միավոր, որը հիմնված է դասընթացի և կրթական ծրագրի համար սահմանված ուսումնառության վերջնարդյունքների և սովորողի՝ ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածության վրա,
12) **կրեդիտային համակարգ՝** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման և կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգ,
13) **կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿԿՓԵՀ)՝** եվրոպական կրեդիտային համակարգ, որն ապահովում է ակադեմիական կրեդիտների համադրելիությունը և փոխանցելիությունը ու դյուրացնում է ուսանողների շարժունությունը եվրոպական բարձրագույն կրթական տարածքում,
14) **մասնագիտություն՝** ուսումնառության որոշակի առարկայական ուղղություն՝ համապատասխան որակավորման շնորհմամբ,

15) **մասնագիտության ոլորտ՝** կրթության և գիտության բնագավառ, որը ներառում է հարակից մասնագիտություններ կամ մասնագիտությունների խմբեր, որոնցով իրականացվում է բարձրագույն կրթություն,
16) **մասնագիտության կրթական ծրագիր՝** ուսումնական բաղադրիչների ամբողջություն, որը սահմանում է բարձրագույն կրթության համապատասխան աստիճանի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը՝ ներառելով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, տեղեկություններ ուսուցման, դասավանդման և գնահատման մեթոդների, ուսումնառության նվազագույն տևողության և ծավալի, կրեդիտների, ընդունելության և ավարտական պահանջների, առարկայական ցանկի ու ծավալի, առարկաների նկարագրերի մասին,
17) **մասնագիտության կրթական ծրագրի չափորոշիչ՝** փաստաթուղթ, որը սահմանում է բարձրագույն կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ձևավորման ձևաչափը, որի համաձայն բուհը մշակում է մասնագիտության կրթական ծրագիրը,
18) **ուսումնական մոդուլ՝** մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչ հանդիսացող դասընթացի (դասընթացների խմբի) ինքնուրույն բաղկացուցիչ մաս, որի համար տրվում է կրեդիտ,
19) **ուսումնառության վերջնարդյունքներ՝** ուսումնառության արդյունքում սովորողի ձեռք բերված գիտելիքը, հմտությունները և կարողունակությունը նկարագրող նվազագույն պահանջներ,
20) **ամփոփիչ ատեստավորում՝** բուհի բարձրագույն կրթության համապատասխան աստիճանի որևէ կրթական ծրագրի շրջանավարտի գիտելիքի, հմտությունների և կարողունակության ստուգման գործընթաց,
21) **որակի ապահովում՝** ներքին և արտաքին գնահատման սահմանված չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան բուհի և դրա կրթական ծրագրերի որակի բարելավման ու արդյունավետության բարձրացման շարունակական գործընթաց,
22) **ինքնավերլուծություն՝** բուհի կողմից իր գործունեության, զարգացման և կրթական ծրագրերի, անձնակազմի և կառուցվածքի, ծառայությունների մատուցման որակի ու արդյունավետության ուսումնասիրության և վերլուծության գործընթաց,
23) **հավատարմագրում՝** որակի արտաքին գնահատման պաշտոնական գործընթաց, որի արդյունքում հավաստվում է բուհի և (կամ) դրա կրթական ծրագրերի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին և չափանիշներին,
24) **ինստիտուցիոնալ հավատարմագրում՝** բուհի գործընթացների արտաքին գնահատում, որի արդյունքում հավաստվում է բուհի դասավանդման, ուսումնառության, հետազոտության, որակի ապահովման և այլ գործընթացների համապատասխանությունը հաստատության առաքելությանը, նպատակներին ու զարգացման ծրագրին՝ հավատարմագրման չափանիշներին համապատասխան,
25) **ծրագրային հավատարմագրում՝** բուհի, ըստ կրթական աստիճանների, մասնագիտության կրթական ծրագրի (կրթական ծրագրերի խմբի) արտաքին գնահատում, որի արդյունքում հավաստվում է կրթական ծրագրի (կրթական ծրագրերի խմբի) բովանդակության և շրջանավարտների պատրաստման որակի համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրի չափորոշչի և հավատարմագրման չափանիշների պահանջներին,
26) **հավատարմագրման պետական գրանցամատյան՝** պետության կողմից ճանաչված, հավատարմագրում իրականացնող կառույցների, հավատարմագրված բուհերի և մասնագիտությունների կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության շտեմարան,
27) **հաշվետվողականություն՝** հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներին համապատասխան, սահմանված կարգով բուհի կողմից իր գործունեության վերաբերյալ

հաշվետվությունների հրապարակում, որոնք արտացոլում են հաստատության հանրային (կամ սոցիալական) պատասխանատվությունը և կատարողականությունը հասարակության ու պետության առջև,

28) **ուսանողական կրթաթոշակ՝** ուսանողի ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում կամ ուսանողի ֆինանսական աջակցություն՝ պետական բյուջեի, բուհի, ինչպես նաև այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հատկացումներից,

29) **հեռավար ուսուցում՝** համակարգված ուսուցման ձև, երբ ուսումնառության գործընթացը իրականացվում է հիմնականում առցանց՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով,

30) **ինտեգրված ծրագրով ուսուցում՝** բարձրագույն կրթության իրար հաջորդող երկու կրթական աստիճաններին (բակալավրի և մագիստրոսի, մագիստրոսի և ասպիրանտի) համարժեք ուսուցում մեկ ծրագրով, որի ավարտին անձին շնորհվում է ներառված աստիճաններից ավելի բարձր կրթական աստիճանին համապատասխան որակավորում,

31) **դիպլոմ (ավարտական փաստաթուղթ)՝** անձին որակավորում և աստիճան շնորհելու փաստը հավաստող պաշտոնական փաստաթուղթ, որը տրամադրվում է իրավասու մարմնի կողմից,

32) **դիպլոմի հավելված՝** դիպլոմին կից տրվող սահմանված ձևաչափի փաստաթուղթ, որը նկարագրում է դիպլոմում նշված անձի ուսումնառության բնույթը, մակարդակը, բովանդակությունը և կրթական ծրագրի կարգավիճակը,

33) **համատեղ կրթական ծրագիր՝** երկու կամ ավելի բուհերի կողմից համատեղ մշակված և (կամ) իրականացվող կրթական ծրագիր,

34) **համատեղ կամ կրկնակի որակավորում՝** երկու կամ ավելի բուհերի կողմից համատեղ կրթական ծրագրի իրականացման արդյունքում շնորհված բարձրագույն կրթության որակավորում և միասնական ավարտական փաստաթուղթ կամ առանձին ավարտական փաստաթղթեր,

35) **ճանաչում՝** լիազորված մարմնի կողմից օտարերկրյա որակավորման համադրելիության պաշտոնական ճանաչում (հավաստում)՝ որակավորումը կրողի մուտքը բարձրագույն կրթության հաջորդ աստիճան և (կամ) աշխատանքային գործունեություն արտոնելու համար,

36) **հանրային (պետական) բուհ՝** պետության կողմից կամ պետության մասնակցությամբ հիմնադրված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող բուհ, որի ֆինանսական միջոցները գոյանում են ինչպես պետական ֆինանսավորումից, այնպես էլ՝ վճարովի կրթական, հետազոտական և այլ ծառայություններից,

37) **մասնավոր բուհ՝** որևէ անձի, անձանց խմբի կամ կազմակերպության կողմից հիմնադրված, շահույթ հետապնդող կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող բուհ, որի ֆինանսական միջոցները գոյանում են մասնավոր ներդրումներից, ինչպես նաև վճարովի կրթական, հետազոտական և այլ ծառայություններից,

38) **բուհական ինստիտուտ՝** բուհի կառուցվածքային միավոր, որն իրականացնում է բարձրագույն կրթություն և հետազոտություն որոշակի մասնագիտության ոլորտում,

39) **ֆակուլտետ՝** բուհի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանում, որն իրականացնում է բարձրագույն կրթություն և հետազոտություն մեկ կամ մի քանի մասնագիտություններով,

40) **ամբիոն՝** բուհի ստորաբաժանում, որն ապահովում է որոշակի կրթական ծրագրերով դասընթացների և գիտահետազոտական գործունեության իրականացումը,

41) **բուհական ինքնավարություն՝** բուհի կողմից որոշումների կայացման ինքնուրույնություն, անկախություն և պատասխանատվություն, որոնք ուղղված են ակադեմիական ազատությանը, ուսումնական և հետազոտական գործունեության կազմակերպմանը,

ներքին կառավարմանը, տնտեսական և այլ գործունեությանը՝ սույն օրենքին և բուհի կանոնադրությանը համապատասխան,

42) **ակադեմիական ազատություն՝** բուհի ակադեմիական անձնակազմի և սովորողների հետազոտություն անելու, ուսուցանելու և ուսանելու անկախության իրավունք,

43) **ռեկտորների խորհուրդ՝** բուհերի կողմից հիմնադրված մարմին(ներ), որոնք ներկայացնում են բուհերի շահերը և պաշտպանում դրանք, ինչպես նաև խորհրդատվական կարգով մասնակցում են բարձրագույն կրթության քաղաքականության ձևավորմանը,

44) **որակավորումների պետական գրանցամատյան (էլեկտրոնային ռեգիստր)՝** Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բուհերում և դրանց մասնաճյուղերում սովորողների ակադեմիական առաջխաղացման, շնորհված որակավորման և նրան տրված ավարտական փաստաթղթի տեղեկատվության գրանցման միասնական շտեմարան,

45) **բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգ՝** տվյալների հավաքագրման, վերլուծման և տեղեկատվության տարածման միասնական էլեկտրոնային համակարգ, որը ներառում է տեղեկություններ բուհերի կառավարման, տնտեսական, ուսումնական և հետազոտական գործընթացների, այդ թվում՝ սովորողների ու աշխատողների մասին, որը նպատակաուղղված է բարձրագույն կրթության ոլորտում քաղաքականության մշակմանը, պլանավորմանը, մշտադիտարկմանը, գնահատմանը և բարելավմանը:

Հոդված 4. Բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները և խնդիրները

1. Բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) մարդու և քաղաքացու՝ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը, խտրականության բացառումը,

2)բարձրագույն կրթության մատչելիությունը, մրցակցայնությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը և հրապարակայնությունը,

3) կրթական գործընթացի անընդհատությունը, կայունությունը և շարունակականությունը,

4) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթություն ստանալու պայմանների հավասարությունը:

2. Բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության նպատակներն են՝

1) բարձրագույն կրթության համակարգի զարգացումը,

2) բուհերի ինքնավարության, ակադեմիական և հետազոտությունների իրականացման ազատության խթանումն ու զարգացումը, օրենքի առջև բոլոր ինքնավար բուհերի հավասարության ապահովումը,

3) բարձրագույն կրթության որակի ապահովումը՝ բարձրագույն կրթության համակարգում ուսուցման որակի ներքին (ներբուհական) ու արտաքին գնահատման և հավատարմագրման միջազգային, այդ թվում՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի չափանիշների ներդրմամբ,

4) բարձրագույն կրթության ոլորտում նորարարությունների և բուհերի ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստելը:

3. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝

1) գիտամանկավարժական և գիտահետազոտական աշխատանքների միջոցով նոր գիտելիքի ստեղծումը, զարգացումը, պահպանումը, տարածումը և փոխանցումը,

2) գիտելիքի, հմտությունների և կարողունակության ձեռքբերման ու զարգացման միջոցով սովորողների պատրաստումը հետագա ուսումնառության, մասնագիտական աշխատանքի և հարատև ուսումնառության նպատակով,

3) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող բնագավառների, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի համար համապատասխան որակավորմամբ մասնագետների պատրաստմանն աջակցումը,

4) միջազգային գիտակրթական համագործակցության զարգացմանը և դրա ինտեգրմանը նպաստումը,

5) բուհերի սովորողների և գիտամանկավարժական կազմի ակադեմիական շարժունության խթանումը, ավարտական փաստաթղթերի և որակավորումների համադրելիության ապահովումը,

6) միջազգային ասպարեզում ՀՀ բարձրագույն կրթության գրավչության և մրցունակության բարձրացման նպաստումը,

7) հետազոտական, տեխնոլոգիական և նորարարական գործունեություն իրականացնող բուհերին պետական աջակցության ցուցաբերումը, ինչպես նաև հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների մասով արտոնությունների տրամադրումը, այդ թվում՝ ուսման վարձի և կրթաթոշակների մասով,

8) տնտեսության կայուն զարգացման, ինչպես նաև հիմնարար ու կիրառական հետազոտությունների իրականացման համար մասնագետների պատրաստումը և որակավորման բարձրացումը,

9) սփյուռքի համար, ինչպես նաև հայագիտության զարգացման նպատակով մասնագետների պատրաստումը և որակավորման բարձրացումը:

Հոդված 5. Բուհի խնդիրները

1.Բուհի հիմնական խնդիրներն են՝

1) անձի կողմից իր ընտրած մասնագիտությամբ որակյալ բարձրագույն կրթության ապահովումը,

2) պետության տնտեսական և հասարակական գործընթացներին մասնակցությունը,

3) գիտահետազոտական և նորարարական գործունեության իրականացումը գիտամանկավարժական կազմի և սովորողների գիտական հետազոտությունների ու ստեղծագործական գործունեության միջոցով, ինչպես նաև ստացված արդյունքների առևտրայնացումը կամ օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական և կրթական գործընթացներում,

4) բարձրագույն կրթության և հետազոտությունների համար տրամադրվող պետական միջոցների արդյունավետ օգտագործումը,

5) գիտամանկավարժական կազմի պատրաստումը,

6) բարձրագույն կրթության որակի ներքին ապահովման համակարգի շարունակական բարելավումը, ժամանակակից ուսուցման մեթոդների ներդրումը և դրանց բազմազանության ապահովումը,

7) միջազգայնացման և մրցունակության ապահովումը, ինչպես նաև նորարարությունների շարունակական ներդրումը,

8) կրթական գործընթացի անընդհատության, մրցակցայնության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,

9) անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը բարձրագույն կրթություն ստանալու միջոցով,

10) սովորողի՝ ազգային, հոգևոր և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը,

11) սովորողների շրջանում քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում,

12) հասարակության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը,

13) կառավարման արդյունավետության գործունեության ցուցանիշների համակարգի ներդրումը:

Հոդված 6. Բուհի ինքնավարությունը, իրավասությունը, ակադեմիական ազատությունները և հաշվետվողականությունը

1. Բուհն իրականացնում է իր ինքնավարությունը ինքնակառավարման, ակադեմիական ազատությունների և կոլեգիալության սկզբունքներով՝ հաշվետվողականության պահանջների պահպանմամբ:

2. Բուհը սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան ունի՝

1) ակադեմիական ինքնավարություն՝ իր ուսումնական և հետազոտական գործառույթներն ինքնուրույն սահմանելու, կազմակերպելու և կառավարելու իրավասություն,

2) կադրային ինքնավարություն՝ իր գիտամանկավարժական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության, նշանակման, առաջխաղացման և ազատման գործառույթներն ինքնուրույն սահմանելու, կազմակերպելու և կառավարելու իրավասություն,

3) կազմակերպչական ինքնավարություն՝ իր կառուցվածքը, ստորաբաժանումները, առանձնացված միավորները, ակադեմիական և գիտական կառույցներն ինքնուրույն սահմանելու, իրավաբանական անձ ստեղծելու, ինչպես նաև՝ իր ներքին կառավարչական կարգերը և ընթացակարգերն ինքնուրույն հաստատելու իրավասություն,

4) ֆինանսական ինքնավարություն՝ իր տարեկան բյուջեն ինքնուրույն ձևավորելու, ֆինանսական միջոցները կառավարելու, եկամուտները ձևավորելու և ծախսեր կատարելու իրավասություն:

3. Բուհի իրավասությունն է՝

1) համապատասխան ոլորտի գործատուների ներգրավածության ապահովմամբ բարձրագույն կրթության կրթական ծրագրերի, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի (նկարագրերի) մշակումն, դրանց հաստատումը, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը,

2) ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների, ինչպես նաև ընթացիկ գնահատման, ատեստավորման ձևերի ու պարբերականության ընտրությունը,

3) ըստ կրթական աստիճանների՝ սովորողների, ներառյալ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց ուսումնական գործընթացի կազմակերպումը,

4) հետազոտական աշխատանքների կատարումը, տեղական և միջազգային գիտակրթական և հետազոտական ծրագրերին մասնակցությունը և իրականացումը,

5) հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցության ապահովումը,

6) սովորողների ընդունումը և ուսումնառության ընդհատումը՝ սույն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով,

7) աշխատակազմի հաստիքացուցակի կազմումը և հաստատումը, աշխատողների նշանակումը, առաջխաղացումը և ազատումը,

8) կառուցվածքային ստորաբաժանումների և այլ միավորների ստեղծումն ու դրանց կառուցվածքի ձևավորումը, ինչպես նաև աշխատողների իրավունքների և պարտականությունների սահմանումը՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան,

9) գիտամանկավարժական և վարչական կազմի որակավորման բարձրացման ու վերապատրաստման դասընթացների կազմակերպումը,

10) ուսումնական, գիտահետազոտական գործընթացների կազմակերպման և աշխատակազմի ընտրության, պաշտոնի զբաղեցման ու առաջխաղացման, ինպես նաև աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման, կարգերի (ընթացակարգերի) մշակումը և հաստատումը,

11) բարձրագույն կրթության առաջին և երկրորդ աստիճաններում որակավորումների, ինչպես նաև նախաբակալավրի որակավորման, շնորհումը,

12) կոչումների շնորհումը՝ սույն օրենքի և իր կանոնադրությամբ սահմանված դրույթներին համապատասխան,

13) ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունների որոշումը, տարեկան բյուջեի ձևավորումը և հաստատումը, ուսանողական կրթաթոշակների սահմանումը,

14) ֆինանսական միջոցների կառավարումը, ներառյալ աշխատողների վարձատրությունը, ուսանողական կրթաթոշակների տրամադրումը, բուհի պահպանմանը և զարգացմանը, հետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը,

15) վճարովի կրթական և հետազոտական ծառայությունների, ինչպես նաև օրենքով չարգելված և իր անմիջական գործունեության հետ առնչվող տնտեսական և առևտրային գործունեության իրականացումը,

16) բարձրագույն կրթության համապատասխան աստիճաններով ըստ մասնագիտությունների ուսման վարձի չափերի հաստատումը՝ սույն օրենքով սահմանված դրույթներին համապատասխան,

17) դրամաշնորհների, փոխառությունների և վարկերի ստացումը՝ սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան,

18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեության իրականացումը:

4. Երևանի պետական համալսարանը կրթական, գիտահետազոտական և մշակութային ինքնավար հաստատություն է, որի կարգավիճակի և կառավարման առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով և ռազմաուսումնական հաստատության կանոնադրությամբ:

6. Բուհը կարող է ստեղծել հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ, որոնք անմիջականորեն հաշվետու են բուհի կառավարման խորհրդին (հոգաբարձուների խորհրդին) և դրանց ընդհանուր կառավարումն իրականացվում է կառավարման խորհրդի կողմից՝ օրենքով և բուհի կանոնադրությամբ նախատեսված իրավասությունների շրջանակներում:

7. Բուհն օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների համագործակցության, այդ թվում՝ միջազգային պայմանագրերի շրջանակներում կարող է իրականացնել մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, մասնագետների փոխանակում, համատեղ գիտական աշխատանքներ, ծրագրեր, ինչպես նաև այդ երկրների օրենսդրությանը համապատասխան օտարերկրյա պետություններում ստեղծել մասնաճյուղեր, ստորաբաժանումներ և այլն:

8. Բուհն իր գործունեության համար հաշվետու է հասարակության և պետության առջև ու պետք է յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը, իր պաշտոնական կայքում հրապարակի բուհի ռազմավարական ծրագրի գործողությունների իրականացման արդյունքների, բյուջեի և կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն:

9. Բուհը պարտավոր է ընդունել և հրապարակել էթիկայի ու շահերի բախման կանոնակարգեր, ինչպես նաև դրանցից բխող համապատասխան ընթացակարգեր, կանոններ ու մշակել և իրականացնել համապատասխան քաղաքականություն:

10. Բուհը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմիններին տրամադրել անհրաժեշտ պաշտոնական տեղեկատվություն (վիճակագրություն, հաշվետվություն, այդ թվում՝ գործունեության արդյունքային ցուցանիշների, և այլն), որը պետք է բարձրագույն կրթության և հետազոտությունների համակարգի կառավարման ու մշտադիտարկման համար:

11. Բուհը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը, իր պաշտոնական կայքում որակական և քանակական տեղեկատվություն ներկայացնել կրթական ծրագրերի, շնորհվող որակավորումների, հետազոտական գործունեության, գնահատման արդյունքների, ուսանողների, շրջանավարտների կարծիքների ուսումնասիրությունների վերաբերյալ:

12. Բուհը պարտավոր է իր տարեկան հաշվետվության մեջ ներառել նաև բուհում էթիկայի կանոնակարգի կիրառման արդյունավետության վերաբերյալ տեղեկատվություն, որը պետք է արտացոլի բուհի կողմից էթիկայի կանոնակարգի իրականացման և այդ գործընթացի նկատմամբ մշտադիտարկման մասին անհրաժեշտ տվյալներ:

Գ Լ ՈՒ Խ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 7. Բարձրագույն կրթության համակարգը և բուհերի տեսակները

1.Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ներառում է՝

1) բարձրագույն կրթության կառավարման մարմինները և կազմակերպությունները, որոնք բարձրագույն կրթության բնագավառում իրականացնում են համապատասխան գործառույթներ,

2) բարձրագույն կրթական գործընթացում ներգրավված մասնակիցներին,

3) բարձրագույն կրթության աստիճանները և որակավորումները,

4) լիցենզավորված բուհերը,

5) Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ-ը), մասնագիտությունների ոլորտային (ենթաոլորտային) որակավորումների շրջանակը, մասնագիտության կրթական ծրագրի չափորոշիչը, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման չափորոշիչները և չափանիշները,

6) որակավորումների պետական գրանցամատյանը:

2. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում գործող կազմակերպությունների ըստ տեսակների և անվանումների դասակարգման չափանիշները և պահանջները սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ հիմք ընդունելով կազմակերպության գործունեության ուղղվածությունը, բարձրագույն կրթության տարբեր աստիճաններով և մասնագիտության ոլորտներով ուսումնառության կազմակերպումը, գիտական հետազոտությունների իրականացման մակարդակը և այլն:

Հոդված 8. Մասնագիտության կրթական ծրագրի չափորոշիչը

1. Մասնագիտության կրթական ծրագրի չափորոշիչը սահմանում է՝

1) ծրագրի նպատակը և խնդիրները, ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները,

2) ծրագրի մուտքի ընդհանուր պահանջները, ուսուցման, գնահատման և ամփոփիչ ատեստավորման պահանջները, ուսուցման լեզուն,

3) ուսանողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, ուսուցման տևողությունը և անհրաժեշտ ակադեմիական կրեդիտների քանակը,

4) ծրագրի բովանդակությունը՝ ուսումնառության սահմանված վերջնարդյունքներով պայմանավորված օրինակելի առարկայացանկը,

5) դասախոսական կազմին ներկայացվող որակավորման ու փորձի պահանջները,

6) շնորհվող որակավորումը և հետագա մասնագիտական գործունեության ոլորտ(ներ)ը:

2. Անկախ բուհի կազմակերպաիրավական և սեփականության ձևերից ու մասնագիտություններից (կրթական ծրագրերից)՝ բարձրագույն կրթության բակալավրի կրթական աստիճանում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների դասընթացների ուսուցումը ներառվում է առնվազն երկու կիսամյակի ընթացքում, որոնք ավարտվում են գիտելիքների պարտադիր ստուգմամբ:

3. Մասնագիտության կրթական ծրագրերը հաստատում է բուհի գիտական խորհուրդը՝ ՈՒՇ-ի և մասնագիտության կրթական ծրագրի չափորոշչի օրինակելի ձևի հիման վրա:

4. Բուհի՝ ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերն երաշխավորում են տարբեր կրթական աստիճաններում ուսանողների ուսումնառության գործընթացը՝ ապահովելով ԿԿՓԵՀ-ի կիրարկումը և որակավորման աստիճանների շնորհումը:

Այն բուհերը, որոնք ուսումնական գործընթացը կազմակերպում են այլ կրեդիտային համակարգով, պետք է ապահովեն նաև վերջինիս համադրելիությունը ԿԿՓԵՀ-ին:

Հոդված 9. Բարձրագույն կրթության ընդհանուր պահանջները, որակավորման աստիճանները, ուսուցման ձևերը և ժամկետները

1. Բարձրագույն կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը՝ ըստ կրթական աստիճանների, կարող են իրականացվել ամբողջական բեռնվածության և (կամ) մասնակի բեռնվածության, ինչպես նաև հեռավար (դիստանցիոն) ձևերով: Տարբեր ձևերով իրականացվող ուսումնառության արդյունքները պետք է լինեն համարժեք:

2. Թույլատրվում է բարձրագույն կրթություն ստանալու տարբեր ձևերի զուգակցումը:

3. Հայաստանի Հանրապետության բուհերի ռեկտորների խորհրդի առաջարկությամբ և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ՝ հեռավար ձևով բարձրագույն կրթություն ստանալ չթույլատրվող մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Բուհերում դասավանդման լեզուն գրական հայերենն է: Առանձին մասնագիտական դասընթացներ կամ դասընթացների առանձին թեմաներ, ուսումնական մոդուլներ կարող են դասավանդվել օտար լեզվով:

5. Օտար լեզուներով ուսուցման կազմակերպումը հնարավոր է նաև,

1) եթե կրթական ծրագրի բովանդակությունը կապված է օտար լեզվի հետ,

2) եթե ուսումնական պարապմունքներն իրականացվում են օտարերկրացի դասախոսների կողմից,

3) օտարերկրյա քաղաքացիների համար իրականացվող կրթական ծրագրերի դեպքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով,

4) եթե ուսումնառությունն իրականացվում է համատեղ կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց մի մասն իրականացվում է մեկ այլ բուհում և դրանց ավարտին շնորհվում է համատեղ որակավորման աստիճան,

5) մագիստրատուրայում՝ կրթական ծրագրի առնվազն 30 տոկոս, և ասպիրանտուրայում՝ առնվազն 50 տոկոս:

6. Ակադեմիական տարին բաղկացած է 2 հիմնական ուսումնական կիսամյակից (աշնանային և գարնանային): Բուհի կողմից կարող է սահմանվել նաև ուսումնառության լրացուցիչ ամառային փուլ: Ակադեմիական տարվա կիսամյակների սկիզբը և ավարտը,

ուսանողի արձակուրդի տևողությունները սահմանվում են մասնագիտության կրթական ծրագրի չափորոշչով:

7. Բարձրագույն կրթությունը իրականացվում է իրար հաջորդող երեք կրթական աստիճաններում՝ հիմնական աստիճաններով աստիճանաշնորհող և աստիճան չշնորհող լրացուցիչ կրթական ծրագրերով՝

1) կարճ շրջափուլ՝ նախաբակալավրի աստիճանով ուսուցում, որի արդունքում ուսանողը ձեռք է բերում մասնագիտական և գործնական գիտելիքներ, հմտություններ և կարողունակություն՝ աշխատելու և (կամ) բակալավրի կրթական աստիճանում ուսումը շարունակելու համար:

Նախաբակալավրի ուսուցման համար նախապայման է առնվազն միջնակարգ կրթությունը կամ դրան համապատասխան որակավորումը կամ միջնակարգ կրթությանը համարժեք օտարերկրյա որակավորումը:

Կարճ շրջափուլով ուսուցումն ավարտած անձին շնորհվում է նախաբակալավրի որակավորման աստիճան:

2) առաջին՝ բակալավրի աստիճանով ուսուցում, որի արդյունքում ուսանողը ձեռք է բերում տվյալ բնագավառի համակողմանի և համակարգված գիտելիք, հմտություններ և կարողունակություն՝ աշխատելու և (կամ) մագիստրատուրայում ուսումը շարունակելու համար:

Բակալավրի ուսուցման համար նախապայման է առնվազն միջնակարգ կրթությունը կամ դրան համապատասխան որակավորումը կամ միջնակարգ կրթությանը համարժեք օտարերկրյա որակավորումը, ինչպես նաև նախաբակալավրի որակավորումը:

Բակալավրի ուսուցումն ամփոփվում է բակալավրի աստիճանի ամփոփիչ ատեստավորմամբ և ուսուցումն ավարտած անձին շնորհվում է բակալավրի որակավորման աստիճան:

3) երկրորդ՝ մագիստրոսի աստիճանով ուսուցում, որի արդյունքում ուսանողը ձեռք է բերում տվյալ բնագավառի խոր մասնագիտական գիտելիք, հմտություններ և կարողունակություն՝ աշխատելու և (կամ) ասպիրանտուրայում ուսումը շարունակելու, ինչպես նաև հետազոտական գործունեություն իրականացնելու, համար:

Մագիստրոսի ուսուցման համար նախապայման է բակալավրի որակավորման աստիճանը կամ դրան համարժեք որակավորումը:

Մագիստրոսի ուսուցումն ամփոփվում է մագիստրոսի աստիճանի ամփոփիչ ատեստավորմամբ և ուսուցումն ավարտած անձին շնորհվում է մագիստրոսի որակավորման աստիճան:

4) երրորդ՝ ասպիրանտական ուսուցում, որի արդյունքում ուսանողը ձեռք է բերում խոր և համալիր գիտելիք, հմտություններ և կարողունակություն՝ մեկ կամ մի քանի փոխհատվող ոլորտներում հետազոտական և մասնագիտական գործունեություն իրականացնելու և նոր գիտելիք ձեռք բերելու համար:

Ասպիրանտի ուսուցման համար նախապայման է մագիստրոսի որակավորման աստիճանը կամ դրան համարժեք որակավորումը, այդ թվում՝ բարձրագույն կրթության երկրորդ աստիճանում ընդգրկված դիպլոմավորված մասնագետի որակավորումը, իսկ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժշկի:

Ասպիրանտի ուսուցումն ամփոփվում է ատենախոսության պաշտպանությամբ, իսկ ուսուցումն ավարտած և ատենախոսությունը պաշտպանած անձին շնորհվում է գիտական աստիճան:

5) աստիճանաշնորհող կրթական ծրագրերը կարող են լինել նաև ինտեգրված ծրագրով ուսուցմամբ՝ ընդգրկելով ուսումնառության առաջին և երկրորդ կամ երկրորդ և երրորդ աստիճանները:

Առաջին և երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսուցման համար նախապայման է առնվազն միջնակարգ կրթությունը կամ դրան համարժեք համապատասխան որակավորումը կամ միջնակարգ կրթությանը համարժեք օտարերկրյա որակավորումը:

Երկրորդ և երրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսուցման համար նախապայման է բակալավրի որակավորման աստիճանը կամ դրան համարժեք որակավորումը:

Առաջին և երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսումնառած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձին շնորհվում է մագիստրոսի որակավորմանը համարժեք որակավորման աստիճան, իսկ ինտեգրված բժշկական ծրագրով ուսումնառած անձին՝ «բժիշկ» կամ «բժիշկ-ստոմատոլոգ» որակավորման աստիճան:

Երկրորդ և երրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսուցումն ավարտած և ատենախոսությունը պաշտպանած անձին շնորհվում է գիտական աստիճան:

6) Ուսումնառությունը չավարտած անձին տրվում է ակադեմիական տեղեկանք կուտակած կրեդիտների վերաբերյալ:

8. Բարձրագույն բժշկական կրթության ինտեգրված կամ համարժեք ծրագրով ուսուցումն անցած շրջանավարտը կարող է կրթությունը շարունակել կլինիկական ռեզիդենտուրայում՝ բժշկական, ստոմատոլոգիական մասնագիտության կամ ընդհանուր բժշկական գործունեության ծրագրով: Կլինիկական ռեզիդենտուրայի ուսուցման ծրագրի տևողությունը մեկից մինչև չորս տարի է:

9. Կլինիկական ռեզիդենտուրա իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները, ուսուցման կազմակերպման չափանիշները և այդ կազմակերպությունների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկության հիման վրա:

10. Բժշկական բարձրագույն կրթության կլինիկական ռեզիդենտուրայի ծրագիրն ավարտվում է ավարտական քննությամբ, որը հանձնելուց հետո անձին շնորհվում է տվյալ մասնագիտացման գծով «բժիշկ-մասնագետ» կամ «ընդհանուր բժշկական գործունեության բժիշկ» որակավորում:

11. Կլինիկական ռեզիդենտուրայի կրթական ծրագրերի ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

12. Բակալավրի կրթական աստիճանով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի ոչ պակաս 180 և ոչ ավելին, քան 240 կրեդիտը: Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսուցման տևողությունը պետք է կազմի առնվազն 3 տարի:

Նախաբակալավրի կրթական աստիճանով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի ոչ պակաս 120 և ոչ ավելին, քան 150 կրեդիտը: Նախաբակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսուցման տևողությունը պետք է կազմի առնվազն 2 տարի, բայց ոչ ավելին, քան 2,5 տարին:

13. Մագիստրոսի կրթական աստիճանով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի ոչ պակաս 60 և ոչ ավելին, քան 120 կրեդիտը: Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ուսուցման տևողությունը պետք է կազմի առնվազն 1 տարի:

14. Ասպիրանտի կրթական աստիճանով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի 180 կրեդիտ: Մասնագիտության դոկտորի որակավորման աստիճան ստանալու համար ուսուցման տևողությունը պետք է կազմի առնվազն 3 տարի:

15. Առաջին և երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի ոչ պակաս 300 և ոչ ավելին, քան 360 կրեդիտը: Ինտեգրված ծրագրի առաջին մասը (համարժեք բակալավրին) պարտադիր պետք է լինի առաջին շրջափուլի կրթական ծրագրին, իսկ մնացած մասը՝ երկրորդ շրջափուլի կրթական ծրագրին համարժեք: Ինտեգրված ծրագրով որակավորման աստիճան ստանալու համար ուսուցման տևողությունը պետք է կազմի առնվազն 5 տարի, բայց ոչ ավելին, քան 6 տարին:

Երկրորդ և երրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի ոչ պակաս քան 240 կրեդիտ: Ինտեգրված ծրագրի առաջին մասը (համարժեք մագիստրոսին) պարտադիր պետք է լինի առաջին շրջափուլի կրթական ծրագրին, իսկ մնացած մասը (համարժեք ասպիրանտին)՝ երկրորդ շրջափուլի կրթական ծրագրին համարժեք: Ինտեգրված ծրագրով որակավորման աստիճան ստանալու համար ուսուցման տևողությունը պետք է կազմի առնվազն 4 տարի:

16. Միևնույն մասնագիտությամբ առաջին և երկրորդ որակավորման աստիճաններում սովորողի կողմից ձեռք բերվող կրեդիտների թիվը չի կարող պակաս լինել, քան 300 կրեդիտը, իսկ երկրորդ և երրորդ որակավորման աստիճաններում՝ 240 կրեդիտը:

17. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում բոլոր կրթական աստիճաններում սովորողի տարեկան լրիվ ուսումնական բեռնվածությունը կազմում է առավելագույնը 60 կրեդիտ:

18. Ամբողջական բեռնվածությամբ ուսումնառության դեպքում ուսանողը պարտավոր է բուհի տվյալ կրթական ծրագրով սահմանված ուսուցման համար նախատեսված ժամկետում կուտակել տարեկան լրիվ ուսումնական բեռնվածության առնվազն 75 տոկոսին համապատասխան գումարային կրեդիտներ: Կրթական ծրագրով նախատեսված ամբողջական պահանջները կատարելու համար ուսանողի ուսումնառության ընդհանուր տևողությունը կարող է երկարացվել մինչև 2 ուսումնական տարի:

Մասնակի բեռնվածությամբ ուսումնառության դեպքում ուսանողը պարտավոր է բուհի տվյալ կրթական ծրագրով սահմանված ուսուցման համար նախատեսված ժամկետում կուտակել տարեկան լրիվ ուսումնական բեռնվածության 50-ից մինչև 75 տոկոսին համապատասխան գումարային կրեդիտներ: Կրթական ծրագրով նախատեսված ամբողջական պահանջները կատարելու համար՝ ծրագրի ավարտման տարում ուսումնական բեռնվածության առնվազն 50 տոկոս լրացրած և համապատասխան գումարային կրեդիտներ կուտակած, ուսանողի ուսումնառության ընդհանուր տևողությունը կարող է երկարացվել ոչ ավելի, քան 4 ուսումնական տարի:

Մասնակի բեռնվածությամբ ուսումնառության դեպքում կրթական ծրագրի ավարտման համար ուսուցման ընդհանուր ժամանակահատվածում սահմանված կրեդիտներն ուսանողի կողմից չկուտակելու պարագայում՝ հետագայում ուսանողի ուսումնառության շարունակման դեպքում, տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքների լրակազմի փոփոխության պարագայում, բուհի կողմից սահմանված կարգով քննարկվում է կուտակած կրեդիտների պահպանման հնարավորությունը:

Ամբողջական բեռնվածությամբ ուսումնառության դեպքում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին՝ կրթական ծրագրի պահանջներին համաձայն, ավարտման ենթակա ուսումնական բեռնվածության առնվազն 75 տոկոս համապատասխան գումարային կրեդիտներ չկուտակած ուսանողին բուհը կարող է առաջարկել ուսումնառությունը շարունակել մասնակի բեռնվածությամբ:

19. Համատեղ որակավորում շնորհող կրթական ծրագրերի ծավալը (տևողությունը) սահմանվում է բուհերի գիտական խորհուրդների կողմից՝ սույն օրենքի դրույթներին համաձայն:

Հոդված 10. Բարձրագույն կրթության համատեղ կրթական ծրագրերի պահանջները և համատեղ կրթական ծրագրի իրականացման համագործակցության պայմանագիրը

1. Բարձրագույն կրթության համատեղ կրթական ծրագիրը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

1) համատեղ կրթական ծրագիր կարող է իրականացվել բարձրագույն կրթության նույն աստիճանում Հայաստանի Հանրապետության բուհերի կամ Հայաստանի Հանրապետության և

օտարերկրյա ուսումնական հաստատության համագործակցության դեպքում՝ համագործակցության պայմանագրի հիման վրա,

2) համատեղ կրթական ծրագրի մասնակից առնվազն մեկ բուհ պետք է ունենա համապատասխան աստիճանում նույն կրթական ծրագրով կրթություն իրականացնելու և համապատասխան որակավորում շնորհելու իրավունք,

3) եթե համատեղ կրթական ծրագրի մի մասն իրականացվում է օտարերկրյա պետության որևէ ուսումնական հաստատությունում, ապա այդ ուսումնական հաստատության կողմից շնորհված ավարտական փաստաթուղթը պետք է ճանաչվի այդ պետության կողմից,

4) համատեղ կրթական ծրագրի համագործակցության պայմանագրով իրականացվող կրթական ծրագրի վերջնարդյունքները պետք է լինեն իրագործելի, հավաստված որակի ապահովման կառուցակարգերով և ճանաչվեն ծրագրի մասնակից բոլոր ուսումնական հաստատությունների կողմից,

5) համատեղ կրթական ծրագիրը պետք է մշակվի և հաստատվի ծրագրի մասնակից բոլոր ուսումնական հաստատությունների կողմից:

2. Համատեղ կրթական ծրագրով բարձրագույն կրթության կազմակերպումը իրականացվում է համատեղ կրթական ծրագրի համագործակցության պայմանագրի հիման վրա, որը պետք է պարտադիր ներառի՝

1) համատեղ կրթական ծրագրում մասնակից ուսումնական հաստատությունների միջև պարտավորությունների բաշխումը,

2) համատեղ կրթական ծրագիր իրականացնելու հիմքերը, այդ թվում՝ մասնակից ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելության, ուսուցման, գնահատման, հեռացման, ամփոփիչ ատեստավորման, որակավորման շնորհման և ավարտական փաստաթղթի տրամադրման պայմանները, իսկ տարբերության դեպքում՝ համադրելիության պայմանները,

3) դասավանդման (ուսուցման) լեզուն (լեզուները),

4) որակի ապահովման համատեղ հիմքերը,

5) մասնակից ուսումնական հաստատությունների ուսանողների և դասախոսական կազմի իրավունքներն ու պարտականությունները և վեճերի լուծման կարգը,

6) համատեղ կրթական ծրագրի ֆինանսավորման պայմանները, այդ թվում՝ վարձավճարների չափը, վճարման պայմանները, արտոնությունների և ուսանողական կրթաթոշակների տրամադրումը,

7) համատեղ կրթական ծրագրի փոփոխման, դադարեցման և հետագա շարունակման պայմանները:

Հոդված 11. Բարձրագույն կրթության ավարտական փաստաթուղթը և դրա հավելվածը, փաստաթղթերի գնահատումը և ճանաչումը

1. Բարձրագույն կրթության ավարտական փաստաթուղթը և դրա հավելվածը՝

1) բարձրագույն կրթության առաջին, երկրորդ աստիճանների և ինտեգրված ծրագրերով ուսումնառության ավարտին և ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքի հիման վրա, ինչպես նաև նախաբակալավրի ուսուցման ավարտին, անձին տրվում է շնորհված որակավորումը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) և համապատասխան հավելված: Ասպիրանտական կրթական ծրագրի յուրացման և պաշտպանած ատենախոսության արդյունքում անձին շնորհվում է գիտական աստիճանը հավաստող դիպլոմ,

2) ինստիտուցիոնալ հավատարմագրում չունեցող բուհի դեպքում, ծրագրային հավատարմագրում չունեցող մասնագիտության կրթական ծրագրի, ինչպես նաև աստիճան չշնորհող կրթական ծրագրի (այդ թվում՝ լրացուցիչ կրթության) ավարտին անձին տրվում է բուհի կողմից սահմանված ձևանմուշով ուսումնառությունը հավաստող վկայական կամ հավաստագիր,

3) դիպլոմի և դիպլոմի հավելվածի ձևանմուշները, դրանց պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման, գրանցման և պահպանման կարգը սահմանվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից,

4) համատեղ կրթական ծրագրով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է կամ համատեղ դիպլոմ կամ համատեղ կրթական ծրագրի մասնակից յուրաքանչյուր բուհի դիպլոմ՝ համատեղ կրթական ծրագիր իրականացնելու պայմանագրում սահմանված պայմանների համաձայն:

2. Բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմները և դրանց հավելվածները, ինչպես նաև վկայականները, բուհերի կողմից տրամադրվում են անվճար:

3. Բուհերի կողմից տրվող կրթությունը հավաստող ավարտական փաստաթղթերը (դիպլոմները), այդ թվում՝ համատեղ կրթական ծրագրի արդյունքում, պետք է գրանցվեն Հայաստանի Հանրապետության որակավորումների պետական գրանցամատյանում:

4. Տվյալ կամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած այլ բուհում բարձրագույն կրթության հաջորդ կրթական աստիճանում սահմանված կարգով ուսումնառությունը շարունակելու իրավունք ունեն միայն այն անձինք, ովքեր ստացել են ինստիտուցիոնալ հավատարմագրված բուհի բարձրագույն կրթության համապատասխան աստիճանի դիպլոմ:

5. Բուհերի ավարտական փաստաթղթերի պետական ճանաչումը.

1) Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հանրային ծառայության պաշտոններում կարող են աշխատել կամ միջազգային ներկայացուցչական գործառույթ կատարել այն անձինք, ովքեր ստացել են ինստիտուցիոնալ և (կամ) համապատասխան մասնագիտության կրթական ծրագրով հավատարմագրված բուհի կողմից շնորհված որակավորում ու դիպլոմ,

2) օտարերկրյա ուսումնական հաստատությունների կողմից շնորհված բարձրագույն կրթության որակավորումները գնահատվում և ճանաչվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի, այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի համաձայն,

3) փախստականների, տեղահանված անձանց և փախստականի կարգավիճակ ունեցող անձանց որակավորումները ճանաչվում են սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն, իսկ այն դեպքերում, երբ անձի ձեռք բերված որակավորումը չի կարող ապացուցվել փաստաթղթի միջոցով, ապա դրա ճանաչման համար պատասխանատու մարմինները պետք է մշակեն ընթացակարգեր, որոնք ուղղված կլինեն արդար գնահատմանը և անձին հնարավորություն կտան շարունակել կրթությունը կամ աշխատել ըստ մասնագիտության:

Հոդված 12. Բուհի լիցենզավորումը

1. Բուհի կրթական գործունեության լիցենզավորումը՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում՝ անկախ գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ու սեփականության ձևերից, բարձրագույն կրթական ծրագրեր (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի) իրականացնող իրավաբանական անձինք ենթակա են լիցենզավորման,

2) ինտեգրված ծրագրով ուսուցում իրականացնող իրավաբանական անձինք պետք է լիցենզավորված լինեն նրանց կողմից իրականացվող կրթական ծրագրերի յուրաքանչյուր կրթական աստիճանի համար,

3) հանրային և մասնավոր բուհերի լիցենզիան տրվում է 10 տարի ժամկետով և սույն օրենքի դրույթների համաձայն լիցենզիայի ժամկետը ենթակա է երկարաձգման ևս 7 տարի ժամկետով, եթե սույն օրենքի պահանջներին համապատասխան ստացել է ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության ձևերով:

2. Բուհի լիցենզիայի տրամադրման համար հիմք են՝

1) կրթական գործունեության իրականացնելու համար անհրաժեշտ ուսումնական տարածքի առկայությունը, որի նկատմամբ բուհն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված համապատասխան իրավունքները,

2) ուսումնաարտադրական պրակտիկայի և լաբորատոր բազայի, անհրաժեշտ գույքի, գրադարանային-տեղեկատվական համակարգի առկայությունը և ուսումնամեթոդական ապահովումը,

3) համապատասխան կրթական մակարդակներով միաժամանակ ուսուցում ապահովելու համար մանկավարժական և դասախոսական կազմի, գիտահետազոտական և ուսումնաօժանդակ անձնակազմի ապահովումը, որոնց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով կնքված են աշխատանքային պայմանագրեր,

4) անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայությունը, իսկ լիցենզիայի երկարաձգման դեպքում՝ ֆինանսական միջոցների կայունությունը,

5) առնվազն հինգ տարվա ռազմավարական ծրագրի առկայությունը,

6) որակի ապահովման ներքին համակարգի առկայությունը:

3. Լիցենզավորման գործընթացն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, ուսումնական հաստատությունների կամ կազմակերպությունների մասնակցությամբ ստեղծված բուհերը, ինչպես նաև օտարերկրյա բուհերի մասնաճյուղերը, անկախ իրենց կազմակերպաիրավական ու սեփականության ձևերից, Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեություն իրականացնելու նպատակով ենթակա են լիցենզավորման Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

5. Լիցենզավորված բուհը պարտավոր է դիմել լիցենզավորման նոր գործընթացի՝ սույն օրենքով սահմանված լիցենզիայի ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 1 տարի առաջ:

6. Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն օրենքի դրույթներին և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի պահանջներին չհամապատասխանելու պարագայում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից նոր լիցենզիա չտրամադրելու (մերժելու), լիզենզիան կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում բուհը չի կարող նոր սովորողներ հավաքագրել և ընդունելություն կատարել:

7. Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցնելու և (կամ) դադարեցնելու, ինչպես նաև նոր լիցենզիա չտրամադրելու (մերժելու) կամ լիցենզիայից զրկելու դեպքերում բուհերի (դրանց մասնագիտությունների կրթական ծրագրերի) սովորողները կարող են մասնակցել համապատասխան կամ հարակից մասնագիտություններով հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող բուհերի ընթացիկ և (կամ) ամփոփիչ ատեստավորմանը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

8. Բուհը լիցենզիա ստանալուց հետո ցանկացած պահի, բայց ոչ ուշ, քան լիցենզիայի ժամկետի ավարտից 1 տարի առաջ, կարող է դիմել կրթության պետական կառավարման լիազորված մարմին՝ լիցենզիայում փոփոխություն կատարելու համար:

9. Սույն օրենքի դրույթներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման գործընթացներին դիմելու համար բուհի մասնագիտությունների կրթական ծրագրերի լիցենզավորված լինելը պարտադիր պայման է:

Հոդված 13. Բարձրագույն կրթության որակի ապահովումը և դրա նկատմամբ վերահսկողությունը

1. Բարձրագույն կրթության որակի ապահովման նպատակներն են՝

1) բարձրագույն կրթության ոլորտում միասնական պետական քաղաքականության իրականացումը՝ հաշվի առնելով ՀՀ-ում գործող բուհերի բազմազանությունը,

2) շրջանավարտների պատրաստման որակի բարձրացումը՝ հաշվի առնելով բոլոր շահակիցների և հանրության կարիքներն ու ակնկալիքները,

3) բարձրագույն կրթության համակարգին հատկացված ֆինանսական և այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

2. Բարձրագույն կրթության որակի ապահովման սկզբունքներն են՝ թափանցիկությունը, հաշվետվողականությունը, հրապարակայնությունը, պարբերականությունը, օբյեկտիվությունը:

3. Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգը ներառում է՝

1) բուհերի որակի ներքին ապահովման համակարգը,

2) բուհերի որակի արտաքին ապահովման համակարգը,

3) որակի արտաքին գնահատման և (կամ) հավաստման կառույցները:

4. Բուհերի որակի ներքին ապահովման համակարգը արդյունավետորեն խթանում է.

1) որակի ապահովման քաղաքականության մշակմանը և իրականացմանը՝ շահակիցների հետ համաձայնեցված,

2) նպատակներին համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակմանը, հաստատմանը և իրագործմանը,

3) ուսանողակենտրոն ուսումնառությանը, ուսուցմանը և գնահատմանը,

4) սովորողների ընդունելության, առաջխաղացման, որակավորումների շնորհման և ճանաչման կանոնակարգմանը,

5) բարձր որակավորմամբ դասախոսական կազմով ապահովմանը,

6) ուսումնառության և ուսուցման համար անհրաժեշտ մասնագիտական և այլ անհրաժեշտ ռեսուրսներով ապահովմանը,

7) կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման և վերլուծմանը,

8) կրթական ծրագրերի և այլ գործունեության վերաբերյալ հանրությանը օբյեկտիվ, հստակ, հավաստի և հասանելի տեղեկատվության տրամադրմանը,

9) կրթական ծրագրերի մշտադիտարկմանը, պարբերական գնահատմանը և բարելավմանը՝ հանրության և սովորողների կարիքներին համապատասխան,

10) գրագողության դեմ պայքարի քաղաքականության իրականացմանը,

11) որակի ապահովման արտաքին գնահատում անցնելը,

12) որակն ապահովող անհրաժեշտ այլ գործառույթների իրականացումը:

5. Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման համակարգը՝

1) խթանում է բուհերի որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետությունը,

2) գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում՝ հաշվի առնելով շահակիցների կարիքները,

3) իրականացնում է հուսալի, թափանցիկ և հրապարակված գործընթացներ,

4) կայացնում և հրապարակում է միջազգային նորմերին համապատասխան, պետության կողմից սահմանված որակի ապահովման հրապարակված չափանիշներին համապատասխան որոշումներ և զեկույցներ,

5) ապահովում է բուհերի գնահատման արդյունքների վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորությունը,

6) իրականացում է որակի արտաքին ապահովման անհրաժեշտ այլ գործառույթներ:

6. Բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատման և(կամ) հավաստման կառույցներին ներկայացվող պահանջներն են՝

1) իրենց գործունեության հստակ իրականացումն ապահովող հրապարակված քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը,
2) անկախ և ինքնավար գործելու երաշխիքները,
3) կրթական համակարգի զարգացումների մասին թեմատիկ վերլուծությունների իրականացումը,
4) իրենց գործունեության պարբերական արտաքին գնահատում անցնելը,
5) բուհերի և դրանց մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման ու հավաստման իրականացումը:

7. Բարձրագույն կրթության որակի ապահովման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ որակի արտաքին ապահովման կառույցների միջոցով:

8. Որակի արտաքին ապահովման կառույցները պետության կողմից ստեղծված և (կամ) ճանաչված անկախ մարմիններ են, որոնց հիմնական նպատակներից է բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման գործընթացների իրականացումը:

Հոդված 14. Բուհի և մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրումը

1. Բուհի և մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրումը՝

1) անկախ բուհի գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ու սեփականության ձևերից՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումն իրականացվում է որակի գնահատման և(կամ) հավաստման կառույցների կողմից՝ սույն օրենքի դրույթների համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով,

2) ծրագրային հավատարմագրման համար կարող է դիմել միայն ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած բուհը,

3) ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումն իրականացվում է ըստ բուհերի և դրանց մասնագիտությունների կրթական ծրագրերի խմբերի կամ կրթական ծրագրերի,

4) Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում հավատարմագրման ենթակա են բարձրագույն կրթության 1-3 (այդ թվում՝ ինտեգրված ծրագրերով ուսուցման) կրթական աստիճաններով ուսուցման մասնագիտությունների կրթական ծրագրերը,

5) բուհի նոր բացված մասնագիտության կրթական ծրագիրն ենթակա է նախնական ծրագրային հավատարմագրման,

6) բուհի մասնաճյուղը ինստիտուցիոնալ հավատարմագրվում է ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող բուհի հայտի հիման վրա՝ մայր բուհի կազմում, և տրվում է մեկ միասնական հավատարմագիր մայր բուհին,

7) բուհի կողմից տրամադրված ավարտական փաստաթղթում (դիպլոմում), ինչպես նաև՝ դիպլոմի հավելվածում, պարտադիր նշվում է բուհի, դրա առանձին մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրված լինելու (առկայության դեպքում) փաստը:

2. Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված բուհը կարող է դիմել ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման սույն օրենքի դրույթների համաձայն ու չի կարող հանդես գալ որպես հավատարմագրված (ինստիտուցիոնալ կամ ծրագրային) բուհ, եթե չի անցել համապատասխան հավատարմագրման գործընթաց սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

3. Եթե բուհի միևնույն մասնագիտության կրթական ծրագրի ծրագրային հավատարմագրումն երկու անգամ անընդմեջ մերժվում է, ապա բուհը տվյալ մասնագիտության կրթական ծրագրի մասով կարող է շնորհել միայն բուհի կողմից սահմանված ձևանմուշով ուսումնառությունը հավաստող վկայական կամ հավաստագիր:

4. Ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհի շրջանավարտն իրավունք ունի իր ուսումնառությունը շարունակել հաջորդ կրթական աստիճանում՝ ծրագրային հավատարմագրում ունեցող մասնագիտության կրթական ծրագրով:

5. Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա բուհերը կամ օտարերկրյա բուհերի մասնաճյուղերը, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների, ինչպես նաև՝ բուհերի կամ կազմակերպությունների մասնակցությամբ ստեղծված բուհերը, Հայաստանի Հանրապետությունում ենթակա են հավատարմագրման սույն օրենքով և ՀՀ կառավարության սահմանած կարգով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

6. Հավատարմագրման կարգը, չափանիշները և հավատարմագրի գործողության ժամկետը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Ինստիտուցիոնալ հավատարմագրված բուհերը և դրանց ծրագրային հավատարմագրում ունեցող մասնագիտությունների կրթական ծրագրերը գրանցվում են հավատարմագրման պետական գրանցամատյանում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 15. Ընդունելությունը բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում

1. Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բուհերում, անկախ դրանց գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ու սեփականության ձևերից՝ ըստ հիմնական կրթական աստիճանների ընդունելությունը իրականացվում է մրցութային հիմունքներով՝ նախորդ կրթական աստիճանում կրթություն ստացած և ավարտական փաստաթուղթ ունեցող անձանց դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ազատ են բուհի, ուսուցման ձևերի, բարձրագույն կրթության աստիճանների և կրթական ծրագրերի ընտրության մեջ, եթե բավարարում են ընդունելության պայմաններին:

Օտարերկրացիները Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերում բարձրագույն կրթության հիմնական կրթական աստիճաններում մրցութային հիմունքներով պետության կողմից ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ կրթություն կարող են ստանալ միայն միջազգային կամ միջբուհական պայմանագրերով նախատեսված կրթաթոշակային տեղերի շրջանակներում:

2. Բուհն ըստ կրթական աստիճանի իրավունք ունի ընդունելություն հայտարարելու միայն համապատասխան լիցենզիայի (լիցենզիաների) առկայության դեպքում: Բուհը պարտավոր է ծանոթացնել դիմորդին իր լիցենզիային և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում)՝ հրապարակելով այդ տեղեկությունները:

3. Այն անձինք, ովքեր ունեն առնվազն միջնակարգ կամ դրան համարժեք կրթությունը հավաստող համապատասխան ավարտական փաստաթուղթ և բավարարում են բուհի կողմից սահմանված ընդունելության մուտքային պահանջները, իրավունք ունեն մրցութային հիմունքներով շարունակելու իրենց ուսումը բուհի բակալավրի կրթական աստիճանում (ինչպես նաև առաջին և երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսուցմամբ)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Բակալավրի կրթական աստիճանով (ինչպես նաև առաջին և երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսուցմամբ) կրթություն իրականացնող բուհերի տվյալ տարվա մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և ընդունելության քննությունների ցանկը բուհերի ներկայացմամբ հաստատում ու մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը պաշտոնապես

հրապարակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Հաստատված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելն արգելվում է:

5. Բուհերի տվյալ տարվա մասնագիտությունների (կրթական ծրագրերի) և ընդունելության քննությունների ցանկը ներառում է՝

1) կրթության ձևը,

2) մասնագիտություններն (կրթական ծրագրերը) ըստ բուհերի,

3) յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսված ընդունելության քննությունների առարկաների անվանումը,

4) քննության տեսակը,

5) քննության ձևը՝ գրավոր, բանավոր և այլն:

6. Պետության լիազորած համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից կազմակերպած քննությունները հանձնած և դրական միավորներ ստացած անձինք ստանում են վկայագրեր, որի ձևը և գործողության ժամկետը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Անկախ բուհերի կազմակերպաիրավական ձևից և կարգավիճակից՝ Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, բուհերի կամ կազմակերպությունների մասնակցությամբ ստեղծված (այդ թվում՝ օտարերկրյա բուհերում կամ օտարերկրյա բուհերի մասնաճյուղերում), բակալավրի կրթական աստիճանի (ինչպես նաև առաջին և երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսուցմամբ) ցանկացած մասնագիտության գծով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընդունելության համար «Հայոց լեզու» առարկայի քննության վկայագիրը պարտադիր է:

8. Այն անձինք, ովքեր ընդունելության համար ներկայացվող ավարտական փաստաթղթում չունեն ավարտական գնահատական «Հայոց լեզու» առարկայից, կարող են դրա փոխարեն քննություն հանձնել այլ առարկայից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

9. Քննությունների առաջադրանքները սահմանվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված հանրակրթական առարկայական ծրագրերին համապատասխան:

10. Վկայագիր ունեցող և բուհի ընդունելության մուտքային պահանջները բավարարող անձինք կարող են մասնակցել բակալավրի կրթական աստիճանով (ինչպես նաև առաջին և երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսուցմամբ) բուհերի կողմից կազմակերպվող ընդունելության մրցույթին:

Մրցույթի անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11. Այն անձինք, ովքեր ունեն համապատասխան մասնագիտության բակալավրի աստիճանի կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ, իրավունք ունեն մրցութային հիմունքներով՝ նախորդ ուսումնառության միջին որակական գնահատականների հաշվառմամբ և բուհի կողմից սահմանված ընդունելության մուտքային պահանջները բավարարելու դեպքում, շարունակելու իրենց ուսումը տվյալ կամ մեկ այլ բուհի նույն մասնագիտության մագիստրոսի կրթական աստիճանով:

12. Բարձրագույն կրթության եռաստիճան համակարգում երկրորդ աստիճանի (մագիստրատուրայի) համար ընդունելության կարգը հաստատում է բուհի գիտական խորհուրդը:

13. Այն անձինք, ովքեր ունեն համապատասխան մասնագիտության բակալավրի աստիճանի կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ, իրավունք ունեն մրցութային հիմունքներով շարունակելու ուսումը տվյալ կամ մեկ այլ բուհի մագիստրոսի կրթական աստիճանի՝ իրենց նախընտրած մասնագիտությամբ՝ ընդունելության լրացուցիչ

մասնագիտական քննությունների հանձմամբ և ըստ անհրաժեշտության՝ նախորդ ուսումնառության միջին որակական գնահատականների հաշվառմամբ:

14. Այն անձինք, ովքեր ունեն համապատասխան մասնագիտության մագիստրոսի աստիճանի, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի, ավարտական փաստաթուղթ, իրավունք ունեն մրցութային հիմունքներով՝ նախորդ ուսումնառության միջին որակական գնահատականների հաշվառմամբ և ընդունելության լրացուցիչ պայմաններին բավարարելու դեպքում, շարունակելու իրենց ուսումը բարձրագույն կրթության երրորդ աստիճանում (ասպիրանտուրայում):

15. Բարձրագույն կրթության եռաստիճան համակարգում երրորդ աստիճանի (ասպիրանտուրայի) համար ընդունելության կարգը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

16. Այն դիմորդները, ովքեր ընդունելության մրցույթի արդյունքներով սահմանված կարգին համապատասխան իրավունք են ստացել սովորելու պետական բյուջեի ֆինանսավորմամբ մի քանի մասնագիտությունների կամ տարբեր բուհերի միևնույն մասնագիտության գծով, մինչև համապատասխան կրթական աստիճանի ընդունելության վերջնաժամկետը պետք է ընտրեն մեկ բուհ (մասնագիտություն, կրթական ծրագիր), որում ցանկանում են ստանալ բարձրագույն կրթություն:

17. Բուհը սովորողի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը նախօրոք հրապարակվում է բուհի ընդունելության հայտարարության հետ:

1) Բուհի և սովորողի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում են սովորելու տարիների տևողությունը և տվյալ բուհում բարձրագույն կրթության տվյալ աստիճանի համար նախատեսված ուսման վարձի ընդհանուր չափը և կրեդիտների քանակը՝ բաշխված ըստ ուսումնական տարիների,

2) սովորողի հետ կնքված պայմանագիրը, ինչպես նաև այդ պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաշխված չափերը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն: Վերականգնված ուսանողի ուսման վարձը հաշվարկվում է տվյալ տարվա համար սահմանված վարձավճարի չափով, և նրա հետ կնքվում է նոր պայմանագիր:

18. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով, ինչպես նաև՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի նպատակով ձևակերպված արձակուրդից վերադարձած ուսանողի ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանվում է բուհ ընդունվելու պահին սահմանված ուսման վարձավճարի չափը, որը ենթակա չէ փոփոխման ամբողջ ուսումնառության ընթացքում, բացառությամբ վարձավճարի նվազման դեպքի, եթե ուսանողն ուսանողական իրավունքները վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է ուսումնառության ընդհատման պատճառը վերանալու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

19. Նպատակային ուսուցմամբ ուսումնառող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է բուհերում մրցութային կարգով պետության կողմից ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ բարձրագույն կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգի:

20. Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաև հետևյալ պայմանը. ուսանողը ավարտելուց հետո՝ առնվազն 3 տարի ժամկետով, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում: Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը Հայաստանի Հանրապետության

կառավարության սահմանած կարգով և ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ուսանողական կրթաթոշակի կրկնապատիկը: Փոխհատուցված գումարի 70 տոկոսը բուհը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 30 տոկոսը տնօրինում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող ոլորտների մասնագիտությունների ցանկը ըստ կրթական աստիճանների հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

22. Պետության կողմից ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ տեղերի թիվը՝ ըստ բարձրագույն կրթության աստիճանների, բուհերի, մասնագիտությունների, ինչպես նաև կլինիկական ռեզիդենտուրայի կրթական ծրագրերի, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը: Բուհերը ըստ կրթական աստիճանների մասնագիտությունների և ուսուցման ձևերով ունեցած լիցենզիայի տեղերի սահմաններում իրենք են հաստատում ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցմամբ (վճարովի) տեղերի թիվը:

23. Բարձրագույն ռազմաուսումնական հաստատություն ընդունված անձի հետ կնքվում է պայմանագիր՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 16. Կազմակերպությունները և միավորումները բարձրագույն կրթության համակարգում

1. Քաղաքական, կուսակցական, հասարակական, կրոնական կազմակերպությունները և միավորումները բարձրագույն կրթության համակարգում չեն գործում, բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական, ուսանողական և շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների:

Գ Լ ՈՒ Խ 3

ԲՈՒՀԵՐԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 17. Բուհի հիմնադրումը (ստեղծումը), վերակազմակերպումը և լուծարումը

1. Բուհը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Բուհը ստեղծվում է հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ:

3. Բուհը ստեղծված է համարվում հիմնադրի (հիմնադիրների) կողմից դրա կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

Հոդված 18. Բուհի կառավարումը

1. Բուհի կառավարումն իրականացվում է սույն օրենքով և հաստատության կանոնադրությամբ:

2. Հանրային բուհի կառավարման մարմիններն են՝

1) կոլեգիալ կառավարման մարմիններ՝ կառավարման խորհուրդը (հոգաբարձուների խորհուրդ) և գիտական խորհուրդը,

2) կառավարման գործադիր մարմին՝ ռեկտորը:

3. Հանրային բուհի կառավարման խորհուրդը, որի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը, ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ սույն օրենքին և հաստատության կանոնադրությանը համապատասխան:

4. Կառավարման խորհուրդը բաղկացած է առնվազն 10 անդամից և չի կարող գերազանցել 20-ը: Խորհրդի անդամների թիվը սահմանվում է հաստատության կանոնադրությամբ:

5. Կառավարման խորհուրդը ձևավորվում է բուհի դասախոսական կազմից՝ 30 տոկոս, ուսանողության ներկայացուցիչներից՝ 10 տոկոս, բուհի հետ համագործակցող գործատուներից՝ 30 տոկոս, ինչպես նաև՝ հիմնադրից և պետական կառավարման լիազորված մարմնի կողմից առաջադրված անձանցից՝ 30 տոկոս, համամասնությամբ:

6. Ուսանողության ներկայացուցիչներին առաջադրում է ուսանողական խորհուրդը (խորհրդարանը), դասախոսական հիմնական կազմից ներկայացուցիչներին՝ բուհի գիտական խորհուրդը, իսկ գործատուների ներկայացուցիչներին՝ բուհի գիտական խորհուրդը, ելնելով բուհի առանձնահատկություններից:

Կառավարման խորհրդի անդամ չեն կարող լինել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք և մարզպետները:

7. Առաջադրող մարմինը կարող է հիմնավոր պատճառաբանությամբ հետ կանչել իր կողմից առաջադրված անդամին:

8. Կառավարման խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Կառավարման խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին: Քվեարկության ժամանակ կառավարման խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Կառավարման խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե սույն օրենքով և բուհի կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

Եթե խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

9. Կառավարման խորհրդի նախագահի, ռեկտորի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև բուհի անվանման փոփոխության, լուծարման և կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են կառավարման խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե բուհի կանոնադրությամբ ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

10. Կառավարման խորհրդի նախագահ չի կարող ընտրվել ուսանողության և դասախոսական կազմից առաջադրված խորհրդի անդամը:

11. Բուհի ռեկտորը կառավարման խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:

12. Կառավարման խորհրդի իրավասությունն է՝

1) իր աշխատակարգի և կառավարման խորհրդի նախագահի ընտրության կարգի հաստատումը,

2) բուհի գործունեության՝ ռեկտորի կողմից ներկայացված տարեկան և երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի հաստատումը,

3) ռեկտորի ներկայացմամբ՝ բուհի բյուջեի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և բուհի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,

4) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշում ընդունելը,

5) օրենքով սահմանված կարգով բուհի գործունեության (այդ թվում՝ ֆինանսատնտեսական) վերահսկողությունը, ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի ընտրությունը,

6) բուհի անվանման փոփոխության, կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը, բացառությամբ, եթե կանոնադրության փոփոխությունները վերաբերվում են կանոնադրությամբ սահմանված նպատակներին,

7) կառավարման խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

8) կառավարման խորհրդի նախագահի, ռեկտորի և սույն օրենքով ու բուհի կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության ու դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

9) բուհի կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը,

10) ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների և ցուցումների կասեցումը կամ ուժը կորցրած ճանաչելը,

11) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,

12) բուհի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,

13) բուհի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

14) բուհի կառուցվածքի հաստատումը,

15) բուհի հաստիքացուցակի հաստատումը,

16)բուհի ռազմավարական ծրագրերի իրականացման արդյունքների մասին հաշվետվության ներկայացումը հիմնադրին և հանրությանը,

17) օրենքով, բուհի կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև՝ բուհի այլ մարմիններին օրենսդրությամբ չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

13. Կառավարման խորհրդի անդամները իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով:

14. Կառավարման խորհրդի նախագահի և անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են բուհի կանոնադրությամբ:

15. Կառավարման խորհուրդը կարող է ունենալ ոլորտային հանձնաժողովներ, որի ստեղծման և գործունեության կարգը սահմանում է կառավարման խորհուրդը:

Հոդված 19. Բուհի գիտական խորհուրդը

1. Գիտական խորհուրդը բուհի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կառավարման մարմինն է:

2. Գիտական խորհուրդը ձևավորվում և գործում է 5 տարի ժամկետով, սույն օրենքին և բուհի կանոնադրությանը համապատասխան:

3. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, արհեստակցական կազմակերպության նախագահը և բուհի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև գիտամանկավարժական կազմի, ուսանողական համակազմի ներկայացուցիչներ և ընտրովի այլ անդամներ՝ բուհի կանոնադրությանը համապատասխան:

4. Գիտական խորհրդի անդամների թիվը սահմանվում է բուհի կանոնադրությամբ:

5. Բուհի ռեկտորն ի պաշտոնե հանդիսանում է բուհի գիտական խորհրդի նախագահը:

6. Բուհի գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը,

2) քննարկում է բուհի ուսումնական, գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունների, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկայի ու ծրագրերի,

գիտական կադրերի պատրաստման, միջազգային կրթական, գիտական համագործակցության հարցերի և ծրագրերի վերաբերյալ,

3) քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ռեկտորին նոր ստորաբաժանումներ ստեղծելու մասին, հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը,

4) քննարկում է կրթության և գիտության զարգացման հիմնահարցերը, լսում գիտական հաղորդումներ և ընդունում համապատասխան որոշումներ,

5) հաստատում է կրթական ծրագրերը՝ ըստ մասնագիտությունների,

6) քննարկում է ուսումնական և գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում է հաշվետվություններ և հաղորդումներ կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,

7) ընդունում է որոշում նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու մասին և ներկայացնում այն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանը,

8) ընդունում է կոչումներ (ներառյալ՝ պատվավոր) շնորհելու, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, հուշամեդալով պարգևատրելու մասին որոշումներ,

9) քննարկում և հաստատում է բուհական ինստիտուտների տնօրենների, դեկանների (դեպարտամենտների պետերի), ամբիոնների վարիչների ու դասախոսական կազմի ընտրության կանոնակարգերը,

10) իրականացնում է բուհական ինստիտուտների տնօրենների, դեկանների (դեպարտամենտների պետերի), ամբիոնների վարիչների, պրոֆեսորների և դոցենտների ընտրության հաստատումը՝ փակ գաղտնի քվեարկությամբ,

11) սահմանված կարգով շնորհում է պրոֆեսորի և դոցենտի կոչումներ,

12) բուհի աշխատողների ընտրման և գնահատման սահմանված սկզբունքների հիման վրա հաստատում է դասախոսական և գիտահետազոտական անձնակազմի անդամների որակավորման պահանջները, սահմանում է գիտամանկավարժական կազմի կատարողականի գնահատման և թափուր հաստիքների մրցույթի կազմակերպման ընթացակարգը,

13) քննարկում և հաստատում է ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ուսման վարձերի չափը,

14) քննարկում և հաստատում է բուհի կանոնադրությամբ նախատեսված ու բուհի կրթագիտական գործունեությունը կանոնակարգող ներքին կանոնակարգեր, կարգեր, ուղեցույցներ և այլն,

15) իրականացնում է բուհի կանոնադրությունից բխող ուսումնական, մեթոդական և հետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

7. Գիտական խորհուրդը կարող է ունենալ ոլորտային հանձնաժողովներ, որի ստեղծման և գործունեության կարգը սահմանում է գիտական խորհուրդը:

Հոդված 20. Բուհի ռեկտորը

1. Բուհի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ ռեկտորը:

2. Հանրային բուհի ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել այն քաղաքացին, ով ունի գիտական աստիճան, բուհում գիտամանկավարժական գործունեության փորձ և վերջին 15 տարվա ընթացքում առնվազն 10 տարվա հանրային կառավարման կամ բարձրագույն կրթության համակարգում առնվազն 5 տարվա վարչական աշխատանքի ստաժ:

3. Հանրային բուհի ռեկտորն ընտրվում է սույն օրենքով և բուհի կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով՝ բուհի կառավարման խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ նույն բուհում ընտրվել ռեկտորի պաշտոնում:

4. Կառավարման գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր կառավարման մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե լրացել է նրա 70 տարին:

5. Բուհի ռեկտորի հետ աշխատանքային պայմանագիր կնքվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ բուհի կանոնադրությամբ:

6. Ռեկտորի թափուր հաստիք առաջանալու դեպքում կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ: Ժամկետները և հայտարարության ձևը սահմանում է բուհի կառավարման խորհուրդը:

7. Ռեկտորի իրավունքներն են՝

1) տնօրինում է բուհի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները) և կնքում գործարքներ բուհի անունից,

2) ներկայացնում է բուհը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

3) բուհի անունից հանդես է գալիս առանց լիազորագրի և տալիս լիազորագրեր,

4) հաստատում է բուհի ներքին կարգապահական կանոնները,

5) ձևավորում է ռեկտորին կից խորհրդատվական մարմիններ, սահմանում դրանց կազմն ու լիազորությունները,

6) կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում բուհի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և բուհի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները,

7) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում բուհի աշխատողներին,

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

9) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսական և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

10) կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում բուհի հաստիքացուցակը և կառուցվածքը,

11) գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ուսման վարձերի չափը,

12) իրականացնում է սույն օրենքով և բուհի կանոնադրությամբ վերապահված այլ գործառույթներ:

8. Ռեկտորի պարտականություններն են՝

1) պատշաճ և ժամանակին կատարել կառավարման խորհրդի և գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները,

2) ապահովել բուհի բնականոն գործունեությունը,

3) ժամանակին կատարել լիազորված պետական մարմնի, հիմնադրի, կառավարման խորհրդի որոշումները,

4) գիտական խորհրդին ներկայացնել բուհի գործունեության մասին տարեկան զեկույց,

5) կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացնել բուհի գործունեության (ներառյալ՝ եկամուտների և ծախսերի) տարեկան հաշվետվությունը և ապահովել դրա հրապարակայնությունը,

6) կատարել սույն օրենքով, բուհի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ:

9. Ռեկտոր չի կարող ընտրվել այն անձը, ով՝

1) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ,

3) չի բավարարում Հայաստանի Հանրապետության օրենքներով և բուհի կանոնադրությամբ նախատեսված պահանջներին:

10. Բուհի գործունեության մասին ռեկտորի կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունը կառավարման խորհրդի կողմից չընդունվելու դեպքում խորհուրդը կարող է քննարկել ռեկտորի հետ աշխատանքային պայմանագրի լուծման հարցը:

11. Բուհի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որի ձևավորման կարգը և իրավասությունը սահմանվում են բուհի կանոնադրությամբ:

12. Բուհի պրոռեկտորները (մասնաճյուղի տնօրենի տեղակալները) նշանակվում են ռեկտորի (մասնաճյուղի տնօրենի) հրամանով:

Հոդված 21. Հայաստանի Հանրապետության կառավարության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը

1. Բուհի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներին վերահսկում են բուհի հիմնադիրը (հիմնադիրները), պետական կառավարման լիազորված մարմինը և օրենքով սահմանված կարգով լիազորված այլ մարմիններ:

2. Բարձրագույն կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունն է՝

1) հանրային բուհերի ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2) միջազգային դասակարգմանը համապատասխան մասնագիտությունների և դրանց դասիչների ու համապատասխան աստիճանների որակավորումների ցանկի հաստատումը՝ ըստ բարձրագույն կրթության մասնագիտությունների ոլորտների և ենթաոլորտների,

3) բուհերի և դրանց մասնագիտությունների ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման կարգի, ինչպես նաև հավատարմագրման չափանիշների հաստատումը,

4) իրականացվող կրթական ծրագրերի յուրաքանչյուր կրթական աստիճանի լիցենզավորման կարգերի հաստատումը,

5) Հայաստանի Հանրապետության հանրային և մասնավոր բուհեր ընդունելության (բակալավրի և առաջին ու երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսուցման**)** կարգի հաստատումը,

6) որակավորումների ազգային շրջանակի և դրա մակարդակների (աստիճանների) ընդհանրական բնութագրիչների հաստատումը,

7) պետական ֆինանսական միջոցների տրամադրման կարգի հաստատումը, ներառյալ՝ կրթաթոշակ տրամադրելու, կրթաթոշակ սահմանելու՝ տարբերակված ըստ կրթական աստիճանների և մասնագիտությունների, ուսանողական վարկ ստանալու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը,

8) ուսման վարձի առավելագույն չափի սահմանումը՝ ըստ բուհերի սեփականության ձևի, կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների:

9) հեռավար ձևով ուսուցում չթույլատրվող մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ցանկերի հաստատումը,

10) ինտեգրված ծրագրով ուսուցմամբ կարգի և մասնագիտությունների ցանկի հաստատումը,

11) Հայաստանի Հանրապետության հանրային և մասնավոր բուհեր նախաբակալավրի ուսուցմամբ ընդունելության և ուսումնառության կարգի հաստատումը:

Բարձրագույն կրթության և հետազոտական բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

3. Բարձրագույն կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունն է՝

1) ըստ մասնագիտությունների ուղղությունների ոլորտային (ենթաոլորտային) որակավորումների շրջանակի հաստատումը,

2) մասնագիտության կրթական ծրագրի չափորոշչի սահմանումը (օրինակելի ձևի),

3) բարձրագույն կրթության որակի վերահսկողության իրականացումը,

4) ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման ձևակերպման կարգի հաստատումը,

5) բուհերում սովորողների ակադեմիական շարժունության և տեղափոխության կարգի հաստատումը,

6) բարձրագույն կրթության երրորդ աստիճանում որակավորման շնորհման և ավարտական փաստաթղթի տրամադրման կարգի հաստատումը,

7) երկրորդ մասնագիտություն ստանալու կարգի հաստատումը,

8) ուսուցման գործընթացի կազմակերպման ապահովման նպատակով անհրաժեշտ մեթոդաբանության, ուղեցույցների, օրինակելի կարգերի, այդ թվում՝ էթիկայի կանոնակարգի, մշակումը և հաստատումը,

9) բուհի գործունեության կատարողական արդյունքային ցուցանիշների մշակումը և հաստատումը, ինչպես նաև վերջիններիս վրա հիմնված պայմանագրի օրինակելի ձևի հաստատումը,

10) բուհի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների մշակումը և հաստատումը,

11) բուհի հետ գործունեության կատարողական արդյունքային ցուցանիշների վրա հիմնված պայմանագրերի կնքումը,

12) բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ստեղծման, գործարկման և վարման կարգի հաստատումը,

13) որակավորումների պետական գրանցամատյանի ստեղծման, գործարկման և գրանցամատյանի վարման կարգի հաստատումը,

14) ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանների, հրահանգների, կարգադրությունների և ցուցումների կասեցումը կամ ուժը կորցրած ճանաչումը, եթե բուհի կառավարման խորհուրդը չի տվել համապատասխան լուծում:

Բարձրագույն կրթության և հետազոտական բնագավառում լիազորված մարմինն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորություններ:

ԳԼՈՒԽ 4
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 22. Բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը

1. Բուհերի ֆինանսական գործունեությունն իրականացվում է հրապարակայնության, միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման սկզբունքներով:

2. Բուհի ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը,

2) վճարովի ուսուցման ծառայություններից (նման ծառայություն մատուցելու իրավունք ունենալու դեպքում), ինչպես նաև մատուցված այլ կրթական, տնտեսական կամ հետազոտական ծառայությունների կամ ապրանքների իրացումից ստացված եկամուտները,

3) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

4) ֆիզիկական ու իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,

5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կամ այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները,

6) այլ պետությունների պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը,

7) օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցները:

Հոդված 23. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բուհերի ֆինանսավորման տեսակները

1. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բուհերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կարող են ֆինանսավորվել հետևյալ ձևերով՝

1) բազային ֆինանսավորում, որը հատկացվում է հանրային բուհերին ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման, ընթացիկ ծախսերի կատարման նպատակով և կախված չէ բուհին հատկացվող պետական կրթաթոշակների թվից: Բազային ֆինանսավորման բաղկացուցիչ մաս է կազմում բուհերի գործունեության կատարողական արդյունքային ցուցանիշները,

2) պետական կրթաթոշակի տրամադրում, որն ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում է այն ուսանողներին, որոնք բավարարում են կրթաթոշակի ստացման պահանջները,

3) մրցակցային ֆինանսավորում, որը տրամադրվում է բուհի զարգացմանն ուղղված նորարարական-նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար՝ մրցութային հիմունքներով:

2. Ուսման վարձի լրիվ փոխհատուցում պետական կրթաթոշակի ձևով տրամադրվում է մրցութային կարգով բուհի առաջին, երկրորդ և երրորդ աստիճաններով սահմանված կարգով առաջին կուրս ընդունվածներին:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բուհերի համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների, բաշխում է ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ պետական կրթաթոշակների քանակը:

4. Ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ պետական կրթաթոշակ տրամադրվում է հետևյալ խմբերին՝

1) առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

2) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամություն ունեցող երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

3) զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

4) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով, ինչպես նաև նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

5. Սույն հոդվածի չորրորդ մասով սահմանված ուսանողներին ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված պետական կրթաթոշակ տրամադրվում է տվյալ կրթական աստիճանում՝ առանց փոխատեղման սկզբունքի կիրառման:

6. Պետական կրթաթոշակ տրամադրվում է նաև որպես ֆինանսական աջակցություն՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին:

7. Պետության կողմից տրամադրվող պետական կրթաթոշակների կարող են հավակնել միայն ամբողջական բեռնվածությամբ սովորող ուսանողները: Ամբողջական բեռնվածության առնվազն 75 տոկոս համապատասխան գումարային կրեդիտներ չկուտակած ուսանողը՝ ուսումնառությունը մասնակի բեռնվածությամբ շարունակելու դեպքում, զրկվում է պետության կողմից պետական կրթաթոշակ ստանալու հնարավորությունից:

Պետական կրթաթոշակը տրամադրվում է ուսանողի տարեկան լրիվ ուսումնական բեռնվածության 100 տոկոս գումարային կրեդիտներին համապատասխան, որն ուսանողը կարող է լրացնել նաև վեց ուսումնական տարում:

8. Ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում պետական կրթաթոշակի ձևով տրվում է կարիքավոր ուսանողներին՝ սոցիալական անապահովության չափանիշների և առաջադիմության արդյունքների համակցմամբ:

9. Ուսանողական կրթաթոշակների տրամադրման կարգը և չափանիշները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Հոդված 24. Բուհերի հաշվապահական և ֆինանսական հաշվառումը, հաշվետվողականությունը և աուդիտը

1. Հայաստանի Հանրապետության բուհերն իրենց հաշվապահական և ֆինանսական հաշվառումը, աուդիտն իրականացնում են համաձայն իրենց կազմակերպաիրավական կարգավիճակի համար սահմանված օրենսդրության:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող բուհերը բարձրագույն կրթության ոլորտում լիազորված պետական կառավարման մարմին են ներկայացնում հաշվետու տարվա ընթացքում կատարված աշխատանքների և արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվետվություն:

3. Հաշվետվության կազմման և հանձնման կարգը մշակվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

4. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է հաջորդ ուսումնական տարվա համար, 4 ուսումնական տարի անընդմեջ, պետական կրթաթոշակ տրամադրել առնվազն 3 մասնագիտությունների կրթական ծրագրերով հավատարմագրում ունեցող մասնավոր բուհին:

5. Մասնավոր բուհին պետական կրթաթոշակի տրամադրման դեպքում և բուհի վերջին 4 տարվա հաշվետվողականության արդյունքների հիման վրա կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կարող է քննարկվել բուհին պետական կրթաթոշակի հետագա տրամադրման հնարավորությունը:

6. Պետական կրթաթոշակ ստացող բուհը պարտավոր է կրթության պետական կառավարման լիազորված մարմնին յուրաքանչյուր տարի ներկայացնել տեղեկատվություն՝ տրամադրված միջոցների ծախսման վերաբերյալ:

Հոդված 25. Բուհի նյութատնտեսական հիմքերը

1. Հայաստանի Հանրապետության հանրային բուհի հիմնադիրը (հիմնադիրները) կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով բուհին սեփականության կամ անժամկետ օգտագործման (անհատույց) իրավունքով տրամադրում է շենքեր, շինություններ, տրանսպորտ, հողամասեր, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք:

2.Տվյալ գույքը չի կարող լինել գրավի առարկա, ինչպես նաև չի կարող փոխանցվել կամ հանձնվել այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց որպես սեփականություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

3. Բուհը սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բուհին նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, բուհի գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

4. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ինստիտուցիոնալ հավատարմագրված բուհերին կարող են անհատույց կամ հատուցելի կարգով օգտագործման հանձնել ուսումնական տարածքներ և հողամասեր:

5. ՈՒսումնական նշանակության համար նախագծվող բուհերի շենքերը, շինությունները և այլ տարածքները պետք է նախագծվեն՝ հաշվի առնելով՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց պահանջմունքները: Առկա շենքերը, շինությունները և այլ տարածքները պետք է հարմարեցվեն վերոնշյալ անձանց համար:

6. Բուհը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իր կանոնադրության համապատասխան, իրավունք ունի՝

1) տնօրինել սեփական կամ պետության կողմից ստացված միջոցների հաշվին իր կողմից ստեղծած մտավոր սեփականությունը,

2) ստեղծել հատուկ նպատակային ֆոնդեր, որոնց կողմից ստեղծված եկամուտներն օգտագործել իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար,

3) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, որոնց տեսակները սահմանվում են բուհի կանոնադրությամբ,

4) ստեղծել սեփական բազա կամ պայմանագրային հիմունքներով օգտագործել նյութատեխնիկական բազաներ՝ կրթական, գիտական, նորարարական կամ տնտեսական գործունեություն ծավալելու նպատակով,

5) ստեղծել և զարգացնել սեփական սոցիալ-տնտեսական, սպորտա-առողջարարական, մարզամշակութային, բուժկանխարգելիչ և մշակութային ենթակառուցվածքային միավորներ,

6) իրականացնել կապիտալ շինարարություն, հիմնական միջոցների ընթացիկ և կապիտալ վերանորոգումներ,

7) մասնակցել տարբեր մարմինների հիմնադիր կապիտալի ձևավորմանը՝ ոչ նյութական ակտիվներով ներդրումներ կատարելու միջոցով,

8) ստեղծել նորարարական գործունեություն իրականացնող ընկերություններ,

9) սահմանված կարգով կատարել արտարժույթով վճարումներ:

7. Հանրային բուհերը հաշվետու տարվա գործունեության արդյունքներով շահույթ ձևավորելու դեպքում զուտ շահույթի առնվազն 5 տոկոսի չափով ձևավորում են պահուստային ֆոնդ ապագա ռիսկերի և անորոշությունների՝ ներկա արժեքի և ապագայի դեպքերի, անբարենպաստ պայմանագրերի և այլ չկանխատեսված ֆորս-մաժորային իրավիճակների համար:

8.Կառավարման խորհրդի որոշմամբ պահուստային ֆոնդի գումարները կարող են ներդրվել ցածր ռիսկայնություն ունեցող ներդրումային ծրագրերում, որոնցից ստացված եկամուտը հաստատությունը կարող է օգտագործել իր ռազմավարական զարգացման ծրագրերի իրականացման համար:

9. Հանրային բուհերն իրավունք ունեն իրենց ամրացված տարածքները հանձնել վարձակալության մինչև 5 տարի ժամկետով: Ամրացված տարածքները վարձակալության հանձնելու արդյունքում ստացված վճարները բուհի սեփականությունն են և ուղղվում են պահուստային ֆոնդի համալրմանը:

Հոդված 26. Բուհի կողմից սահմանվող վճարները և ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վարձի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող սովորողները

1. Բուհերը կարող են սահմանել կրթական ծառայություններ մատուցելու համար ըստ մասնագիտությունների ուսման վարձի չափը, որը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերի համար ըստ դրանց սեփականության ձևի, կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների սահմանված ուսման վարձի առավելագույն չափը:

2. Ըստ բուհի սեփականության ձևի, կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների՝ ուսման վարձի առավելագույն չափը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

3. Բուհերը կարող են նաև սահմանված կարգով գանձել ծառայության վճարներ ընդունելության և ուսումնական գործընթացների կազմակերպման հետ կապված:

Արգելվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատչելիության ապահովման համար հավելյալ վճարների գանձումը:

4. Բուհերի կողմից լրացուցիչ ծառայությունների մատուցման համար վճարների սահմանման անհրաժեշտությունը և չափը հաստատում է տվյալ բուհի կառավարման խորհուրդը՝ ռեկտորի ներկայացմամբ:

5. Հայաստանի Հանրապետության բուհեր Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի պահանջներին համապատասխան ընդունված օտարերկրացի սովորողների համար բուհի կողմից կարող է սահմանվել ուսման վարձի առավելագույն չափից բարձր ուսման վարձի չափ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

6. Արգելվում է բուհերի վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Արցախի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև ծագումով հայ այն օտարերկրյա քաղաքացիների համար, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ, կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ բուհում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար:

7. Բուհը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին, ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 5 տոկոսի չափով իրականացնում է ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

8.Պետության և բուհի կողմից տրվող ուսանողական կրթաթոշակներին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է լրիվ կամ մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

9.Վճարովի հիմունքներով սովորողներն ուսման վարձը կարող են մուծել ըստ կիսամյակների:

Բուհերն, ըստ անհրաժեշտության, կարող են սահմանել ուսման վարձի վճարման այլ մեխանիզմներ:

10. Բուհերը տվյալ տարվա ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը ներկայացնում են հաշվետվություն կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

11. Բուհի կողմից ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Գ Լ ՈՒ Խ 5

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Հոդված 27. Բուհի սովորողները, ուսանողների ներկայացուցչական մարմինները և միավորումները

1. Բուհի սովորողը բարձրագույն կրթության սուբյեկտ է, ով սահմանված կարգով ընդունվել (գրանցվել) է բուհ բակալավրի, մագիստրոսի, ասպիրանտական կրթությամբ կամ ինտեգրված ուսուցման ծրագրով, ինչպես նաև նախաբակալավրի ուսուցման, ուսումնառելու համար:

2. Բուհ ընդունված և ուսումնառող ուսանողները պայմանագրային իրավահարաբերությունների մեջ են մտնում տվյալ բուհի հետ: Ուսումնառության մասին պայմանագրով ամրագրվում են համապատասխան ուսուցման ձևով և կրթական աստիճանով ուսանողի ուսումնառությունն իրականացնելու ակադեմիական և ֆինանսական կարգն ու պայմանները, բուհի և ուսանողի իրավունքներն ու պարտականությունները:

3. Ուսանողի կարգավիճակի հետագա փոփոխությունն ամրագրվում է ռեկտորի հրամանով, որի մասին պայմանագրում կատարվում է համապատասխան լրացում: Ուսանողի ազատման (հեռացման) վերաբերյալ բուհի ռեկտորի (տնօրենի) հրամանը հիմք է բուհի և ուսանողի միջև կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծման համար: Պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4. Բուհի ուսանողները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բուհի տեսակը և ուսուցման ձևը, զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն կրթությունը:

5. Բուհի ուսանողն իրավունք ունի՝

1) բուհի գիտական խորհրդի սահմանած կարգով ընտրելու տվյալ մասնագիտության կրթական ծրագրով ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կրթական ծրագրով ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում է համապատասխան ուսումնական ստորաբաժանումը (ֆակուլտետը, ամբիոնը),

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով բարձրագույն կրթության մասնագիտության կրթական ծրագրի պահանջները,

3) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բուհում՝ այդ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով,

4) համաձայն բուհում սահմանված ընթացակարգի՝ անվճար օգտվելու բուհի գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու հետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և սիմպոզիումներին,

5) ազատ արտահայտելու իր մտքերը և կարծիքը բուհի համապատասխան կառավարման մարմիններում ու ուսանողության շահերը ներկայացնող այլ կառույցներում,

6) օգտվելու ուսանողական կրթաթոշակի տրամադրման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, ֆինանսական աջակցություն, ինչպես նաև ուսանողական վարկ,

8) ծանոթանալու բուհի կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի,

9) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

10) ամբողջական բեռնվածությամբ սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում,

11) հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում բուհի սահմանած կարգով ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ ուսումնառության համար նախատեսված ժամկետով,

12) փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների),

13) ուսման բարձր առաջադիմության և հետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և բուհի սահմանած կարգով,

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան և բուհի գիտական խորհրդի սահմանած կարգով անցնելու ուսումնական, մասնագիտական և հետազոտական պրակտիկա համապատասխան ուսումնական հաստատություններում, հիմնարկներում և կազմակերպություններում, Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում,

15) սահմանված կարգով շարունակելու իր ուսումնառությունը տվյալ կամ մեկ այլ բուհի կրթական ծրագրով, իր ուսումնառած կրթական ծրագրերից որևէ մեկի փակման դեպքում,

16) լիիրավ մասնակցելու բուհի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով և (կամ) բուհի կանոնադրությամբ,

17) մասնակցելու ուսանողների կողմից բուհի դասախոսական կազմի աշխատանքի որակի և առաջարկվող դասընթացների գնահատման հարցումներին՝ բուհի գիտական խորհրդի կողմից սահմանած կարգին համապատասխան,

18) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում:

6. Բուհի ուսանողը պարտավոր է՝

1) կատարել բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները,

2) տիրապետել տվյալ մասնագիտության կրթական ծրագրով սահմանված գիտելիքին, հմտություններին և կարողունակությանը,

3) պարտադիր հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները,

4) ակադեմիական պարտքեր ունենալու դեպքում հանձնել դրանք բուհի կողմից սահմանված ժամկետներում և կարգով,

5) խնամքով և հոգատարությամբ վերաբերվել բուհի գույքին,

6) ուսումնառության պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով վճարել ուսման վարձը (սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում կարող է հեռացվել բուհից),

7) պահպանել բուհի կողմից սահմանված էթիկայի կանոնները և ակադեմիական բարեվարքության վարքականոնները:

7. Բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում սովորողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով բուհից հեռացնելը:

8. Սովորողներին արգելվում է հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

9. Սովորողներն իրավունք ունեն բուհի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով բողոքարկելու բուհի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնելու բուհի ուսուցման և ենթակառուցվածքների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման վերաբերյալ:

10. Բուհի իրավասու մարմինների (անձանց) և բուհում ձևավորված վեճերի լուծման հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան ուսանողների բողոքին սահմանված կարգով ընթացք կամ լուծում չտալու դեպքում ուսանողներն իրավունք ունեն իրենց ուսանողական իրավունքների խախտման հետ կապված բուհի կայացրած որոշման կամ գործողության դեմ բողոքելու պետական կառավարման լիազորված մարմնին և (կամ) օրենքով սահմանված կարգով դիմելու դատարան:

11. Կրթության համապատասխան աստիճանի ամփոփիչ ատեստավորումները հանձնած և բուհի ներքին իրավական ակտերով ու ուսումնառության պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած անձինք սահմանված կարգով ազատվում են բուհից և դադարում են ունենալ սովորողի կարգավիճակ:

12. Կրթությունը ցանկացած ձևով ընդհատած (ազատում, հեռացում, դադարեցում) նախկին սովորողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները:

13. Բուհերում ուսանողական ինքնակառավարման մարմինները (ուսանողական խորհուրդներ, ուսանողական գիտական ընկերություններ) կազմում են տվյալ բուհի հանրային կառավարման անբաժանելի մասը և գործում են սույն օրենքի ու բուհի կանոնադրության, ինչպես նաև բուհի գիտական խորհրդի կողմից հաստատած ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության օրինակելի կանոնադրությունների հիման վրա:

14. Բուհի ուսանողական խորհուրդը՝

1) բուհում և դրանց համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներում գործում է որպես ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին, որը միավորում է բուհի ուսանողներին և իրականացնում նրանց ինքնակառավարման իրավունքը՝ ելնելով նրանց շահերից, կարիքներից, իրավունքներից և պարտականություններից,

2) իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

կամավորության, կոլեգիալության և հրապարակայնության,

ուսանողական ինքնակառավարման մարմնի ընտրության և հաշվետվողականության,

ուսանողական մարմինների աշխատանքներում սովորողների մասնակցության հավասարության,

քաղաքական կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների (բացառությամբ հոգևոր բուհերի) ազդեցությունից անկախության,

3) ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները բուհի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է կրթություն ստացողների շահերը՝ նպաստելով նրանց հասարակական, մտավոր, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը,

4) մասնակցում է ուսումնակրթական գործընթացների և ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը,

5) կարող է դառնալ նաև համապատասխան միջազգային կազմակերպության անդամ կամ նմանատիպ կազմակերպությունների հետ զարգացնել համագործակցություն:

15. Բուհի ուսանողական գիտական ընկերությունը՝

1) բուհում և դրանց համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներում գործում է որպես բուհի ուսանողներին միավորող ուսանողական մարմին, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը,

2) ուսանողական գիտական ընկերության խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են՝

գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարումը և իրականացումը,

ուսանողական գիտաժողովների, սեմինարների և այլ գիտակրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպումը,

գիտական խմբերում և գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկվածության ապահովումը,

ուսանողների գիտական աշխատանքների և այլ գիտակրթական նյութերի տպագրման աջակցումը,

3) մասնակցում է բուհի գիտակրթական գործընթացներին:

16. Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների գործունեությունը ֆինանսավորվում է բուհի արտաբյուջետային միջոցների հաշվին, ինչպես նաև՝ ֆինանսական միջոցները գոյանում են նվիրատվություններից, հանգանակություններից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից: Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների ֆինանսավորման չափը սահմանում է բուհի կառավարման խորհուրդը, բայց ոչ պակաս, քան ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 0.2 տոկոսի չափով:

17. Բուհի ուսանողական մարմինները պարտավոր են առնվազն տարին մեկ անգամ բուհի համապատասխան կառավարման մարմիններում ներկայացնել օգտագործված միջոցների և ծախսերի նախահաշվի կատարման վերաբերյալ հրապարակային հաշվետվություն՝ այն տեղադրելով նաև բուհի և (կամ) իրենց պաշտոնական կայքում:

Հոդված 28. Բուհերի աշխատողները և նրանց իրավունքներն ու պարտականությունները, կոչումները և աստիճանները

1. Սույն հոդվածի ընդհանուր դրույթներին համաձայն՝ բուհերի (մասնաճյուղերի) աշխատակազմի (այդ թվում՝ գիտամանկավարժական կազմի) ընտրության, նշանակման և վերանշանակման չափանիշներն ու պայմանները, իրավունքներն ու պարտականությունները, կոչումները և աստիճանները ու դրանց առնչվող դրույթներն ամրագրվում են բուհի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և համապատասխան ներքին այլ իրավական ակտերով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

2. Բուհում սահմանվում են՝ գիտամանկավարժական կազմ՝ դասախոսական (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս, իսկ ռազմաուսումնական հաստատությունում՝ ամբիոնի պետ, ցիկլի պետ, խմբի պետ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) կազմ և գիտական աշխատողներ, վարչական, ինժեներատեխնիկական, ուսումնաօժանդակ, արտադրական և այլ կազմի աշխատողներ:

3. Բուհն իր վարչական և կառավարման գործառույթները կատարելու, ինչպես նաև՝ ուսումնական, գիտահետազոտական և փորձագիտական զարգացումն ապահովելու, տնտեսական գործունեությունն իրականացնելու համար պետք է ունենա սեփական վարչական

կազմ, որի աշխատողների քանակը բուհի գործառույթներից և կարիքներից ելնելով որոշում է բուհի կառավարման խորհուրդը:

4. Բուհի կանոնադրությամբ ամրագրվում են նաև առանցքային վարչական պաշտոններ զբաղեցնող անձանց՝ ռեկտորի տեղակալների (պրոռեկտորների), դեկանների, ղեկավար վարչական աշխատակազմի և նմանատիպ այլ պաշտոնների, պարտականություններն ու իրավունքները:

5. Վարչական և կառավարման պարտականություններից զատ՝ աշխատակիցները կարող են իրականացնել նաև մանկավարժական, հետազոտական գործունեություն:

6. Նույն անձը չի կարող միաժամանակ զբաղեցնել երկու կամ ավելի վարչական և (կամ) կառավարման գործառույթներ իրականացնող պաշտոններ:

7. Ֆակուլտետի դեկանի (ուսումնական ստորաբաժանման ղեկավար, ռազմաուսումնական հաստատության ֆակուլտետի պետ) և դեկանի տեղակալի գործունեությունը համարվում է վարչական աշխատանք:

Ամբիոնի վարիչի (ռազմաուսումնական հաստատության ամբիոնի պետի, ցիկլի պետի, խմբի պետի) գործունեությունը համարվում է վարչական և գիտամանկավարժական:

8. Ֆակուլտետի ղեկավարումն իրականացվում է դեկանի կողմից, ով պետք է ունենա ֆակուլտետի ուղղվածությանը համապատասխան գիտական աստիճան կամ կոչում, և իրավունք ունի այդ պաշտոնը զբաղեցնելու 5 տարի ժամկետով՝ ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ:

Ամբիոնի ղեկավարումն իրականացվում է ամբիոնի վարիչի կողմից, ով իրավունք ունի այդ պաշտոնը զբաղեցնելու 5 տարի ժամկետով՝ ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ:

9. Ֆակուլտետի դեկանի կողմից տրված կարգադրությունները կարող են չեղարկվել բուհի ղեկավարի կողմից, եթե դրանք հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և բուհի կանոնադրությանը:

10. Բուհի ընտրովի պաշտոններն են՝ ռեկտոր, ռազմաուսումնական հաստատության պետի ուսումնական գծով տեղակալ, մասնաճյուղի (կրթահամալիրի) տնօրեն, ֆակուլտետի դեկան (ուսումնական ստորաբաժանման ղեկավար, ռազմաուսումնական հաստատության ֆակուլտետի պետ), ամբիոնի վարիչ (ռազմաուսումնական հաստատության ամբիոնի պետ, ցիկլի պետ, խմբի պետ), պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս:

Այդ պաշտոնները զբաղեցվում են բուհի կառավարման մարմիններում՝ բուհի կանոնադրությամբ սահմանված մրցութային կարգով:

11. Բուհում դասախոսական կազմի և գիտական աշխատողների բոլոր թափուր պաշտոններն զբաղեցվում են բուհի կանոնադրությանը և կանոնակարգերին համապատասխան:

12. Բուհում գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոնների տեղակալումը իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով:

Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրություն: Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական աշխատողի հետ կարող է կնքվել նոր աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով՝ առանց մրցութային ընտրության՝ պայմանագրային ժամկետում նրա գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա: Նշված պաշտոնների տեղակալման կարգը հաստատում է բուհի գիտական խորհուրդը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

70 տարին լրացած անձը բուհում դասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար անցկացվող մրցութային ընտրությանը չի մասնակցում: Գիտամանկավարժական գործունեության գնահատման արդյունքների հիման վրա այդ անձի

հետ բուհի ռեկտորը կարող է կնքել ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքային պայմանագիր մինչև 1 ուսումնական տարի ժամկետով՝ տարեկան երկարաձգման իրավունքով:

Բուհում վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում վարչական կամ գիտական ստորաբաժանման (ամբիոն) ղեկավարի պաշտոնում նշանակված (ընտրված) անձի լիազորությունները դադարեցվում են ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրա 70 տարին:

13. Բուհի դասախոսական և գիտական աշխատողներն իրավունք ունեն իրենց հայեցողությամբ ծրագրի շրջանակներում ուսումնական առարկան շարադրելու, գիտական հետազոտությունների թեմաներ ընտրելու և դրանք իրենց ընտրած մեթոդներով իրականացնելու:

14. Բուհի աշխատողն իրավունք ունի՝

1) բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու բուհի համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում,

2) մասնակցելու բուհի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,

3) օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և բուհի կամ կառուցվածքային այլ ստորաբաժանումների ծառայություններից՝ բուհի կանոնադրությանը և (կամ) կոլեկտիվ պայմանագրին համապատասխան,

4) ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ,

5) բողոքարկելու բուհի կամ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հրամանները և կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

6) ունենալու անհրաժեշտ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեություն իրականացնելու համար,

7) միավորվելու արհեստակցական և մասնագիտական այլ կազմակերպություններում:

15. Բուհի աշխատողները պարտավոր են՝

1) ապահովել կրթական և գիտական գործընթացների արդյունավետությունը,

2) պահպանել բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,

3) սովորողների մեջ ձևավորել մասնագիտական որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում, հայրենասիրություն,

4) սովորողների շրջանում զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ,

5) բուհի կողմից սահմանված կարգով և ժամկետներում անցնել մասնագիտական զարգացմանը և որակավորման բարձրացմանն ուղղված դասընթացներ,

6) պահպանել բուհի կողմից սահմանված էթիկայի կանոնները և ակադեմիական բարեվարքության վարքականոնները :

16. Բուհի աշխատակազմի յուրաքանչյուր անդամի աշխատանքի ընդունումն իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի**:** Աշխատանքային պայմանագիրը պետք է պարունակի նաև աշխատողի կատարողականի կանոնավոր գնահատման (ներառյալ գիտամանկավարժական կազմի ուղղակի դասալսումներ) և մասնագիտական զարգացմանը նպաստող դրույթներ:

17. Բուհն իր ունեցած և աշխատողների աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների սահմաններում ինքնուրույն է որոշում աշխատակազմի աշխատանքի վարձատրության ձևը և համակարգը, լրավճարների, հավելումների, պարգևատրումների և նյութական խրախուսման այլ միջոցների չափերը, ինչպես նաև բոլոր տարակարգերի աշխատողների աշխատավարձի դրույքաչափերը՝ առանց աշխատավարձի առավելագույն դրույքաչափեր սահմանելու:

18.Բուհի աշխատողին աշխատավարձի դրույքաչափը վճարվում է աշխատանքային պայմանագրով նախատեսված գործառական պարտականությունների և աշխատանքների կատարման համար:

19. Բուհի կրթական գործունեությունն ապահովելու նպատակով պետական բյուջեից հատկացվող և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին հանրային, օտարերկրյա պետությունների մասնակցությամբ ստեղծված բուհերն ինքնուրույն ձևավորում են աշխատողների աշխատանքի վարձատրության ֆոնդ:

Գ Լ ՈՒ Խ 6

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 29. Եզրափակիչ դրույթներ

1 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով և 18-րդ մասով նախատեսված ուսումնառության գործընթացների կազմակերպումը բուհերում ներդնել սույն օրենքի ընդունումից հետո երրորդ ուսումնական տարվանից սկսած:

3. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը և 5-րդ մասի 1-ին կետն ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով նախատեսված բուհերի ընդունելության գործընթացի կազմակերպման պահանջը տարածվում է ներառյալ 2019/2020 ուստարվանից սկսած, իսկ նույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված պահանջը՝ սույն օրենքի ընդունումից հետո երրորդ ուսումնական տարվանից սկսած:

5. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 7-րդ մասերի դրույթները բուհերում ներդնել սույն օրենքի ընդունումից հետո երրորդ ուսումնական տարվանից սկսած:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքը, բացառությամբ նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 4. 1-4. 3 մասերի, 14-րդ հոդվածի և 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի դրույթների, որոնք շարունակում են գործել մինչև սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դրույթների ուժի մեջ մտնելը:

Հոդված 30. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի դրույթներին չհամապատասխանող նորմատիվ իրավական ակտերը մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը համապատասխանեցվում են սույն օրենքի պահանջներին:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը բուհին տրված լիցենզիաները վավեր են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը: Բուհը գործողության մեջ գտնվող լիցենզիաները վերաձևակերպելու կամ նոր լիցենզիաներ ստանալու համար պետք է դիմի մինչև 2020 թվականի դեկտեմբերի 1-ը:

3. Մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ը ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող, սակայն մասնագիտության կրթական ծրագրով ծրագրային հավատարմագրում չունեցող բուհերի կողմից տրամադրված դիպլոմները և շնորհված որակավորումները ճանաչվում են պետության կողմից:

4. Մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 30.06.2011 թվականի N 978-Ն որոշման ընդունումը շնորհված հավատարմագրման վկայականները վավեր են մինչև 2020 թվականի օգոստոսի 30-ը:

5. Մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը բուհը պետք է դիմի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար:

6. Սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը և 28-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ պարբերությունը չի տարածվում այն անձանց վրա, որոնք ընտրվել (նշանակվել) են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը: Նրանք պաշտոնավարում են մինչև պայմանագրի ժամկետի լրանալը:

7. Սույն օրենքի 18-20-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում այն բուհերի վրա, որոնք հիմնադրվել են մինչև 1992թ. հունիսի 20-ը Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի և օտարերկրյա պետության լիազոր մարմնի կամ ուսումնական հաստատության միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Նշված բուհերի նկատմամբ կիրառվում են սույն մասով նշված պայմանագրերի նորմերը:

Նշված բուհերում օտար լեզուներով ուսուցման կազմակերպումը հնարավոր է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի թույլտվությամբ:

8. Սույն օրենքի 18-րդ և 20-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում մասնավոր բուհերի վրա:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «քաղաքացիների» բառը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 4.1 կետից հանել «և հետբուհական մասնագիտական» բառերը,

2. 17.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«17.2 որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ)՝ կրթության համակարգի բոլոր մակարդակներում շնորհվող որակավորումների բնութագրերի ամբողջություն, որը ընդգրկում է կրթության յուրաքանչյուր մակարդակում ուսումնառության արդյունքների և(կամ) մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքի, հմտությունների և կարողունակության (կոմպետենցիայի) ընդհանրական բնութագրիչները.»:

3. Ուժը կորցրած ճանաչել 10-13-րդ, 20-րդ և 22-25-րդ կետերը:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Պետությունը երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիները նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ իրենց ընտրությամբ:

1) Արգելվում է բուհերի վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած ծագումով հայ քաղաքացիների, ինչպես նաև ծագումով հայ այն օտարերկրյա քաղաքացիների համար, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ, կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ բուհում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար:

2) Նպատակային ուսուցմամբ ուսանող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն, կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3) Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաև հետևյալ պայմանը. ուսանողն ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում: Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ուսանողական կրթաթոշակի կրկնապատիկը, իսկ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ուսանողական կրթաթոշակի կրկնապատիկը: Փոխհատուցված գումարի 70 տոկոսը բարձրագույն ուսումնական հաստատությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 30 տոկոսը տնօրինում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում «կազմակերպական-իրավական ձևից» բառերից հետո լրացնել «բացառությամբ բարձրագույն կրթության» բառերը:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասի՝ 3-րդ կետից հանել «մասնագիտական» բառը և ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը:

2. 4-րդ մասում «հանրակրթական և » բառերից հետո լրացնել «միջին » բառը:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում «ձևերով» բառերից հետո լրացնել «բացառությամբ բարձրագույն կրթության ծրագրերի» բառերը:

Հոդված 7. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ 4-րդ կետից հանել «մասնագիտական» բառը և ուժը կորցրած ճանաչել 6-րդ կետը:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասից հանել « Դրանք ներկայացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմին: »բառերը,

2. 6-րդ մասի «մասնագիտական» բառը փոխարինել «նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական» բառերով:

Հոդված 9. օրենքի 15-րդ հոդվածի՝

1. 1-ին մասից հանել «պետական և ոչ պետական»:» բառերը,

2. 4-րդ մասի՝

1) 1-ին պարբերությունում «միջին »բառից հետո լրացնել «մասնագիտական» բառը, իսկ «բարձրագույն» բառից հետո հանել «մասնագիտական» բառը:

2) 2-րդ պարբերությունից հանել «մասնագիտական» բառը,

3. 6-րդ մասից հանել « պետական և հավատարմագրված ոչ պետական»բառերը:

Հոդված 10. Օրենքի 24-րդ հոդվածի՝

1. Վերնագրից հանել «մասնագիտական» բառը,

2. 1-ին մասի բարձրագույն բառից հետո հանել «մասնագիտական» բառը:

3. Ուժը կորցրած ճանաչել 2-5-րդ մասերը:

Հոդված 11. Օրենքի 25-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 28-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13.Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 4-րդ կետի «բարձրագույն» բառից հետո հանել «մասնագիտական» բառը,

2. 5-րդ կետում «պետական» բառից հետո լրացնել «հանրակրթական, նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական» բառերը:

Հոդված 14. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 8-րդ կետից հանել «և բարձրագույն մասնագիտական»բառերը,

2. 10-րդ կետում «կարգը» բառից հետո լրացնել «բացառությամբ բարձրագույն ուսումնական հաստատությունների» բառերը,

3. 11-րդ կետը հանել:

Հոդված 15. Օրենքի 40-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «օրենքին» բառից հետո լրացնել «համապատասխան ոլորտը կարգավորող օրենքներին» բառերը,

2. 6-րդ մասում «սահմանազատվում են»բառերից հետո լրացնել «համապատասխան ոլորտը կարգավորող օրենքներով և» բառերը:

Հոդված 16. Օրենքի 42-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «միջին» բառից հետո լրացնել «մասնագիտական» բառը,իսկ « բարձրագույն» բառից հետո հանել «մասնագիտական» բառը,

2. 4-ից 9-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Օրենքի 45-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն հոդվածը չի տարածվում բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների վրա» :

Հոդված 18. Օրենքի 46-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Սույն հոդվածը չի տարածվում բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների վրա»:

Հոդված 19. Օրենքի 47-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածը չի տարածվում բարձրագույն ուսումնական հաստատությունների վրա»:

Հոդված 20. Օրենքի 49-րդ հոդվածի՝

1. 6-րդ մասի «միջին» բառից հետո լրացնել «մասնագիտական» բառը,իսկ «բարձրագույն» բառից հետո հանել «մասնագիտական» բառը,

2. 8-րդ մասի «միջին» բառից հետո լրացնել «մասնագիտական» բառը, իսկ «բարձրագույն» բառից հետո հանել «մասնագիտական» բառը:

Հոդված 21. Օրենքում լրացնել նոր 56-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ,

«Հոդված 56. Բարձրագույն կրթության և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով այնքանով, որքանով չեն հակասում «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:»:

Հոդված 22. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 6-րդ մասում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» բառերը փոխարինել «Բարձրագույն կրթության մասին»բառերով:

Հոդված 2. Օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամների ոչ պակաս, քան քսանհինգ տոկոսը պետք է կազմեն պետական կազմակերպության սովորողները, իսկ բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամների ոչ պակաս, քան տաս տոկոսը, որոնց ընտրում են սովորողների ինքնակառավարման մարմինների ընդհանուր ժողովները:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածում լրացնել նոր 9-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Բարձրագույն ուսումնական հաստատության հոգաբարձուների խորհուրդը կազմավորվում է «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:»:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Բարձրագույն ուսումնական հաստատության հոգաբարձուների խորհուրդի լիազորությունների ժամկետը և ընտրության կարգը սահմանվում է « Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «և հետբուհական մասնագիտական» բառերը հանել:

Հոդված 2. Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի «ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսի» բառերը փոխարինել «ուսման վարձավճարներից գոյացող բյուջեի հինգ տոկոսի» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 8-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի 13-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի՝ <<9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ>> բաժնում՝

1. 7-րդ և 8-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<7.	Բակալավրի աստիճանով կրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
8.	Մագիստրոսի աստիճանով կրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ»

2. լրացնել նոր 9-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

<<9.	Ասպիրանտի աստիճանով կրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ».

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019թ. -ի դեկտեմբերի 30-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

<<ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի <<8. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ>> բաժնում՝

1. 8.5.3 կետում «բակալավրի կրթական ծրագրի իրականացման համար» բառերը փոխարինել «բակալավրի աստիճանով կրթական ծրագրի իրականացման համար» բառերով:
2. 8.5.5 կետում «մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման համար» բառերը փոխարինել «մագիստրոսի աստիճանով կրթական ծրագրի իրականացման համար» բառերով:

3. լրացնել նոր 8.5.6-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<8.5.6	Ասպիրանտի աստիճանով կրթական ծրագրի իրականացման համար՝ տարեկան	բազային տուրքի 300-ապատիկի չափով>>.

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավական ակտի հիմնավորումը

1. **Անհրաժեշտությունը (նպատակը)**

«Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է բարձրագույն կրթության զարգացմամբ և միջազգայնացմանն ուղղված միտումներով, ինչպես նաև՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ինտեգրմամբ: Այն ներառում և պայմանավորված է բարձրագույն կրթության բնագավառում կրթության կազմակերպման, իրավակազմակերպական, ֆինանսական հարաբերությունների հստակեցման, անկախ բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևից ու կարգավիճակից նրանց ակադեմիական, կառավարման, ֆինանսական հարաբերությունների ընդհանուր սկզբունքների, պայմանների և պահանջների հստակ սահմանման և ապահովման, ինչպես նաև՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում առկա հակասությունների կարգավորման անհրաժեշտությամբ: Մասնավորապես օրենսդրությամբ հստակեցնելու ու ամրագրելու անհրաժեշտություն ունեն բուհի առաքելությունից, խնդիրներից և գործառույթներից ու պետության կարիքներից բխող հիմնական պարտավորությունները (այդ թվում՝ բարձրագույն կրթության մակարդակում իրականացվող ուսուցման շրջանակին, որակին և արդյունավետությանը վերաբերող պարտականություններ) ու դրանց ֆինանսավորման պայմանները, բուհերի ինստիտուցիոնալ ինքնավարության և հաշվետվողականության պատշաճ հավասարակշռության (նաև հնարավոր ֆինանսական պայմանագրի կնքմամբ) ապահովման համար, որը ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով կարևոր պայմաններից է: Նշենք նաև, որ 2014 թվականից Եվրոպական Միությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացնում է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության զարգացում՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրվելու նպատակով» Թվինինգ ծրագիրը, որն իրականացվում է հինգ հիմնական ուղղություններով, որոնցից մեկն էլ ուղղված էր Բոլոնիայի գործողություններին ու նախաձեռնություններին համապատասխան ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության վերանայմանը:

2. **Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Բոլոնիայի գործողություններին և նպատակներին համապատասխանելիությանն միտված բարձրագույն կրթության ոլորտի ՀՀ օրենսդրության վերանայման նպատակով նախևառաջ առաջնահերթ է գործող օրենսդրության հնարավոր բացերի վերլուծությունը և խնդիրների վերհանումը: Մասնավորապես վերջինիս հետ կապված ուսումնասիրվել է մի շարք երկրների (Ուկրաինա, Էստոնիա, Լիտվա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Կոսովո և այլն) բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունները, հիմնականում նկատի ունենալով բարձրագույն կրթության բնագավառում ակադեմիական, կառավարման, ուսանողների ընդունելության, ինչպես նաև՝ համեմատական կարգով

հիշյալ երկրներում ֆինանսական հարաբերությունների կարգավորման ընդհանուր սկզբունքները և պայմանները: Իրականացվել է նաև համեմատություն Լիտվայի և Էստոնիայի բարձրագույն կրթության որակի ապահովման և որակավորումների շնորհման համակարգերի միջև: Ուսումնասիրվել են բուհերում սոցիալական տարբեր խմբերի ներգրավվածության բարձրացման նպատակով ԵՄ երկրներում վերջին տարիներին ներդրված մի շարք ճկուն մեխանիզմները (պետության կողմից տրամադրվող ուսանողական վարկեր, ուսման վարձավճարի վճարման հետաձգման):

Նշենք, որ գործող «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող «Կրթության մասին» ՀՀ օրենքով, սահմանված համապատասխան դրույթները չեն ապահովում կամ մասնակի են ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևից ու կարգավիճակից կախված բուհերի կառավարման և ինքնուրույնության հետագա զարգացման ապահովման նպատակով նրանց ինքնավարության, ակադեմիական ազատությունների, ֆինանսավորման և հաշվետվողականության անհրաժեշտ լիարժեք մեխանիզմները: Բուհերի կառավարման մոդելի բարեփոխման մասով օրենսդրությամբ անհրաժեշտ ամրագրման և կարգավորման դրույթներից են մասնավորապես՝ բուհերի կազմակերպաիրավական ձևերի (այդ թվում՝ ստեղծման, վերակազմակերպման և լուծարման), կառավարություն-նախարարություն-բուհ իրավասության սահմանների, կառավարման մարմինների ու դրանց գործունեության տարանջատման հստակեցումը:

Մասնավորապես բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման արդիականացումը կրթական բարեփոխումների կայացման կարևոր նախապայմաններից մեկն է: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եվրոպական երկրներում ինստիտուտների ու համալսարանների իրավակազմակերպական հիմնական արդիական ձևը հիմնադրամն է: Բուհի ինստիտուցիոնալ ինքնավարությունից բխում է ակադեմիական, կառավարման և ֆինանսատնտեսական գործունեության ազատականացում, որը որակյալ բարձրագույն կրթական միջավայր ապահովելու կարևոր նախապայման է: Բուհին այսօր անհրաժեշտ է ակադեմիական ազատականացում իր բնականոն գործունեությունը կազմակերպելու համար, իսկ բուհի այսօրվա կազմակերպաիրավական (որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն) կարգավիճակը հնարավորություն չի ընձեռնում ծավալել և ընդլայնել ձեռնարկատիրական առավել արդյունավետ մասշտաբներ: Ներկայիս դրությամբ ՀՀ բուհերում ուսանողների թվի նվազման պարագայում բուհի ֆինանսական սահմանափակ միջոցները հնարավորություն չեն տալիս զգալի նախնական ներդրում պահանջող, ինչպես նաև՝ որոշակի սահմանված կարգով ազատ ընտրել շահառուների և գործընկերների շրջանակը: Նշված և այլ սահմանափակումները վերացնելու նպատակով օրենքի նախագծով նախատեսվում է բուհերի կազմակերպաիրավական կարգավիճակների ընտրության հնարավորություն (մասնավորապես՝ նաև հիմնադրամի վերակազմավորման), նկատի ունենալով նաև հետևյալ հանգամանքները՝ բուհին լայն հնարավորություն ավելի ճկուն, ազատ, ռացիոնալ, արդյունավետ շահագրգիռ

օգտագործելու իր գույքը, բուհի կողմից ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը, ինչպես նաև՝ հիմնադրամի կարգավիճակի ընտրությունը բուհերի համար ավելի շատ բարձր ինքնուրույնություն և ինքնակառավարում է ենթադրում, ինչը համահունչ է բուհերի ակադեմիական ինքնավարության միջազգային և ներպետական պահանջներին ու սկզբունքներին:

Ֆինլանդիայի օրինակով դիտարկվել է 2013 թվականի օրենսդրական փոփոխություններից հետո այդ երկրում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման համակարգը՝ որպես հիմնական կատարողականի գործիքներ առանձնացնելով կրթության որակը, միջազգայնացումը և հետազոտական ուղղվածությունը:

Լիտվայի պարագայում բարձրագույն կրթական համակարգի ֆինանսավորման մոդելի առանձնահատկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ բուհական համակարգի ֆինանսավորման, ինչպես նաև ուսանողների աջակցման մեխանիզմների՝ այդ թվում նաև խորհրդատվական, գործում է պետության կողմից ստեղծված հիմնադրամ, որի գործունեությունը զգալի կերպով նպաստել է երկրում բուհերի ֆինանսավորման թափանցիկության, ինչպես նաև պետության կողմից ուսանողական նպաստների, ուսանողական վարկերի տրամադրմանը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանելու կամ դրանք լիովին վերանայելու կարիք ունեն մի շարք խնդիրներ, որոնք են՝

- բուհի առաքելությունից, խնդիրներից և գործառույթներից ու պետության կարիքներից բխող հիմնական պարտավորությունները (այդ թվում՝ բարձրագույն կրթության մակարդակում իրականացվող ուսուցման շրջանակին, որակին և արդյունավետությանը վերաբերող պարտականություններ),

- բուհերի ֆինանսավորման սկզբունքները և պայմանները, նրանց ինստիտուցիոնալ ինքնավարության և հաշվետվողականության պատշաճ հավասարակշռության ապահովման ընդունված պահանջների ու մեխանիզմների ներդրումը ու կիրարկումը, որը ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման նպատակով կարևոր պայմաններից է,

- միջազգային օրենսդրությանը համապատասխան բարձրագույն կրթության բնագավառին վերաբերող հիմնական և կիրառվող հասկացությունների (համալսարան (այդ թվում՝ հանրային և մասնավոր), կրթական ծրագիր, աստիճան, կրկնակի աստիճանակարգ, որակավորում և այլն) սահմանումը,

- բուհերի լիցենզավորման ու հավատարմագրման պայմանների ու պահանջների, ներքին և արտաքին որակի ապահովման (ինչպես նաև՝ վերահսկողության մեխանիզմների) ու ընդլայնման հստակ ամրագրումը,

- ընդունելության նոր մեխանիզմների ու պայմանների ներդրումը,

- բուհերի կառավարման մոդելի բարեփոխման նպատակով կազմակերպաիրա-

վական ձևերի (այդ թվում՝ ստեղծման, վերակազմակերպման և լուծարման), կառավարման մարմինների ու դրանց գործունեության տարանջատման հստակեցումը և այլն:

3. **Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Տվյալ ոլորտում Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականության նպատակներից է «Բարձրագույն կրթության մասին» օրենքի դրույթներից բխող բարձրագույն կրթության կազմակերպման, կազմակերպաիրավական ու ֆինանսական հարաբերությունների կանոնակարգումը և հստակեցումը, ինչպես նաև՝ միջազգային չափանիշներին համապատասխան բարձրագույն կրթության որակի ապահովման և կատարելագործման ժամանակակից ու համապարփակ իրավական հենքի ստեղծումը:

4. **Կարգավորման նպատակը և բնույթը**

Իրավական ակտի կարգավորման նպատակն է միջազգային պահանջներին համապատասխան՝

- խթանել նորարարությունը, բուհերի միջև մրցակցությունը և պատասխանատվությունը՝ համահունչ միջազգային (եվրոպական) չափանիշներին,

- ապահովել կրթական գործընթացի, այդ թվում՝ որակի ապահովման գործընթացների, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը, ինչպես նաև՝ մատչելի և հանրությանը հասանելի հաշվետվողականությունը,

- հստակ տարանջատել և սահմանել բարձրագույն կրթության բնագավառում ՀՀ կառավարության, լիազոր մարմնի և բուհերի պարտավորությունները և իրավասությունները, այդ թվում՝ բուհերի կառավարման մարմինների գործառույթները,

- ապահովել համապատասխանելիությունն Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին այնպես, որ բուհերի բոլոր ներքին շահառուների համար ստեղծվի էլ ավելի լայն շարժունության, ՀՀ որակավորումների միջազգային ճանաչման և ՀՀ ու Բոլոնիայի մասնակից երկրների բուհերի միջև համագործակցության լայն հնարավորությունները,

- սահմանել բարձրագույն կրթության բնագավառում ՀՀ կառավարության և լիազոր մարմնի լիազորությունները, այդ թվում՝ պետական միջոցների հաշվին բուհերի կողմից իրականացվող բարձրագույն կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բաշխման պայմանները և սկզբունքները, նպաստելով բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման համար հատկացված պետական բյուջեի և այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը,

- սահմանել բարձրագույն կրթության որակի նկատմամբ վերահսկողության անհրաժեշտ մեխանիզմները՝ բարձրագույն կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության և միջազգային չափանիշներին համապատասխան բարձրագույն կրթության ապահովման համար:

5. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտներն ու անձիք**

Օրենքի նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության

աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, իրավաբանական և ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական վարչությունների մասնագետներից ձևավորված փորձագիտական աշխատանքային խմբի կողմից՝ ԵՄ միջազգային փորձագետների հետ համատեղ աշխատանքների արդյունքում:

Օրենքի նախագծի քննարկման գործընթացում ներգրավվել են նաև ՀՀ պետական և ոչ պետական բուհերը, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը, ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովը, «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամը, ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի Լիցենզավորման գործակալությունը, ՀՀ պետական բուհերի ռեկտորների խորհուրդը, ուսանողական և հասարակական կազմակերպությունները, Համաշխարհային բանկի փորձագետները, տեղական փորձագետները:

Հասարակության իրազեկման նպատակով օրենքի նախագիծը լրացուցիչ անգամ տեղադրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կայքում http://edu.am/ «Հանրային քննարկումներ» բաժնում, ինչպես նաև http://www.e-draft.am/ կայքում:

6. **Ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում ամբողջական և հստակ կսահմանվեն՝

- բարձրագույն կրթության բնագավառում անհրաժեշտ քաղաքականության իրականացման հիմքերը և պայմանները,

- կրթական, հետազոտական, տեխնոլոգիական եւ նորարարական գործունեություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններին պետական աջակցության տրամադրման սկզբունքները և մեխանիզմները, այդ թվում՝ ուսման վարձերի և ուսանողական նպաստների հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների արտոնության տրամադրման,

- բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմները և պահանջները, որը կարտացոլի հաստատության պատասխանատվությունը և կատարողականությունը պետության ու հասարակության առջև,

- բարձրագույն կրթության բնագավառում միջազգային պահանջներին համապատասխան և անհրաժեշտ պետական վերահսկողության իրականացման հիմքերը, սկզբունքները և մեխանիզմները:

Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը համահունչ կլինի բարձրագույն կրթության մասին միջազգային օրենսդրությանը և կնպաստի բարձրագույն կրթության համակարգի ու հաստատությունների միջազգայնորեն մրցունակությանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

«Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման և փոփոխության անհրաժեշտություն առաջանում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման առնչությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման բյուջեների վրա ազդեցության մասին

ՀԱՇՎԱՐԿ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Մեկ ուսանողի հաշվով միջին զեղչված գումարի չափը	113.37	հազ. դրամ	(1346700.63/11879)
Ուսանողական համակազմի տաս տոկոս	7583	մարդ	(75831*10%)
Տաս տոկոսը գերազանցող՝ զեղչերից օգտվող ուսանողների թիվը	4296	մարդ	(11879-7583)
Մեկ ուսանողի հաշվով եկամտային հարկը	26.4	հազ. դրամ	(113.37*23%)
Եկամտային հարկի չափը	112014	հազ. դրամ	(2474*19.2)

Նվազեցվող ծախսը	487016.7	հազ. դրամ	(113.37*4296)
Շահութահարկը	97403.3	հազ. դրամ	(487016.7*20%)

Ընդամենը հարկվող գումար - 210878.2 հազ. դրամ

Փաստացի, եթե ուժի մեջ մտնի «Բարձրագույն կրթության մասին» օրենքի նախագծի շրջանակում եկամտային հարկի մասով ՀՀ հարկային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունը, ապա ՀՀ պետական բյուջե մուտքերը կնվազեն շուրջ 209 մլն դրամով

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	2017 թվական		Հաջորդող 3 տարիները, հազ. դրամ		
			2018 թվական	2019 թվական	2020թվական
	Ըստ 2017 թվականի պետական բյուջեի	Փոփոխությունը 2017 թվականի պետական բյուջեի համեմատ	Փոփոխությունն 2017 թվականի համեմատ	Փոփոխությունն 2017 թվականի համեմատ	Փոփոխու-թյունն 2017 թվականի համեմատ
1	2	3	4	5	6
1.Եկամուտներ			-209000.0	-209000.0	-209000.0
1.1 պետական բյուջեի եկամուտներ	*		-209000.0	-209000.0	-209000.0
1.2 ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր	0	0	0	0	0
2.1 պետական բյուջեի ծախսեր	0	0	0	0	0
2.2 ՏԻՄ բյուջեի ծախսեր	0	0	0	0	0
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1 պետական բյուջե					
3.2 ՏԻՄ բյուջե					
4. եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում					
4.1 Եկամուտների գնահատում					
4.2 Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ					

Հարկ է նշել, որ «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 4.1 կետն ուժի մեջ է մտել 2014 թվականի սեպտեմբերի 1-ից, ելնելով ուսանողների սոցիալական վիճակից /սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող ուսանողների թիվը տարեցտարի ավելանում է/ և այդ փոփոխությունն առաջացրել է հարկային լրացուցիչ բեռ պետական ուսումնական հաստատությունների համար, որով դժվարացել է վերջիններիս զարգացման ծրագրերի իրականացումը:

Հաշվարկն իրականացվել է ուսանողական համակազմի ներկայիս տվյալների հիման վրա, մինչև 2018-2019 թվականը սպասվում է համակազմի թվի անկում, ուստի կանխատեսումը հիմնված է առավելագույն հավանականության վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»,

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հարկային օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, 26.12.2017թ. N 1/06.2/14912-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
ՀՀ Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն, 28.12.2017թ. N 01/4090-17	Առաջարկություններ և դիտողություններ չկան		
ՀՀ ԿԱ ոստիկանություն, 27.12.2017թ. N 01.6/6578-17	Առաջարկվում է **«Բարձրագույն կրթության մասին»** ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասի «և նորմատիվ իրավական ակտերով» բառերը փոխարինել «, իսկ կառուցվածքի, կառավարման մարմինների ձևավորման կարգի և լիազորությունների մասով նաև	Ընդունելի չէ	ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացության համաձայն՝ «և նորմատիվ իրավական ակտերով» բառերն

	ուսումնական հաստատությունների կանոնադրություններով» բառերով		անհրաժեշտ է ընդհանրապես հանել՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջները
ՀՀ առողջապահության նախարարություն, 27.12.2017թ. N ԼՍ/16050-17	Առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության եզրակացություն **«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի**. «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումը այն խմբագրությամբ, որում ներառված են առողջապահության ոլորտի մասնագետների կրթական գործունեության կազմակերպման վերաբերող դրույթներ, մասնավորապես, կլինիկական ռեզիդնտուրայի և շարունակական մասնագիտական զարգացման վերաբերյալ, որոշակի հստակեցումների կբերի ներկայումս առողջապահության բնագավառի մասնագետների կրթական համակարգում և կհամապատասխանեցնի վերջիններս միջազգային չափանիշներին: Միևնույն ժամանակ կարևորում ենք բժշկական կադրերի պատրաստման բնագավառում առողջապահության բնագավառի լիազոր մարմնի անմիջական ներգրավվածությունը՝ նկատի ունենլով որ որակյալ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար անհրաժեշտ են որակյալ կադրերի առկայությունը, որը նաև հանդիսանում է բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզիայի տրամադրման անհրաժեշտ պահանջ և պայման: **«Բարձրագույն կրթության մասին»** ՀՀ օրենքի նախագծում		

	(այսուհետ՝ նախագիծ) ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.		
	1. Նախագծի հոդված 3-ի 1-ին ենթակետում «բարձրագույն կրթություն» սահմանման մեջ «բուհերում» բառը փոխարինել կրթական հաստատություն-ներում, նկատի ունենալով որ կլինիկական ռեզիդենտուրայի ծրագրերը իրականացվելու են բժշկական կրթական հաստա-տությունների կողմից: Ավելին, բժշկական շարունակական մասնագիտական զարգացման ծրագրեր, այսինքն հետբու-հական լրացուցիչ կրթական ծրագրեր կարող են իրականացվել կլինիկական կրթական բազա ունեցող հաստատությունների, մասնա-գիտական ասոցիացիաների կողմից:	Ընդունելի է մասնակի	Նշված կետում կատարվել է լրացում նաև «և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ ում» բառերով, նկատի ունենալով, որ ռեզիդեն-տուրան մտնում է բարձրագույն կրթության մեջ որպես 2-րդ աստիճանի շարունակականություն:
	2. հոդված 3-ի 2-րդ ենթակետով սահմանված է բուհական բարձրագույն ուսում-նական հաստատություն հաս-կացությունը, որպես. «օրենքով սահմանված կարգով իրավա-բանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն, որն ունի պետության կողմից սահմանված կարգով բարձ-րագույն կրթական (ըստ անհրաժեշտության՝ նաև կրթության այլ մակարդակ-ներում), ինչպես նաև հետազոտական ծրագրեր իրականացնելու իրավասություն ունեցող հաստատություն, նույն հոդվածի 38-րդ ենթակետով սահմանված է. «բուհական ինստիտուտ՝ բուհի կառուցված-քային միավոր, որն իրականացնում է կրթություն որոշակի մասնագիտության ոլորտում», իսկ նախագծի հոդված 7-ի 2-րդ մասով սահմանված է. «2. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության	Ընդունելի է մասնակի	Նախագծի Հոդված 7-ի 2-րդ կետը խմբագրվել է և տեսակները չի նշվել, այլ թողնվել է ՀՀ կառավարության կողմից ըստ տեսակների ու անվանումների ընդհանուր սահմանելու բուհերի դասակարգման չափանիշները և պահանջները: Ինչ վերաբերում է «բուհական ինստիտուտ» սահմանմանը, ապա այն ուղղակի համարվում է բուհի կառուցվածքային ստորաբաժանում, այլ ոչ որպես բուհի տեսակ:

	համակարգում կարող են գործել բուհերի հետևյալ տեսակները՝ 1) համալսարան, 2) ինստիտուտ, 3) ակադեմիա, 4) կոնսերվատորիա և այլն: Կարծում ենք որ նշված եզրույթները հստակեցման կարիք ունեն:		
	3. Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ նոր հասկացությամբ. «Բժշկական մասնագիտացում՝ առողջապահական համապատաս-խան մասնագիտությունների գծով կլինիկական ռեզիդենտուրայի կամ հիվանդանոցային ռեզիդենտուրայի միջոցով մասնագիտանալու, բարձր որակավորում և ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու իրավունք ստանալու նպատակով մասնագիտական կարողությունների և հմտություն-ների ձեռք բերման գործընթաց»:	Ընդունելի չէ	Ռեզիդենտուրան որպես այդպիսին գործընթաց չէ, այլ փաստացի համապատասխան ոլորտում մասնագիտական ուղղվածությամբ իրականացվող «ուսուցման ծրագիր»: Բացի այդ մասնագիտա-ցումները, այդ թվում՝ բժշկական, կարող են իրականացվել, եթե չի հանգեցնում նոր որակավորման:
	Առողջապահության բնագավառում մասնագիտացում պահանջող մասնագիտությունների ցանկը, դրանց որակավորման գործընթացին ներկայացվող պահանջները, մասնագիտացման տևողությունը և ծրագրերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարու-թյունը՝ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացմամբ:»:	Ընդունելի է մասնակի	Կատարվել է որոշակի խմբագրում /3-րդ հոդված մաս 1 կետ 10 և 9-րդ հոդված մաս 8/:
	4. Նախագծի 3-րդ հոդվածի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «կլինիկական ռեզիդենտուրա՝ բարձրագույն մասնագիտության կրթության երկրորդ աստիճանի հենքի վրա ինքնուրույն	Ընդունելի չէ	Միաժամանակ անհասկանալի է, թե ինչ է «բարձրագույն մասնագիտության կրթության» եզրույթը, բացի այդ՝ ռեզիդենտու-րան որպես այդպիսին գործընթաց չէ, այլ փաստացի համապատաս-խան ոլորտում մասնագի-տական ուղղվածությամբ իականացվող «ուսուցման ծրագիր»: Գտնում ենք ոչ նպա-

	բժշկական մասնագիտական գործունեության իրավունք ունեցող բժշկի հսկողության տակ ՀՀ կառավարության կողմից սահմանված բժշկական մասնագիտացման կամ նեղ մասնագիտացման գործընթաց, որն իրականացվում է բժշկական կրթական հաստատություններում, որի ավարտը հավաստվում է ավարտական փաստաթղթով:»: 5. Նախագծի 3-րդ հոդվածը լրացնել ևս մեկ սահմանմամբ հետևյալ բովանդակությամբ. «հիվանդանոցային ռեզիդենտուրա՝ բարձրագույն մասնագիտության կրթության երկրորդ աստիճանի հենքի վրա ինքնուրույն բժշկական մասնագիտական գործունեության իրավունք ունեցող բժշկի հսկողության տակ ՀՀ կառավարության կողմից սահմանված բժշկական մասնագիտացման կամ նեղ մասնագիտացման գործընթաց, որն իրականացվում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, որի ավարտը հավաստվում է ավարտական փաստաթղթով:»: 6. Նախագծում առաջարկում ենք ներառել դրույթ հետևյալ խմբագրությամբ. «Հիվանդանոցային ռեզիդենտուրայում բժշկական մասնագիտացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»: 7. Նախագծում առաջարկում ենք ներառել դրույթ, համաձայն որի բժշկական բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում է	Ընդունելի չէ Ընդունելի չէ	տակահարմար նույնաբովանդակ հասկացությունների սահմանումը սույն օրենքում՝ առավել ևս, որ ռեզիդենտուրայում ուսումնառող անձի ուսումնական գործընթացը կազմակերպվում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում: Բացի այդ, նախագծում կատարվել է փոփոխություն և սահմանվել է «կլինիկական ռեզիդենտ» հասկացությունը: Պայմանավորված է նախորդ առաջարկին արված հիմնավորմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ կառավա-րության 23.10.2014թ. հմ. 1191-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտու-թյունների և որակավո-րումների» ցանկի արդեն իսկ իրականացվել է բժշկական մասնագիտու-թյունների դասակար-գումը՝ համաձայն որի, վերջիններս ընդգրկված

	առողջապահական, այդ թվում՝ բժշկական, ստոմատոլոգիական և դեղագիտական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի միջոցով:»:		են «Առողջապահություն և սոցիալական աշխատանք» բնագավառի «Առողջապահություն» ոլորտում, որն իր հերթին բաժանված է 3 ենթաոլորտների «Ստոմատոլոգիա» /որում ընդգրկված է ստոմատո-լոգիա մասնագիտու-թյունը/, «Բժշկություն» /որում ընդգրկված է բուժական գործ և բուժական գործ զինված ուժերում մասնագիտու-թյունները/ և «Ֆարմացիա» /որում ընդգրկված է ֆարմացիա մասնագիտու-թյունը/: Նշենք նաև, որ վերոնշյալ դասակարգման համար հիմք է հանդիսա-ցել UNESCO-ի կողմից հաստատված Կրթության միջազգային ստանդարտ-ների դասակարգումը /ISCED/:
	8. Նախագծում առաջարկում ենք նաև լրացնել հետևյալ դրույթները. «Կլինիկական ռեզիդենտուրա ավարտած բժիշկ-մասնագետը իրավունք ունի վերամասնագիտանալ (մասնագիտության փոփոխություն) համապատասխան ռեզիդենտուրայում, որի ընթացքում բացառվում է մասնագիտացման փուլում (ռեզիդենտուրա) անցած դասընթացների կրկնությունը: Բժիշկ-մասնագետը իրավունք ունի նեղ մասնագիտացում անցնել նաև լրացուցիչ կրթական ծրագրերով՝ աշխատանքային տեղում մասնագի-տական կատարելագործման ձևով՝ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով, ՀՀ կառավարության կողմից	Ընդունելի չէ	Սույն օրենքի կարգավորման առարկա չէ, քանի որ մասնագիտու-թյան փոփոխության (վերամասնագիտացմա-ն), ուսումնառության վերջնարդյունքների, դասընթացների ճանաչ-ման գործընթացների կազմակերպումը կարգավորվում է ենթաօրենսդրական իրավական ակտերով: Ինչ վերաբերում է լրացուցիչ կրթական ծրագրերով աշխատանքային տեղում մասնագիտական

	հաստատ-ված նեղ մասնագիտացումների ցանկին և նեղ մասնագիտացման տևողությանը համապատասխան, որի ավարտից հետո շնորհվում է համապատասխան վկայական»:		կատարելագործմանը, ապա այն ևս կանոնակարգվում է համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերով:
	9. Նախագծի 28-րդ հոդվածի 15-րդ կետի 3-րդ ենթակետում «վարվելակերպ,» բառից հետո ավելացնել «առողջ ապրելակերպ,» բառերը:	Ընդունելի չէ	Չի համապատասխանում նշված կետի տրամաբանությանը:
	10. Նախագծում առաջարկում ենք լրացնել դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Բուժաշատողների շարունակական մասնագիտական զարգացումն իրականացվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի համաձայն:»:	Ընդունելի չէ	Սույն օրենքը կարգավորում է սովորողների և գիտամանկավարժական կադրերի հետ կապված հարաբերությունները, մասնագիտական կատարելագործման և այլ հարցեր: Ինչ վերաբերում է բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացմանը, ապա այն ենթակա է կարգավորման համապատասխան ոլորտի օրենսդրությամբ:
	11. Միևնույն ժամանակ առաջարկում ենք ներկայացված օրենքների նախագծերի փաթեթում ներառել կից ներկայացվող «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև մշակել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում նախագծից բխող համապատասխան փոփոխությունների նախագիծ:	Ընդունելի չէ	Ելնելով վերոհիշյալ առա-ջարկների մասով տրված հիմնավորումներից՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկ-ման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ներառումը գտնում ենք ոչ նպատակահարմար: Ինչ վերաբերում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքին, ապա հարկ ենք համարում նշել, որ այդ

			օրենքի վերանայումը և նոր օրենքի նախագծի ներկայացումը նախատես-վում է սույն օրենքի ընդունումից հետո:
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե 28.12.2017թ. N 01/11-1/55446-17	1. **«Բարձրագույն կրթության մասին»** ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 4-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներից է հետազոտական, տեխնոլոգիական և նորա-րարական գործունեություն իրականացնող բուհերին պե-տական աջակցության ցուցա-բերումը, ինչպես նաև հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մասով արտոնու-թյունների տրամադրումը, այդ թվում՝ ուսման վարձի և կրթաթոշակների մասով: Վերոնշյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ հաշվի առնելով այն, որ հարկային արտոնությունների տրամա-դրումը չի բխում երկարա-ժամկետ հատվածում իրակա-նացվող հարկային քաղա-քականության ուղղություններից՝ հետազոտական, տեխնոլո-գիական և նորարարական գործունեություն իրականացնող բուհերին հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մասով արտոնությունների տրա-մադրումը (որի արդյունքում ըստ Նախագծին կից ներկայացված հաշվարկ հիմնավորման՝ ՀՀ պետական բյուջե մուտքերը տարեկան կտրվածքով եկամտային հարկի մասով կնվազեն շուրջ 209 մլն դրամով) համարում ենք ոչ նպատակահարմար և առաջարկում ենք Նախագիծ 4-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետից հանել, «ինչպես նաև	Ընդունելի չէ	Նախատեսվող դրույթը և համապատասխան օրենքում առաջարկվող փոփոխությունը բխում է բուհերի կողմից բարձրա-գույն կրթության բնագա-վառում սովորողների շրջանում իրականացվող սոցիալական քաղաքակա-նությունից, այդ թվում՝ ուսման վարձերի զեղչերի կիրառմամբ (շուրջ 80-85%-ը սովորում է վճարովի համակարգում): Նշենք, որ ՀՀ կրթության և գիտության նախարա-րության կողմից առկա է վերջին երեք տարիների վերլուծություն (բուհերի տրամադրված տվյալների հիմքով), ըստ որի բուհերի վրա լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն է առաջացնում: Միաժամանակ նշենք նաև, որ բուհերի կողմից ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման %-ները գերազանցվում են հիմնականում հետևյալ կարգավիճակ ունեցող սովորողների ուսման վարձի զեղչման դեպքում՝ 1/ մարտական հերթապա-հություն

	հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մասով արտոնությունների տրամադրումը» բառերը: Այս կապակցությամբ ընդունելի չէ նաև «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունը: 2. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ներառում է լիցենզավորված բուհերը և լրացուցիչ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունները, իսկ 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բարձրագույն կրթությունը իրականացվում է իրար հաջորդող երեք աստիճաններում՝ հիմնական աստիճաններով աստիճանա-շնորհող և աստիճան չշնորհող լրացուցիչ կրթական ծրագրերով: Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ անկախ գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական		իրականացնող զորամասերում մարտա-կան հերթապահության մեջ ընդգրկված պարտա-դիր ժամկետային զինվո-րական ծառայություն անցած, 2/ապրիլյան մարտական գործողությունների մասնակից, 3/ 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող), 4/սոցիալապես անապահով (ընտանիք-ների անապահովության գնահատման համակար-գում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների), 5/ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամար-տիկ ծնող ունեցող և այլն: Օրենքի նշված կետից հանվել է «և լրացուցիչ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններ ը» բառերը: Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ներկայիս գործող օրենսդրությամբ ևս «լրացուցիչ կրթությունը» որպես այդպիսին լիցենզավորման ենթակա տեսակ չէ, այլ բարձրագույն

	ձևերից, բարձրագույն կրթական ծրագրեր (ըստ կրթական աստիճանների և ուսուցման ձևերի) իրականացնող իրավաբանական անձինք ենթակա են լիցենզավորման և արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բարձրագույն կրթության մասով լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են համարվում հիմնական կրթական ծրագրերը՝ ըստ կրթական աստիճանների: Վերոնշյալի կապակցությամբ, հայտնում ենք, որ եթե բարձրագույն կրթությունն իրականացվում է իրար հաջորդող երեք աստիճաններում՝ հիմնական աստիճաններով աստիճանաշնորհող և աստիճան չշնորհող լրացուցիչ կրթական ծրագրերով, ապա պարզ չէ, թե արդյոք լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումը ենթակա է լիցենզավորման: Եթե այդպես է, ապա առաջարկում ենք «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով այդ գործունեության տեսակը սահմանել որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, իսկ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել պետական տուրքի համապատասխան դրույքաչափ: 3. Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ բարձրագույն կրթությունը իրականացվում է իրար հաջորդող երեք աստիճաններում՝ հիմնական	Ընդունելի է մասնակի	կրթության մասով լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են համարվում հիմնական կրթական ծրագրերը՝ ըստ կրթական աստիճանների:

	աստիճաններով աստիճանաշնորհող և աստիճան չշնորհող լրացուցիչ կրթական ծրագրերով, իսկ նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ աստիճանաշնորհող կրթական ծրագրերը կարող են լինել նաև ինտեգրված ծրագրով ուսուցմամբ՝ ընդգրկելով ուսումնառության առաջին և երկրորդ կամ երկրորդ և երրորդ աստիճանները: Հաշվի առնելով, որ ուսումնառության առաջին և երկրորդ կամ երկրորդ և երրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով ուսումնառած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձին շնորհվում են համապատասխանաբար՝ մագիստրոսի կամ գիտական աստիճաններ, առաջարկում ենք Նախագծում ամրագրել դրույթ, որի համաձայն ինտեգրված ծրագրով կրթական ծրագրեր իրականացնող իրավաբանական անձինք պետք է լիցենզավորված լինեն նրանց կողմից իրականացվող կրթական ծրագրերի յուրաքանչյուր աստիճանի համար: 4. Նախագծի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ լիցենզավորված բուհը պարտավոր է դիմել լիցենզավորման նոր գործընթացի՝ նույն օրենքով սահմանված լիցենզիայի ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 1 տարի առաջ, իսկ նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ բուհը լիցենզիա ստանալուց հետո ցանկացած պահի, բայց ոչ ուշ, քան լիցենզիայի ժամկետի ավարտից 1 տարի առաջ, կարող է դիմել կրթության պետական կառավարման լիազորված մարմին		Նախագծի Հոդված 12-ի 1-ին մասում կատարվել է համապատասխան լրացում

	լիցենզիայում փոփոխություն կատարելու համար: Վերոհիշյալ դրույթներից անհասկանալի է, թե նշված ժամկետները լիցենզիաների որ ժամկետներին են վերաբերում, քանի որ Նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը բուհին տրված լիցենզիան վավեր է (լիցենզիաները պահպանում են իրենց ուժը) մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը: Այս առումով, առաջարկում ենք հստակեցնել Նախագծի նշված մասերում նախատեսվող ժամկետները՝ անհրաժեշտության դեպքում անցումային դրույթներում նախատեսելով գործողության մեջ գտնվող լիցենզիաները վերաձևակերպելու կամ նոր լիցենզիաներ ստանալու համար ժամկետներ: 5. Նախագծի 14-րդ հոդվածի համաձայն՝ անկախ բուհի գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից, նախատեսվում է ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման իրականացում՝ ըստ բուհերի և դրանց մասնագիտությունների կրթական ծրագրերի կամ կրթական ծրագրերի խմբերի: Միաժամանակ, Նախագծի 29-րդ հոդվածի 4-րդ մասում նշվում է, որ մինչև «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N372	Ընդունելի է	Նախագծի անցումային դրույթների 2-րդ մասում կատարվել է համապատասխան լրացում

	որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 30.06.2011 թվականի N978-Ն որոշման ընդունումը շնորհված հավատարմագրման վկայականները վավեր են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 36-38-րդ կետերով պետական տուրքի դրույքաչափեր են սահմանված միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման անցկացման կամ հավատարմագրման վկայա-կան տալու, այդ հավատարմագր-ման վկայականում փոփոխություն-ներ և (կամ) լրացումներ կատարելու և կորցրած վկայականի կրկնօրինակ տալու համար: Հաշվի առնելով վերոնշյալը, հայտնում ենք, որ պարզ չէ, թե արդյոք Նախագծով նախատեսված ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման իրականացման համար պետական տուրքը գանձվելու է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ կետերի համապատասխան: Եթե այդպես չէ, ապա առաջարկում ենք օրենքով նախատեսել պետական տուրքի համապատասխան դրույքաչափեր: Միաժամանակ, երկիմաստություններից խուսափելու համար առաջարկում ենք հստակեցնել Նախագծի 29-րդ հոդվածի 4-րդ մասը: 6. «Լիցենզավորման	Ընդունելի է	Ե՛վ «Կրթության մասին» ՀՀ օրենքով /Հոդված 42, 10-րդ մաս/, և՛ ՀՀ կառավարության հիշյալ որոշմամբ հաստատված կարգում /կետ 26/ նշված են, որ լիցենզիա և պետական հավատարմագրման վկայական շնորհելու կամ այդ փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում գանձվում է պետական տուրք՝ «Պետական

	մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ փոփոխություններ են կատարվում բարձրագույն կրթության բնագավառում գործող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների անվանումներում, ինչպես նաև սահմանվում է լիցենզավորման ենթակա նոր գործունեության տեսակ: Միաժամանակ, Նախագծի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն կրթության մասին» օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվելու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքը: Այս կապակցությամբ, առաջարկում ենք համապատաս-խան փոփոխություններ և լրացումներ նախատեսել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 13-րդ մասում, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում: Միաժամանակ, առաջարկում ենք Նախագծով սահմանել բարձրագույն կրթական ծրագրերի իրականացման համար տրամադրված լիցենզիաների գործողության դադարեցման հիմքերը, քանի որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-7-րդ մասերի դրույթները չեն կարգավորում բարձրագույն մասնագիտական կրթական	Ընդունելի չէ	տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափերով:

	ծրագրերի իրականացման համար տրված լիցենզիաների գործողության դադարեցման հետ կապված հարցերը:		Կից ներկայացված հիշյալ օրենքի նախագծի Հոդված 2-ով արդեն իսկ նախատեսված է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 13-րդ մասը ուժը կորցրած է ճանաչվում, իսկ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն արդեն խմբագրված է: Իսկ ինչ վերաբերում է 6-րդ կետի 3-րդ պարբե-րությամբ արված առա-ջարկին, ապա նշենք, որ՝ <<Բարձրագույն կրթության մասին>> ՀՀ օրենքի նախագծի նախկին տարբերակում

		Ընդունելի չէ	ներառված էին բարձրագույն կրթության կրթական ծրագրերի լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների նկատմամբ խստացումներ նախատեսող այլ դրույթներ, իսկ բուհի նկատմամբ՝ կիրառվող նախազգուշացման, տուգանքի, տուգանքի չափերի և լիցենզիայի գործունեության դադարեցման վերաբերյալ դրույթները /նշենք, որ գործող «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում ևս առկա են/: ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան եզրակացութան հիման վրա նշված դրույթները օրենքի նախագծի նախկին տարբերակից հանվել են, քանի որ նշվել էր, որ որ համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության

			իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի» 5-րդ բաժնի՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ: Վերջինս համաձայն վերոնշյալ ծրագրի՝ համապարփակ կերպով ընդգրկում է բոլոր վարչական իրավախախտումները և բացառում այլ օրենքներում վարչական իրավախախտման դեպքերի նախատեսումը: Այդ առումով նշվել է նաև, որ օրենսգրքի հետ շրջանառության մեջ է դրվել այլ օրենքներում լրացումներ և փոփոխու-թյուններ նախատեսող օրենքների նախագծեր, այդ թվում նաև «Բարձրա-գույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն-ներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
ՀՀ ֆինանսների նախարարություն 08.01.2018թ.	Նախագծերի փաթեթում ընդգրկված՝ I. **«Բարձրագույն կրթության մասին»** ՀՀ օրենքի		

N 01/9-2/24727-17	նախագծի (այսուհետ՝ Նախագիծ N 1) վերաբերյալ 1.1. Առաջարկում ենք ա) 6-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերում սահմանել բուհի պաշտոնական կայքէջում հաշվետվությունների և տեղեկատվությունների հրապարակման ժամկետները, բ) 6-րդ հոդվածի 8-րդ մասում, 21-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ և 10-րդ կետերում և 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «հիմնական ցուցանիշների» բառերը փոխարի-նել «արդյունքային ցուցանիշների» բառերով, գ) 13-րդ հոդվածի 2-րդ մասում «թափանցիկությունը» բառից հետո ավելացնել «հաշվետվողականու-թյունը» բառը, դ) նկատի ունենալով, որ տեղեկանք-հիմնավորման համաձայն բուհերը հանդիսանալու են պետական ոչ առևտրային կազմակերպություն կամ հիմնադրամ, իսկ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ կանոնակարգ-ված են վերջիններիս կողմից գնման գործընթացների կազմակերպման հետ կապված հարաբերությունները, որպես ավելորդ դրույթ հանել 18-րդ հոդվածի 12-րդ մասի 17-րդ կետը, ե) 23-րդ հոդվածի 7-րդ մասում «75 տոկոսը չլրացրած ուսանողը» բառերը փոխարինել «75 տոկոս համապատասխան գումարային կրեդիտներ չկուտակած ուսանողը» բառերով, զ) Պարզաբանել, թե որոնք են 25-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում նշված «կայուն	Ընդունելի է Ընդունելի է Ընդունելի է Ընդունելի է	Կատարվել են համապատասխան լրացումներ Կատարվել են համապատասխան փոփոխություններ Կատարվել է համապատասխան լրացում Կատարվել է համապատասխան փոփոխություն

	ֆոնդերը»-ը, է) 27-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում «դրամաշնորհ» բառը փոխարինել «ֆինանսական աջակցություն» բառերով: 1.2. Նախագծում սահմանված չէ նախկինում տրամադրված լիցենզիաների վերաձևակերպման կամ նոր լիցենզիաների տրամադրման վերաբերյալ համապատասխան դրույթը և գործընթացը: II. **«Լիցենզավորման մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենքի Նախագիծ N 2) վերաբերյալ 2.1. 3-րդ հոդվածով նախատեսվում է կրթության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության նոր տեսակի, այն է՝ «Ասպիրանտի աստիճանով կրթական ծրագրի իրականացում» սահմանումը: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ գործունեության նոր տեսակի սահմանումը հակասում է ՀՀ կառավարության որդեգրած՝ տրամադրվող լիցենզիաների քանակի կրճատման քաղաքականությանը, հատկապես որ ներկայացված չէ վերջինիս սահմանման վերաբերյալ համապատասխան հիմնավորումը և նպատակահարմարությունը:	Ընդունելի է Ընդունելի է մասնակի Ընդունելի է Ընդունելի է Ընդունելի չէ	Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն Նախագծի անցումային դրույթների 2-րդ մասում կատարվել է համապա-տասխան լրացում «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքով կանոնակարգվում և հստակեցվում են միջազգային չափանիշներին համապատասխան բարձրագույն կրթության բնագավառին վերաբերող հիմնական

	2.2. 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսվող փոփոխությունը հակասում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով ամրագրված լիցենզավորման սկզբունքներին և նպատակներին՝ անձանց (սպառողների) իրավունքների, օրինական շահերի պաշտպանությանը, քանի որ Նախագիծ N1-ի 12-րդ հոդվածի 7-րդ մասով հստակ սահմանված չեն կրթական ծրագրերի իրականաց-ման լիցենզիայի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու, նոր լիցենզիա չտրամադրելու (մերժելու) կամ լիցենզիայից զրկելու դեպքերում տվյալ բուհերի (դրանց մասնագիտությունների) սովորող-ների համար համապատասխան մասնագիտություններով այլ հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող բուհերի առկայության դեպքերը:		և կիրառվող անհրաժեշտ դրույթները, որը համադրելի և ըմբռնելի կդարձնի ՀՀ բարձրագույն կրթական համակարգի նկարագրությունը ազգային և միջազգային մակարդակներում, նկատի ունենալով եվրոպական որակավո-րումների շրջանակի և Զալցբուրգյան սկզբունք-ների (ասպիրանտական կրթությունն որպես բարձրագույն կրթական 3-րդ մակարդակ) հետ հա-մապատասխանեցմամբ : Հետևաբար ասպիրան-տական կրթությունը ևս համարվում է կրթական ծրագրեր իրականացնող հիմնական կրթական աստիճան և սահմանված կարգով ենթակա է լիցենզավորման: Տվյալ դեպքում նշենք, որ օրենքը չի կարող ամենայն մանրամասնու-թյամբ կարգավորել գործընթացի լրիվ բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջներին վերաբերող հարցերը: «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծի նույն 12-րդ հոդվածի 7-րդ մասով նշված է, որ համապատասխան

	Հարկ է նաև նշել, որ անհրաժեշտ է միմյանց համապատասխանեցնել Նախագիծ N1-ի և Նախագիծ N 2-ի ուժի մեջ մտնելու ժամկետների վերաբերյալ համապատասխան դրույթները: III. **«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»** ՀՀ օրենքի նախագծի (Նախագիծ N3) վերաբերյալ. Նախագիծ N3-ով առաջարկված փոփոխությունը, բովանդակային առումով, անհասկանալի է: Միաժամանակ, հարկ է նշել, որ եթե նշված նախագծով առաջարկվում է սահմանել, որ հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսման վարձավճարներից գոյացող բյուջեի հինգ տոկոսի «ներկայումս սահմանված՝ ուսանողական համակազմի 10 տոկոսի փոխարեն» ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները, ապա հաշվի առնելով այն, որ նախագծին կից ներկայացված չեն դրա ընդունման հիմնավորումները, անհասկանալի է առաջարկության նպատակադրումը: Մասնավորապես, անհասկանալի է, թե վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի մասով կատարվող փոխհատուցման գումարները եկամտային հարկով հարկման նպատակով համախառն	Ընդունելի չէ Ընդունելի է	գործընթացները կարգավորվելու են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: Ավելին, հիշյալ նորմը նաև ոլորտը կարգավորող ներկայիս օրենքի դրույթ է /Հոդված 9, մաս 6, 4-րդ պարբերություն/: Կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախատեսվող դրույթը և համապատասխան օրենքում առաջարկվող փոփոխությունը բխում է բուհերի կողմից բարձրա-գույն կրթության բնագա-վառում սովորողների շրջանում իրականացվող սոցիալական քաղաքակա-նությունից, այդ թվում՝ ուսման վարձերի զեղչերի կիրառմամբ (շուրջ 80-85%-ը սովորում է վճարովի համակարգում): Նշենք, որ ՀՀ կրթության և գիտության նախարա-

	եկամտից նվազեցվող եկամուտ համարելու առումով գործող հարկային օրենսդրությամբ սահմանված կարգավորումները ինչպիսի խնդիրներ են առաջացնում: Միաժամանակ, հայտնում ենք, որ ՀՀ հարկային օրենսգրքով վերանայվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթը և սահմանվել է, որ եկամտային հարկով հարկման առումով նվազեցվող եկամուտներ են համարվում ոչ թե ՀՀ կառա-վարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի 10 տոկոսի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները, այլ բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսի՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ուսման վարձի փոխհատուցման գումարները: Այլ կերպ ասած՝ ՀՀ հարկային օրենսգրքով արդեն իսկ նվազեցվել են ներկայումս գործող հարկման բազաները: Հարկ ենք համարում նշել. որ գործող հարկային օրենսդրությամբ վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի մասով կատարվող փոխհատուցման գումարները, շահութահարկով հարկման նպատակով ծախս համարելու և եկամտային հարկով հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող եկամուտ համարելու առումով, արդեն իսկ կարգավորված են: Բացի այդ, հարկման բազաների նվազեցմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների	Ընդունելի չէ	րության կողմից առկա է վերջին երեք տարիների վերլուծություն (բուհերի տրամադրված տվյալների հիմքով), ըստ որի բուհերի վրա լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն է առաջացնում: Միաժամանակ նշենք նաև, որ բուհերի կողմից ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման %-ները գերազանցվում են հիմնականում հետևյալ կարգավիճակ ունեցող սովորողների ուսման վարձի զեղչման դեպքում՝ 1/ մարտական հերթապա-հություն իրականացնող զորամասերում մարտա-կան հերթապահության մեջ ընդգրկված պարտա-դիր ժամկետային զինվո-րական ծառայություն անցած, 2/ապրիլյան մարտական գործողությունների մասնակից, 3/ 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող), 4/սոցիալապես անապահով (ընտանիք-ների անապահովության գնահատման համակար-գում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող

	իրականացումը չի բխում ներկայումս իրականացվող հարկային քաղաքականության ուղղություններից, քանի որ իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղված է հարկման կայուն դրույքաչափերի պայմաններում հարկման բազաների ընդլայնմանը և հարկային արտոնությունների շրջանակի կրճատմանը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագիծ N3-ով սահմանված վերոնշյալ կարգավորումների վերանայումները համարում ենք ոչ նպատակահարմար: **Նախագծերի փաթեթում ընդգրկված մյուս նախագծերի** վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք: Ինչ վերաբերում է բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակա-ցություն տալուն, ապա այն հնարավոր է տրամադրել ՀՀ կրթության և գիտության նախարա-րության կողմից վերոհիշյալ դիտողությունների և առաջարկու-թյունների հիման վրա լրամշակ-ված ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացման պարագայում:		ընտանիքների), 5/ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամար-տիկ ծնող ունեցող և այլն:
ՀՀ արդարադատության նախարարություն 25.12.2017թ., հմ. 01/14/23286-17	**«Բարձրագույն կրթության մասին»** Հայաստանի Հանրապե-տության օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ 1. Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ մասում «(այսուհետ՝ բուհ)» բառերն անհրաժեշտ է հանել՝ հաշվի առնելով, որ «բարձրագույն ուսումնական հաստատություն»	Ընդունելի է	Կատարվել է համապատասխան խմբագրում

	հասկացությունը և «բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ» հասկացությունները օրենքի նախագծի կարգավորումների համաձայն չեն նույնացվում: 2. Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասում «միջպետական պայմանագրերով և համաձայնագրերով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «միջազգային պայմանագրերով» բառերով՝ նկատի ունենալով «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգային մոտեցումները: Բացի այդ, նույն մասում «և նորմատիվ իրավական ակտերով» բառերն անհրաժեշտ է հանել՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջները: 3. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ *(*պետք է լինի 2-րդ)* կետում «ինչպես նաև» բառերն անհրաժեշտ է փոխարինել «և/կամ» շաղկապներով՝ հաշվի առնելով, որ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները կարող են պետության կողմից սահմանված կարգով բարձրագույն կրթության (ըստ՝ անհրաժեշտության՝ նաև կրթության այլ մակարդակներում) ծրագրեր և/կամ հետազոտական ծրագրեր իրականացնելու իրավասություն ունենան: 4. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվել է նախաբակալավրի որակավորում (associate degree) հասկացությունը, որի համաձայն՝ բարձրագույն	Ընդունելի է Ընդունելի է Ընդունելի է	Կատարվել է համապատասխան խմբագրում Կատարվել է համապատասխան խմբագրում Կատարվել է համապատասխան փոփոխություն

	կրթության կարճ շրջափուլի արդյունքում շնորհվող որակավորում է, որի ուսումնառության ավարտը հավաստվում է համապատասխան ավարտական փաստաթղթով: Հիշյալ հասկացության սահմանումը նախագծով նախատեսելու առնչությամբ հայտնում ենք, որ նախագծի մի շարք հոդվածներում (օրինակ՝ 9-րդ, 11-րդ հոդվածներ և այլն) բացակայում են նախաբակալավրի որակավորումը՝ որպես բարձրագույն կրթության առանձին մակարդակ դիտարկելու կամ շնորհվող որակավորումը բարձրագույն կրթության հաջորդ մակարդակներում որպես նախապայման հաշվի առնելու կարգավորումները, ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է լրացուցիչ դիտարկել հիշյալ հասկացությանը տրված սահմանմանը համահունչ նախագծի տարբեր հոդվածներով համապատասխան կարգավորումներ սահմանելու նպատակահարմարության հարցը: 5. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «այլ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «նորմատիվ» բառը: 6. Նախագծի 6-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմինն ապահովում է բուհի թափանցիկության և հաշվետվողականության (այդ թվում՝ ֆինանսական հաշվետվողականության) մեխանիզմների մշակումը: Վերոգրյալի առնչությամբ, հաշվի առնելով ՀՀ	Ընդունելի է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ

	Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, գտնում ենք, որ նախագծի 6-րդ հոդվածի հիշյալ մասով նախատեսված կարգավորումները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, ուստի անհրաժեշտ է այն խմբագրել և նախատեսել նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասում՝ որպես բարձրագույն կրթության բնագավառում կրթության պետական լիազորված մարմնի իրավասություն:		Կատարվել է համապատասխան լրացում
	7. Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունն անհրաժեշտ է հանել և Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում գործող բուհերի տեսակների սահմանման լիազորությունը տալ ՀՀ կառավարությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով նախ հնարավոր չէ սպառիչ սահմանել բուհերի բոլոր տեսակները, քանի որ հետագայում օրենքում բուհերի նոր տեսակներ սահմանելու անհրաժեշտության հարց կարող է առաջանալ, և երկրորդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ըստ տեսակների և անվանումների դասակարգման պահանջները և չափանիշները, միևնույն է, սահմանվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:	Ընդունելի է Ընդունելի է	Կատարվել է համապատասխան խմբագրում
	8. Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4) ուսումնառությունը իրականացվում է համատեղ կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց մի մասն իրականցվում է մեկ այլ բուհում և դրանց ավարտին շնորհվում է		

	համատեղ որակավորման աստիճան:» 9. Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ մասում, 14-րդ */*պետք է լինի 15-րդ/* հոդվածի 3-րդ և 11-րդ մասերում «որոնք» բառն անհրաժեշտ է փոխարինել «ովքեր» բառով: 10. Նախագծի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում «միջպետական, միջկառավա-րական պայմանագրերով և (կամ) համաձայնագրերի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «միջազգային պայմանագրերի» բառերով: 11. Նախագծի 14-րդ հոդվածի 5-րդ մասում «Հայաստանի Հանրապետության օրենքներով» բառերն անհրաժեշտ է հանել: 12. Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում «միջպետական կամ միջգերատեսչական կամ միջբուհական պայմանագրերով կամ համաձայնագրերով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «միջազգային կամ միջբուհական պայմանագրերով» բառերով: 13. Նախագծի 18-րդ հոդվածի 12-րդ մասի 6-րդ կետում «հաստատումը» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «բացառությամբ, եթե կանոնադրության փոփոխությունները վերաբերվում են կանոնադրությամբ սահմանված նպատակներին,»՝ հաշվի առնելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի	Ընդունելի է	Կատարվել է համապատասխան խմբագրում Կատարվել է համապատասխան խմբագրում

	պահանջները: 14. Նախագծի 27-րդ հոդվածի 1-ին մասից անհրաժեշտ է հանել «ասպիրանտական» բառը, քանի որ, ըստ նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ուսանողը սահմանված կարգով բուի ընդունված և բարձրագույն կրթության առաջին կամ երկրորդ աստիճանում ուսումնառող անձն է: 15. Նախագծի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ բուհի ուսանողը պարտավոր է պահպանել բուհի կողմից սահմանված էթիկայի կանոնները և ակադեմիական ազնվության վարքականոնները: Այդ առնչությամբ գտնում ենք, որ նախագծով անհրաժեշտ է սահմանել էթիկայի ընդհանուր կանոններ, որոնք պարտադիր կլինեն բուհի ուսանողների, այդ թվում նաև՝ բուհի աշխատողների համար, միաժամանակ հնարավորություն տալով բուհին՝ իր գործունեության առանձնահատկություններով պայմանավորված սահմանելու էթիկայի լրացուցիչ կանոններ: Իսկ «ակադեմիական ազնվության վարքականոններ» ձևակերպման հետ կապված գտնում ենք, որ անորոշ է դրա իրավական բովանդակությունը, հետևաբար, անհրաժեշտ է նախագծի 3-րդ հոդվածով նախատեսել այդ հասկացության սահմանումը:	Ընդունելի է Ընդունելի է Ընդունելի է Ընդունելի է	Կատարվել են համապատասխան խմբագրումներ Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան խմբագրում Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան

			լրացում
	16. Նախագծի 27-րդ հոդվածի 10-րդ մասում «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով, քանի որ դատարան դիմելու իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:	Ընդունելի է	
	17. Նախագծի 27-րդ հոդվածի 11-րդ մասում օգտագործվում է «սովորողի կարգավիճակ» ձևակերպումը, մինչդեռ նախագծի 3-րդ հոդվածով «սովորող» հասկացության սահմանումը տրված չէ:		Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում՝ սովորողի և ուսանողի համադրմամբ ու կիրառմամբ
	18. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածների պահանջները՝ նախագծի 29-րդ հոդվածի 4-րդ մասում անհրաժեշտ է նշել Հայաստանի Հանրապետու-թյան կառավարության որոշման կրճատ անվանումը:	Ընդունելի է մասնակի	Կատարվել է համապատասխան լրացում էթիկայի ընդհանուր կանոնների պարտադիր լինելու մասով աշխատողների համար ևս /28-րդ հոդված 15-րդ մաս կետ 6/: Նշենք նաև, որ «ակադեմիական ազնվու-թյան վարքականոններ» ձևակերպումը փոխարին-վել է որպես «ակադեմիա-կան բարեվարքության վարքականոններ», իսկ «ակադեմիական բարե-վարքություն» եզրույթն արդեն տարիներ շարունակ գործնական կիրառություն ունի և
	19. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի դրույթները՝ առաջարկում ենք նախագծի 30-րդ հոդվածի դրույթները նախագծում շարադրել 29-րդ հոդվածով՝ հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 29. Եզրափակիչ դրույթներ		
	1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան	Ընդունելի է մասնակի	

	հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով և 18-րդ մասով նախատեսված ուսումնառության գործընթացների կազմակերպումը բուհերում ներդնել սույն օրենքի ընդունումից հետո երրորդ ուսումնական տարվանից սկսած: 3. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը և 5-րդ մասի 1-ին կետն ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից: 4. Սույն օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված բուհերի ընդունելության գործընթացի կազմակերպման պահանջը տարածվում է ներառյալ 2019/2020 ուստարվանից սկսած, իսկ նույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված պահանջը՝ սույն օրենքի ընդունումից հետո երրորդ ուսումնական տարվանից սկսած: 5. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 7-րդ մասերի դրույթները, բուհերում ներդնել սույն օրենքի ընդունումից հետո երրորդ ուսումնական տարվանից սկսած: 6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքը, բացառությամբ նույն օրենքի 6-րդ հոդված 4-րդ և 4.1-4.3 մասերի, 14-րդ հոդվածի և 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի		բազմաթիվ հետազոտու-թյուններում, հոդվածնե-րում և բուհերի կողմից ներկայացված տարբեր փաստաթղթերում և հաշվետվություններում օգտագործվում է այն: Ավելին՝ համաձայն նախագծի 21-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի՝ լիազոր մարմինը պետք է մշակի և հաստատի էթիկայի կանոնագիրք /ուղեցույց/, որում կներառ-վեն նաև էթիկական սկզբունքների անհրա-ժեշտ սահմանումները: Կատարվել է համապատասխան փոփոխություն «Կրթության մասին» ՀՀ օրենքով տրված է «սովորող» հասկացության սահմանումը /3-րդ հոդված 1.9 կետ/ Կատարվել է համապատասխան փոփոխություն

	դրույթների, որոնք շարունակում են գործել մինչև սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դրույթների ուժի մեջ մտնելը»: Վեոնշյալ առաջարկությամբ պայմանավորված անհրաժեշտ է նաև նախագծի 29-րդ հոդվածից հանել 6-րդ, և 8-9-րդ մասերը:	Ընդունելի է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ
	«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի վերաբերյալ՝	Ընդունելի չէ	
	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ օրենք/ 28-րդ հոդվածի 2-3, 5-7-րդ և 9-10-րդ մասերը, որոնք, ըստ էության, վերաբերում են բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության և ակադեմիական ազատություններին: Իսկ նախագծի հիշյալ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է Օրենքի նույն հոդվածի 8-րդ կետում կատարել լրացում, որը առնչվում է Երևանի պետական համալսարանի կարգավիճակի առանձնահատկու-թյուններին, և որի առանձնահատ-կությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Այդ առնչությամբ, հաշվի առնելով, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների	Ընդունելի է Ընդունելի է	«Կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարվել է համապա-տասխան խմբագրում և «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծում կատարվել է լրացում ու ներառվել անհրաժեշտ դրույթներ /6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր/

	ինքնավարության և ակադեմիական ազատությունների շրջանակը, այդ թվում նրան՝ իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերություններն ամբողջությամբ հանդիսանում են «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կարգավորման առարկա, ուստի առաջարկում ենք Օրենքի 28-րդ հոդվածն ամողջությամբ ուժը կորցրած ճանաչել, իսկ հիշյալ հոդվածի առանձին դրույթներ, որոնք, ըստ նախագծի ուժը կորցրած չեն ճանաչվում՝ ներառյալ Երևանի պետական համալսարանի կարգավիճակին առանձնահատկու-թյուններին վերաբերող դրույթը, սահմանել «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով: Նշված առաջարկությունը բխում է նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն՝ իրավական ակտը պետք է լինի լիակատար, ավարտված և լիովին կարգավորի ակտով նախատեսված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները:		
	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «կետ՝» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «հետևյալ բովանդակությամբ» բառերը՝ նկատի ունենալով «Իրավական	Ընդունելի է	Կատարվել է համապատասխան լրացում

	ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 279-րդ կետի պահանջները: **Նախագծերի փաթեթում ընդգրկված մյուս նախագծերի** վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:	Ընդունելի է	
ՀՀ պաշտպանության նախարարություն 30.12.2017թ., ՊՆ/510-1981	Առաջարկում եմ նախագծում ներառել նաև գործող «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի՝ ռազմաուսում-նական հաստատությունների կարգավիճակի և գործունեության առանձնահատկությունները սահմանող բոլոր դրույթները, քանի որ «Զորամասերի և զինվորական հաստատությունների կարգավի-ճակի մասին» ՀՀ օրենքի պահանջ-ների համաձայն՝ ռազմաուսում-նական հաստատությունները հանդիսանում են պետական հիմնարկներ: Բացի այդ, հաշվի առնելով բարձրագույն կրթության համակարգին բարձրագույն ռազմական կրթության առավել ամբողջական ինտեգրման և ոլորտի հետագա զարգացման ապահովման	Ընդունելի է մասնակի	Նախագծում ներառված են համապատասխան դրույթներ ռազմական հաստատությունների գործունեության հետ կապված: Մասնավորապես նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասում նշված է, որ Հայաստանի Հանրապետության բարձրագույն ռազմական, ոստիկանական, աստվածաբանական, միջազգային պայմանագրերով, ինչպես նաև պետության մասնակցությամբ ստեղծված ուսումնական հաստատությունների գործունեության կարգը սահմանվում է սույն օրենքով, եթե այլ

	անհրաժեշտությունը, առաջարկում ենք ՀՀ պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանումների հետ կազմակերպել շահագրգիռ քննարկում՝ ներկայացված օրենքի նախագիծը լրամշակելու, ինչպես նաև՝ օրենքներում անհրաժեշտ կարգավորումներ նախատեսելու նպատակով:		օրենքներով այլ բան նախատեսված չէ: Բացի այդ նախագծում ավելացվել է դրույթ, այն է՝ ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են օրենքով և ռազմաուսումնական հաստատության կանոնադրությամբ: Ինչ վերաբերում է նախագծի լրամշակմանը, ապա նշենք, որ առաջարկը հստակ չէ և կրում է ընդհանուր բնույթ ու պարզ չէ թե ինչ դրույթների մասով պետք էր նախատեսել այլ կարգավորումներ:
ՀՀ մարդու իրավունքների պաշտպան	1. Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար բարձրագույն կրթություն ստանալու պայմանների հավասարությունը: Ըստ այդմ՝ Նախագծի որոշ հոդվածներում, օրինակ՝ 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում են համապատասխան երաշխիքներ այդ անձանց իրավունքների իրականացման համար (ուսումնական նշանակության համար նախագծվող բուհերի շենքերը, շինությունները և այլ տարածքները պետք է նախագծվեն՝ հաշվի առնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց պահանջմունքները: Առկա շենքերը, շինությունները և այլ տարածքները պետք է հարմարեցվեն վերոնշյալ անձանց համար): Այնուամենայնիվ, լիարժեք ներառման սկզբունքով	Ընդունելի է մասնակի	Նախագծում կատարվել են որոշակի փոփոխություններ և լրացումներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթություն ստանալու պայմանների մասով /4-րդ հոդված մաս 1 կետ 4, 26-րդ հոդված մաս 3 և այլն/: Միաժամանակ, սույն օրենքը չի կարող ամենայն մանրամասնությամբ ներառել նշված անձանց հետ կապված համապատասխան բոլոր կարգավորումները, այլ նաև՝ կարող է սահմանվել տվյալ ոլորտի

	հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմաններում կրթության ապահովման համար անհրաժեշտ են առավել գործուն և համապարփակ օրենսդրական կարգավորումներ: ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթեր, մասնավորապես՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիան և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագիրը, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան անդրադառնում են հատուկ խմբերի կրթության իրավունքին՝ ամրագրելով կրթության իրավունքի համընդհանուր իրականացումը: Այսպես, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը ճանաչում է հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Այս իրավունքն առանց խտրականության և հավասար հնարավորություններով իրականացնելու համար մասնակից պետություններն ապահովում են կրթության բոլոր ոլորտները ներառող համակարգը բոլոր մակարդակներում, ինչպես նաև՝ կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում: Ըստ այդմ՝ պետությունը պետք է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն ընձեռի սովորելու կյանքի ու սոցիալական զարգացման հմտությունները՝ աջակցելով նրանց լիակատար ու հավասար մասնակցությանը կրթական համակարգում ու հասարակական կյանքում՝ որպես լիիրավ անդամներ: Վերջինիս իրագործման նպատակով պետությունը պետք է իրականացնի անհրաժեշտ միջոցառումներ: Ավելին, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի 2014 թվականի թիվ 4 Ընդհանուր		օրենսդրությամբ, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերով: Ինչ վերաբերում է կառավարման մարմիններում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությանը և քվոտավորմանը, ապա նշենք, որ կառավարման մարմինները ձևավորվում են համապատասխան ներկայացուցչական կազմերից և ինչպես դասախոսական, այնպես էլ՝ ուսանողական, կազերից առաջադրումները կատարվում են սահմանված կարգով: Ավելին՝ նախագծի Հոդված 27-ի 14-րդ մասի համաձայն՝ ուսանողական մարմինների աշխատանքներում կարող են ընդգրկվել բուհի բոլոր սովորողները, այդ թվում՝ նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

	մեկնաբանության համաձայն՝ պետությունը պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող անձանց ներառական կրթական համակարգի միջոցով կրթության իրականացումը կրթության բոլոր մակարդակներում առանց խտրականության և մյուսների հետ հավասարության: Կոմիտեի 2014 թվականի թիվ 4 Ընդհանուր մեկնաբանությունը մշտապես անդրադառնում է կրթական համակարգի բոլոր մակարդակներին: Այսպես, կրթության իրավունքի մատչելիությանը և հասանելիությանն անդրադառնալիս կոմիտեն կրկին նշում է պետության կողմից համապարփակ միջոցառումների ձեռնարկումը կրթական համակարգի բոլոր մակարդակներում հիմնարար իրավունքի իրականացման նպատակով: Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի մասին է նշվում նաև ՄԱԿ-ի՝ «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակներով, որի 4-րդը ևս վերահաստատում է ներառական, որակյալ և հավասար կրթության իրավունքը: Ներառական կրթությունը կարևոր է բոլոր սովորողների որակյալ կրթություն ստանալու համար, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ներառական խաղաղ և արդար հասարակությունների զարգացման համար, ուստի, պետությունների առջև հստակ թիրախներ և ցուցանիշներ են դրվել նպատակի իրագործման համար: Ավելին, ընդհանուր առմամբ պետության քաղաքականությունը ևս միտված է դեպի լիարժեք ներառմանը, որի մասին է վկայում, օրինակ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12 N1 արձանագրային որոշումը, որով կրթության իրավունքի իրականացման համար որոշմամբ նախա-	Ընդունելի չէ	

	տեսվում է Հայաստանում ներառական բարձրագույն կրթության ներդրման գործողությունների ծրագրի մշակում և իրականացում, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի հիմունքներով կրթության ապահովում, բարձրագույն ուսումնական հաստատություններում ներառական կրթության համակարգողների ներդրում և այլ գործողություններ: Նշվածը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է Նախագծում ևս ամրագրել գործուն սկզբունքներ և մեխանիզմներ, որոնք ուղղված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության մատչելիության ապահովմանը՝ օրինակ՝ մատչելի կրթական ծրագրերի, որոշում կայացնելիս հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման ապահովման և այլ գործողությունների միջոցով: Նշվածը կարելի է կատարել օրինակ Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված կրթական ծրագրերի մասին նշում կատարելով, Նախագծի 18-րդ հոդվածում բուհերի կառավարման մարմիններում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության նվազագույն քվոտայի սահմանմամբ, համանման քվոտային նախատեսումը բուհերի ուսանողական համակազմում (Հոդված 27): Ընդ որում՝ անհրաժեշտ է ընդգծել, որ հատուկ կարգավորման անհրաժեշտություն ունի այն հանգամանքը, որ կրթության համար անհրաժեշտ հարմարեցումները չեն կարող առաջացնել հավելյալ ֆինանսական բեռ կրթություն ստացող հաշմանդամություն ունեցող անձի համար: 2. Նախագծի 18-րդ հոդվածով	Ընդունելի չէ	

	ամրագրվում են բուհերի կառավարման հետ կապված դրույթներ, որտեղ մասնավորապես ամրագրվում են բուհերի կառավարման մարմինների, այդ թվում՝ հան-րային բուհերի կառավարման խորհուրդների իրավասություն-ները և գործունեության հիմքերը: Չափազանց կարևոր է այդ խորհուրդների գործունե-ության անկախությունը և ապաքաղաքականացվածությունը: Այս հարցը կարգավորվելու նպատակով նույն հոդվածում առաջարկվում է խորհրդի անդամների թվի համամաս-ություն, ինչպես նաև դրույթ, ըստ որի՝ խորհրդի անդամ չեն կարող լինել քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք և մարզպետները: Միաժամանակ կարծում ենք, որ խորհուրդները կարող են քաղաքական կուսակցության ազդեցության տակ լինել առանց կուսակ-ցության ներկայացուցիչների կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց՝ խոր-հրդում ուղղակիորեն ներկա-յացված լինելու: Ուստի, խորհրդի գործունեության անկա-խության ապահովման համար անհրաժեշտ են հավելյալ երաշխիքներ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք, որպես խորհուրդների գործունեության սկզբունք, Նախագծի 18-րդ հոդվածում նախատեսել քա-ղաքական կուսակցությունների ազդեցությունից անկախութ-յունը, որը ուղենիշային կլինի բոլոր խորհուրդների գործու-նեության համար:	Ընդունելի չէ	Նախագծում հստակ ամրագրված է, որ խորհրդի անդամ չեն կարող լինել քաղա-քական պաշտոն զբաղեցնող անձինք և մարզպետները: Բացի այդ, նախագծի 16-րդ հոդվածով ամրագր-ված է, որ բարձրագույն կրթության համակար-գում քաղաքական, կուսակցական կազմա-կերպություններ չեն գործում:
	3. Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դիպլոմի և դիպլոմի հավելվածի ձևանմուշները, դրանց պատվիր-ման, բաշխման, լրացման, հաշվառման, գրանցման և պահպանման կարգը սահմանվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից: Միաժամանակ, Նախագծի 15-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ մրցույթի անցկացման կարգը սահմանում է Հայաստանի		Առաջարկը հստակ չէ, քանի որ նախագիծը մշակելիս հաշվի են առնվել բարձրագույն կրթության ոլորտում միջազգային պահանջ-ները և փորձը (այդ թվում՝ հավատարմա-գրման մասով): Բացի այդ, ներկայումս ևս համապատասխան ենթաօրենսդրական

	Հանրապետության կառավարությունը: Ավելին, Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բուհերը կարող են սահմանել կրթական ծառայություններ մատուցելու համար ըստ մասնագիտությունների ուսման վարձի չափը, որը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության բուհերի համար ըստ դրանց սեփականության ձևի, կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների սահմանված ուսման վարձի առավելագույն չափը: Միաժամանակ, Հայաստանում գործում են բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնց հավատարմագրման հարցերը լուծվում են նաև միջազգային պահանջներին համապատասխան: Ուստի, առաջարկում ենք այս հարցը նկատի ունենալ Նախագծի վերոնշյալ հոդվածների կարգավորումների համատեքստում: 4. Նախագծի 28-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ պարբերությամբ նախատեսվում է իմպերատիվ պահանջ, համաձայն որի՝ բուհում վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում վարչական կամ գիտական ստորաբաժանման (ամբիոն) ղեկավարի պաշտոնում նշանակված (ընտրված) անձի լիազորությունները դադարեցվում են ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրա 70 տարին: Սույն հարցը կարող է վիճահարույց լինել բուհի, այդ թվում՝ մասնավոր բուհի կողմից իր կադրային քաղաքականության ինքնավար իրացման տեսանկյունից: Ուստի, առաջարկում ենք Նախագծի վերոնշյալ հոդվածի իմպերատիվ պահանջը փոխել՝ 70 տարին լրացած վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում վարչական կամ գիտական ստորաբաժանման (ամբիոն) ղեկավարի պաշտոնում նշանակված (ընտրված) անձի լիազորությունները դադարեցնելու հարցում նախատեսելով բուհի հայեցողությունը: 5. Նախագծի 9-րդ հոդվածի	Ընդունելի չէ	ակտով նախատեսված է նաև բուհերի միջազգային հավատարմագրման հնարավորություն: Նախագծով ամրագրված հիշյալ դրույթը բխում է պետության որդեգրած քաղաքականությունից, նկատի ունենալով նաև՝ ՀՀ-ում գործող բուհերի համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձանց համար միատեսակ և ընդհանուր պահանջների սահմանումը: Բացի այդ, այն ուղղված է բուհերում երիտասարդ կադրերի առաջխաղացման նպաստմանը, որը կխթանի նաև բուհերի կրթության որակի բարձրացմանը և միջազգային ասպարեզում նրանց մրցունակությանը:

	12-րդ կետի համաձայն՝ բակալավրի կրթական աստիճանով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի ոչ պակաս 180 և ոչ ավելին, քան 240 կրեդիտը: Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսուցման տևողությունը պետք է կազմի առնվազն 3 տարի: Միաժամանակ, Նախագծի 9-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ առաջին և երկրորդ աստիճաններն ընդգրկող ինտեգրված ծրագրով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի ոչ պակաս 300 և ոչ ավելին, քան 360 կրեդիտը: Ինտեգրված ծրագրի առաջին մասը (համարժեք բակալավրին) պարտադիր պետք է լինի առաջին շրջափուլի կրթական ծրագրին, իսկ մնացած մասը՝ երկրորդ շրջափուլի կրթական ծրագրին համարժեք: Ինտեգրված ծրագրով որակավորման աստիճան ստանալու համար ուսուցման տևողությունը պետք է կազմի առնվազն 5 տարի, բայց ոչ ավելին, քան 6 տարին: Վերոնշյալ կարգավորումների համադրումից ստացվում է, որ 180-240 կրեդիտ միավոր ունեցող սովորողը պետք է շարունակի կրթությունը 2-3 տարի, որպեսզի այնուհետև հնարավորություն ունենա ընդունվելու մեկ այլ բուհ՝ մագիստրատուրայում սովորելու նպատակով: Նշվածը վիճահարույց է, քանի որ նման պարագայում օրինակ՝ որևէ բուհում մասնագիտություն ընտրելու դեպքում, սովորողը պարտադրված բակալավրի դիպլոմ ստանալու համար ստիպված է կորցնել հավելյալ տարիներ: Ուստի առաջարկում ենք Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ ենթակետում ավելացնել կետ կամ պարբերություն՝ համաձայն որի ցանկացած բուհի կողմից սովորողին պետք է ընձեռնվի ընտրության հնարավորություն սովորելու բակալավրի աստիճան շնորհող ծրագրում կամ ինտեգրված ծրագրում կամ հնարավորություն սովորելու մագիստրոսի կոչում		Խնդրո առարկա հարցը կարգավորվելու է համապատասխան ենթաօրենսդրական ակտերով: Մասնավորապես՝ համաձայն նախագծի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի դրույթների՝ ինտեգրված ծրագրով ուսուցմամբ կարգի և մասնագիտությունների ցանկի հաստատումը ՀՀ կառավարության իրավասությունն է, բացի այդ՝ ըստ նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ դիպլոմի և դիպլոմի հավելվածի ձևանմուշ-ները, դրանց պատվիր-ման, բաշխման, լրացման, հաշվառման, գրանցման և պահպանման կարգը սահմանվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

	շնորհող ծրագրում: Ըստ այդմ, ամիրաժշետ է նախատեսել, որ ինտեգրված ծրագրում սովորելու դեպքում 180-240 կրեդիտը վաստակելու դեպքում ուսանողին պետք է տրվի բակալավրի աստիճան շնորհող դիպլոմ՝ ուսանողի դիմումի հիման վրա:		

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:04:57	24. Նախագծում բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններում շահերի բախումների վերաբերյալ որևէ անդրադարձ չկա, թեև վերջինս բարձրագույն կրթության համակարգի և բարեվարքության զարգացման ռիսկային խոչընդոտներից է: Առաջարկվում է առանձին կետով անդրադառնալ այս հարցին ևս:	Ընդունվել է ի գիտություն: Ներկայացված առաջարկը լրացուցիչ կքննարկվի:	
2	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:04:57	23. Նախագծի հոդված 28-ում ներկայացվում է բուհերի աշխատողների իրավունքներն ու պարտականությունները: Սակայն նրանց իրավունքները ներակայացվում են համառոտ և սահամանափակ ընդամենը 7 կետով, իսկ պարտավորվածությունները ընդամենը 5 կետով: Սակայն հաշվի առնելով այն փաստը, որ նրանք, մասնավորապես պրոֆեսորադասախոսական կազմը, ուղղակիորեն աշխատում է ուսանողների հետ և այսպիսով հանդիսանում է կրթության	Չի ընդունվել: Օրենքը չի կարող ամենայն մանրամասնությամբ սահմանել աշխատողների բոլոր իրավունքները և պարտականությունները:	

		որակի անմիջական ապահովող, առաջարկվում է նրանց իրավունքներն ու պարտականություններն ավելի ընդգրկուն ներկայացնել:		
3	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:04:57	22. Հոդված 27-ը սահմանում է ուսանողների իրավունքներն ու պարտականությունները, բայց Նախագծում պետք է հստակ նշվի, որ ուսանողներին բուհ ընդունման պահից ի վեր տրվելու է նրանց իրավունքներն ու պարտականությունները հավաստող փաստաթուղթ: Շարունակելով տրամաբանությունը՝ անհրաժեշտություն է նկատվում նաև նախագծոմ հստակ նշել, թե ուսանողները, որ օղակում/ կառույցում կարող են պաշտպանել իրենց իրավունքները: Այս առումով անհրաժեշտ է նշել համապատասխան կառույցի, օրինակ՝ ուսանողական պաշտպանի անհրաժեշտության մասին, որտեղ կքննարկվեն և որոշումներ կկայացվեն ուսանողների խախտված իրավունքների վերաբերյալ:	Չի ընդունվել: Տե՛ս օրենքի Հոդված 27, մաս 2	
4	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:04:57	21. Հոդված 9-ի կետ 3-ը սահմանում է՝ ՀՀ բուհերի ռեկտորների խորհրդի առաջարկությամբ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հեռավար (դիստանցիոն) ձևերով բարձրագույն կրթություն ստանալ չթույլատրվող մասնագիտությունների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը, սակայն այս դրույթը հակասում է նախագծի հոդված 6-ի բուհերի ինքնավարությանմ իրավասության,	Չի ընդունվել: Ելնելով օրենքի ընդհանուր կարգավորումներից և տրամաբանությունից՝ ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների և որակավորումների համապատասխան ցանկերի հաստատումը ՀՀ կառավարության իրավասությունն է: Բացի այդ,	

		ակադեմիական ազատության դրույթներին, մասնավորապես՝ ակադեմիական և կազմակերպական ինքնավարությանը:	ինչպես նշված է հիշյալ կետում՝ հեռավար (դիստանցիոն) ձևերով բարձրագույն կրթություն ստանալ չթույլատրվող մասնագիտությունների ցանկը ներկայացվելու է բուհերի ռեկտորների առաջարկությամբ, հետևաբար չի հակասում բուհերի ինքնավարության դրույթներին:	
5	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:04:18	20. Հոդված 6-ը 11 կետով նշում է բուհերի ինքնավարությունը, իրավասություններն ու հաշվետվողականությունը մանրամասն, և չնայած այն բանին, որ հոդվածի վերնագիրը պարունակում է նաև «ակադեմիական ազատություն» հասկացությունը, վերջինիս մասին ոչ մի բան նշված չէ Նախագծի այլ մասերում: Հիշեցում՝ հոդված 3-ում կետ 42-ում տրված է ակադեմիական ազատության հասկացության սահմանումը, այն է՝ բուհի ակադեմիական անձնակազմի և սովորողների հետազոտություն անելու, ուսուցանելու և ուսանելու անկախության իրավունք: Սակայն տալ հասկացությունների շարքում «ակադեմիական ազատության» սահմանում, բայց որևէ կերպ չանդրադառնալ դրան նախագծի այլ մասում, անընդունելի է: Առաջարկվում է հոդված 6-ում անդրադառնալ մանրամասն այս հասկացությանը ևս:	Չի ընդունվել: «Ակադեմիական ազատություն» հասկացությունը սահմանված է ու այն ուղղակի կամ անուղղակի կիրառված է և՛ Հոդված 6-ի մաս 1-ում, և՛ Հոդված 4-ի մաս 2-ում:	
6	Բաց	19. Նախագծի տրամաբանական կառուցվածքի	Ընդունվել է ի գիտություն: Օրենքի 2-	

	Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:04:18	տեսակետից նույնպես առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, բուհի խնդիրները, ինչպես նաև բուհերի ինքնավարությունը, իրավասությունը, ակադեմիական ազատությունները և հաշվետվողականությունը սահմանող հոդվածները (Հոդված 6) զետեղված են Գլուխ 1-ի ներքո, մինչդեռ այս հոդվածները կարգավորում են հարցեր, որոնք, օրենքի տրամաբանությունից ելնելով, առավել նպատակահարմար է ունենալ Գլուխ 2-ում:	րդ գլխում համապատասխան հոդվածներով նկարագրված է բարձրագույն կրթության համակարգը: Գլուխ 2-ում օրենքի ընդհանուր կարգավորումներից ելնելով համապատասխան հոդվածներով տրված են բարձրագույն կրթության սկզբունքների, նպատակների, խնդիրների վերաբերյալ և վերջիններիցս բխող՝ այդ գլխում ներառվել են նաև բուհերի խնդիրների, ինքնավարության, իրավասության մասով ևս անհրաժեշտ դրույթներ:	
7	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:04:18	18. Նախագծի մի քանի կետերում նշվում են ուսուցման «առկա» և «հեռակա» ձևերը, որոնք սակայն, ի տարբերություն «հեռավար» ուսուցման ձևի, հոդված 3-ում սահմանված չեն: Առաջարկվում է ընդգրկել վերջիններիս սահմանումները ևս:	Չի ընդունվել: Օրենքի որևէ կետում «առկա» և «հեռակա» ուսուցման ձևեր եզրույթ չկա:	
8	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:03:58	17. Հոդված 3-ի կետ 29-ում սահմանվում է, որ հեռավար ուսուցումն իրականացվում է հիմնականում առցանց՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցներով, մինչդեռ նման սահմանումը լիարժեք չէ: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կարող են կիրառվել նաև ոչ հեռավար ուսուցման ժամանակ, ինչպես նաև	Չի ընդունվել: Հեռավար ուսուցման հասկացության մեջ իսկ նշված է «հիմնականում» և կարող են կիրառվել այլ միջոցներով ևս, որոնց հետ կապված անհրաժեշտ սահմանումները տրվում են նաև ենթաօրենսդրական ակտերով:	

		դրանց առկայությունը դեռ բավարար պայման չէ՝ ուսուցումը հեռավար համարելու համար:		
9	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:03:58	16. Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ, թեև սույն Նախագիծը ՀՀ Բարձրագույն կրթության օրենքի մասին է և չի ներառում հետբուհական կրթության մասը, այնուամենայնիվ Նախագիծը նշում է բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կազմակերպումը, հետևաբար նպատակահարմար կլիներ նշել թեկուզ համառոտ, թե որակավորման շնորհումն ում կողմից է տրվելու:	Չի ընդունվել: Տես՛ օրենքի Հոդված 21-ի մաս 3-ի 6-րդ կետը:	
10	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:03:58	15. Նախագծում նշվում է մասնագիտության դոկտոր հասկացությունը, որն այնուհետև փակագծում ներկայացվում է որպես՝ գիտությունների թեկնածու, PhD՝ բարձրագույն կրթության երրորդ աստիճանում շնորհվող որակավորում և գիտական աստիճան: Նման ձևակերպումից պարզ չէ, թե արդյոք տեղի է ունեցել որակավորումների համադրելիության ապահովում գիտության թեկնածուի և դոկտորի համար: Խնդրում ենք տալ պարզաբանում և Նախագծում ավելի հստակ ներկայացնել վերոնշյալ խնդիրը:	Տե՛ս Մարիան Թումանյան (marian.anglophone@gmail.com) օգտատիրոջ նույնաբովանդակ առաջարկին տրված պատասխանը:	
11	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան	14. Նախագծի մեջ բազմիցս գործածվում է «գիտամանկավարժական» ձևակերպումը (տե՛ս հոդված 5.1.3, 5.5, 6.9, 28.2, 28.12 և այլն), սակայն բարձրագույն կրթության ոլորտի համար այս եզրույթի գործածումն նպատակահարմար չէ,	Չի ընդունվել: Բարձրագույն կրթության ոլորտի համար կիրառելի է «գիտամանկավարժական կազմ» եզրույթը: «Գիտաուսուցողական» տերմինի կիրառման և	

	20.12.2017 14:03:58	ուստի առաջարկվում է «գիտամանկավարժական» բառը փոխարինել «գիտաուսուցողական» բառով:	փոխարինման առաջարկը հիմնավորված և տեղին չէ:	
12	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:03:25	13. Հոդված 26-ի 6-րդ կետում նշվում է, որ ՀՀ քաղաքացի չհանդիսացող, սակայն «հայազգի» կամ «ծագումով հայ» անձանց նկատմամբ արգելվում է կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ բուհում սովորող ՀՀ քաղաքացիների համար: Սակայն պարզ չէ, թե տվյալ քաղաքացիներն ինչպես պետք է հիմնավորեն իրենց «հայազգի» կամ «ծագումով հայ» լինելու փաստը (եթե այդ մասին նշված չէ անձնագրում կամ այլ իրավական ուժ ունեցող փաստաթղթում):	Ընդունվել է ի գիտություն: Առաջարկվող դրույթները սույն օրենքի կարգավորման առարկա չեն:	
13	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:03:25	12. Առաջարկում ենք հստակորեն սահմանել, որ որևէ ուսանող չի կարող հեռացվել բուհից կամ որևէ պատժի ենթարկվել՝ իր հասարական-քաղաքական գործունեության համար, այդ թվում նաև՝ բողոքի ակցիաներ, դասադուլներ և այլ ակցիաներ կազմակերպելու կամ մասնակցելու համար: Առաջարկում ենք նաև հոդված 27-ում մանրամասն սահմանել ուսանողական խորհուրդների ապաքաղաքականացման կարգավորումները: Օրինակ՝ այն մասին, որ որևէ քաղաքական ուժին պատկանելությունը չի կարող դիտվել առավելություն՝ այլ ուսանողների նկատմամբ և պետք է հավասար մոտեցում կիրառել:	Չի ընդունվել: Սույն օրենքը չի կարող ամենայն մանրամասնությամբ սահմանել ուսանողների հեռացման դեպքերը: Սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով և ուսանողի ու բուհի միջև կնքված պայմանագրով: Տե՛ս նաև օրենքի Հոդված 27-ի մաս 14-ը և Հոդված 16-ը:	

14	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:03:25	11. Բուհի ֆինանսական միջոցների կարգավորման ենթակետում (կետ 2-ի, 4-րդ ենթակետ) հստակ չէ, թե որն է ֆինանսական միջոցների այն «անհրաժեշտ» չափը, որը պետք է առկա լինի լիցենզավորման համար: Ուստի առաջարկվում է սահմանել անհրաժեշտ ֆինանսական միջոցների ստորին շեմը:	Ընդունվել է ի գիտություն: Ըստ անհրաժեշտության կսահմանվի ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ: Տե՛ս Հոդված 12, մաս 3:	
15	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:03:25	10. Հոդված 12 կետ 2-ում նշվում է, որ բուհը պետք է բավարարի ուսումնաարտադրական պրակտիկայի և լաբորատոր բազայի, անհրաժեշտ գույքի, գրադարանային-տեղեկատվական համակարգի առկայությունը և ուսումնամեթոդական ապահովման պահանջներին: Սակայն, բերված ձևակերպումը չափազանց լայն է և դրա գնահատումը կարող է խնդրահարույց լինել: Օրինակ՝ 100 գիրքն էլ կարող է գրադարան համարվել, 10.000 գիրքն էլ: Արդյո՞ք 100 գիրքը բավարար է համարվելու կամ ո՞րն է համարվում անհրաժեշտ գույք: Ինչպե՞ս է որոշվելու՝ առկա գույքը բավարար է, թե բավարար չէ. հստակ չէ:	Տե՛ս նախորդ պատասխանը:	
16	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:02:41	9. Հոդված 6-ի կետ 6-ում սահմանվում է, որ բուհի իրավասությունն է «սովորողների ընդունումը և ուսումնառության ընդհատումը՝ սույն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով»: Սակայն ուսանողների ընդունումը Հայաստանում իրականացվում է կենտրոնացված ձևով՝ միասնական քննությունների կազմակերպման	Չի ընդունվել: Օրենքի Հոդված 15-ի 10-րդ մասում նշված է՝ «բուհի ընդունելության մուտքային պահանջները բավարարող»: Նույն Հոդվածի 4-րդ մասի դրույթի մասով նշենք, որ այդ կրթական ծրագրերի իրականացումը բուհի կողմից նաև	

		միջոցով, ինչը չի կարող կարգավորվել բուհի կանոնադրությամբ կամ սույն օրենքով: Նույն հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ բուհի կառուցվածքային ստորաբաժանումները կարող են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել նաև միջնակարգ, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, ինչպես նաև՝ լրացուցիչ կրթության ծրագրեր, ինչը հակասում է տվյալ օրենքի կարգավորման առարկային:	գործող օրենքի դրույթ է, բացի այդ՝ որպես բուհի կառույցների կողմից իրականացվող կրթություն, պետք է ամրագրվի սույն օրենքով:	
17	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:02:41	8. Հոդված 28-ի կետ 15-ի ենթակետ 3-ում նշվում է՝ «Բուհի աշխատողները պարտավոր են սովորողների մեջ ձևավորել մասնագիտական որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում, հայրենասիրություն»: Սակայն նշվածները բուհի աշխատողների գործառույթները չեն և անհարկի են վերագրված նրանց: Բացի այդ, պարզ չէ, թե ինչպիսի «քաղաքացիական դիրքորոշման» ձևավորման մասին է խոսքը: Քաղաքացիական դիրքորոշումը միշտ էլ կոնկրետ բնույթ ունի, այս կամ այն կոնկրետ հարցի շուրջ է և դրսևորման տարբեր եղանակներ ունի: Հետևաբար, դժվար է պատկերացնել ընդհանրական «քաղաքացիական դիրքորոշման» ձևավորում: Նույնը վերագրելի է նաև «հայրենասիրության» ձևավորմանը: Եվ քանի որ նման ձևակերպումները ռիսկային են քննադատական մտածողության տեսանկյունից,	Ընդունվել է ի գիտություն:	

		առաջարկվում է Նախագծից հանել վերոնշյալ խնդրահարույց ձևակերպումները:		
18	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:02:41	7. Հոդված 5-ի 10 և 11-րդ կետերում խոսվում է բուհին վերապահված այնպիսի խնդիրների մասին, ինչպիսիք են անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը, սովորողի՝ ազգային, հոգևոր և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը, սովորողների մեջ քաղաքացիական հմտությունների արմատավորումը, բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը, և այլն: Այստեղ հարկ է շեշտել, որ բուհի դաստիարակչական, ինչպես նաև անձի հոգևրոր, բարոյական ու քաղաքացիական հմտությունների զարգացման կամ բնակչության կրթման գործառույթները քննարկման առարկա են և կարող են ունենալ տարբեր մոտեցումներ: Ուստի առաջարկվում է նախագծից հանել այս վիճակահարույց կետերը:	Ընդունվել է ի գիտություն: Բերված փաստարկները հիմնավոր չեն:	
19	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:02:41	6. Նախագծում մանրամասնորեն ամրագրված են միայն հանրային բուհի կառավարման դրույթները (տե՛ս գլուխ 3, հոդված 18), սակայն մասնավոր բուհերի կազմակերպաիրավական և կառավարման տիպային կարգավորումները բացակայում են: Այսպիսով, առաջարկվում է համալրել հոդված 8-ը մասնավոր բուհերի	Չի ընդունվել: Տե՛ս օրենքի Հոդված 29-ի մաս 11-ը: Մասնավոր բուհերի կազմակեպաիրավական ձևերից ելնելով կառավարման կարգավորումները սահմանվում են համապատասխան օրենքներով:	

		կառավարման կառուցվածքային նկարագրությամբ:		
20	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:02:10	5. Նախագիծը սահմանում է կառավարման և գիտական խորհուրդները՝ որպես բուհերի կառավարման կոլեգիալ մարմիններ: Սակայն, հաշվի առնելով պետական բուհերի կազմակերպաիրավական ձևի փոփոխման միտումները (վերակազմակերպումը ՊՈԱԿ-ներից՝ հիմնադրամների), «կառավարման խորհուրդ» եզրույթը կարող է տարընթերցում առաջացնել: Միևնույն ժամանակ, գիտական խորհուրդը չի կարող համարվել կառավարման մարմին՝ համաձայն Հիմնադրամների մասին ՀՀ Օրենքի: Բացի այդ, կարծում ենք, որ անհրաժեշտ է Նախագծի գլուխ 3-ում սահմանել, թե ինչպիսի կազմակերպաիրավական ձևեր կարող են ունենալ հանրային և մասնավոր բաձրագույն ուսումնական հաստատությունները՝ դրանից բխող կոլեգիալ և գործադիր կառավարման մարմինների տարբերակումներով:	Չի ընդունվել: Տե՛ս օրենքի Հոդված 18-ի մաս 2-ի 1-ին կետը: Տե՛ս նաև նախորդ պատասխանը: Բացի այդ նշենք, որ համապատասխան փոփոխություն և լրացում է նախատեսվել նաև «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում:	
21	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:02:10	4. Կրթության զարգացումը թե՛ հանրակրթական, թե՛ բարձրագույն կրթության մակարդակում ուղղակիորեն կապված է պատասխանատու և մտածող քաղաքացու հետ, հետևաբար նախագծի համար առանցքային պետք է դիտարկվի քննադատական մտածողության զարգացումը, իսկ դրան միտված գործողությունները պետք է դառնան գերակա:	Ընդունվել է ի գիտություն: Սույն օրենքի կարգավորման առարկա չէ և կարգավորվում է օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերով:	

		Այսպիսով, առաջարկվում է Նախագծում կրթության զարգացման համար կարևոր նախապայման դիտարկել քննադատական մտածողությունը և առանձին կետով անդրադառնալ դրան հոդված 4-ում «կամ հոդված 5-ում:		
22	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:02:10	3. Հոդված 27.6.7 նշվում է՝ «բուհի ուսանողը պարտավոր է պահպանել բուհի կողմից սահմանված էթիկայի կանոնները և ակադեմիական ազնվության վարքականոնները», մինչդեռ հարկ է նշել, ինչպես փաստում եմ մի շարք տեղական և միջազգային հետազոտությունների տվյալներ (այդ թվում՝ տե՛ս «Կոռուպցիայի դեմ պայքարը և բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում» (2016) ԲԲՀ-Հայաստան, Կիրառական քաղաքականության կենտրոն, Մ. Միլովանովիչ, «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն» (2013), ԲԲՀ-Հայաստան, ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Լ. Մաթեյ, Յու. Իվինսկան), «Կառավարման հետ կապված հարցերը Հայաստանի բարձրագույն կրթության ռեֆորմների կենտրոնում» (2013), Համաշխարհային Բանկ), ակադեմիական բարեվարքությունն ու դրա խախտումը կրթական համակարգի ընդհանուր խնդիր է և չի կարող սամանափակվել ուսանողական մակարդակում միայն: Հետևաբար, առաջարկվում է	Ընդունելի է:	Օրենքի Հոդված 28-ում կկատարվի համապատասխան լրացում:

		ակադեմիական բարեվարքության պահպանումը դիտարկել համակարգային հարց և ընդգրկել այլ բաժիններում ևս, այդ թվում՝ հոդված 28-ի «Բուհերի աշխատողների և նրանց իրավունքներն ու պարտականությունները» հատվածում:		
23	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:01:42	2. Նախագծի տարբեր կետերում պարբերաբար խոսվում է ակադեմիական բարեվարքության մասին՝ վերջինս ձևակերպելով կամ ազնվության վարքականոն, կամ ակադեմիական ազնվություն (օրինակ, տե՛ս հոդված 27.6.7): «Ակադեմիական բարեվարքություն» եզրույթն արդեն տարիներ շարունակ գործնական կիրառություն ունի, և ոլորտի բազմաթիվ մասնագետների կողմից, հետազոտություններում, հոդվածներներում և բուհերի կողմից ներկայացված տարբեր փաստաթղթերում և հաշվետվություններում օգտագործվում է հենց այս եզրույթը: Ավելին, Նախագծի այլ կետերում (օրինակ, տե՛ս հոդված 13.10) խոսվում է նաև գրագողության մասին, սակայն վերջինս ակադեմիական բարեվարքության խախտման դրսևորումներից ընդամենը մեկն է: Այսպիսով, առաջարկվում է Նախագծում օգտագործված մյուս տարբերակները՝ «ազնվության վարքականոն» և «ակադեմիական ազնվություն», փոխարինել «ակադեմիական բարեվարքություն» եզրույթով, իսկ նախագծի հոդված 3-ի օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների շարքը համալրել վերոնշյալ	Ընդունելի է:	Օրենքում կկիրառվի «ակադեմիական բարեվարքություն» եզրույթը:

		եզրույթով ու ավելի ընդգրկուն և համապարփակ ներկայացնել դրա սահմանումը:		
24	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:01:19	1. Ողջունելի է Նախագծում ամրագրված այն սկզբունքը, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձիք և մարզպետները չեն կարող լինել բուհերի կառավարման խորհրդի անդամ: Սակայն այս դրույթի ամրագրմամբ բուհերի և բարձրագույն կրթության համակարգի քաղաքականացման և գործադիրի կողմից վերահսկման խնդիրը լիարժեք չի կարգավորվում: Նախագծի հոդված 18-ը ամրագրում է բուհի կառավարման խորհրդի ձևավորման կարգը, որը, ինչպես արդեն նշվել է, կիրառելի է միայն հանրային բուհի դեպքում, և կարող է հակասել մասնավոր բուհի կազմակերպաիրավական ձևից բխող կարգավորումներին: Այնուհետև, սույն հոդվածի համաձայն, կառավարման խորհրդի 30 տոկոսը կազմված է բուհի հետ համագործակցող գործատուներից: Տվյալ դեպքում հստակ չէ գործատուների ոլորտային ինքնությունը: Արդյոք խոսքը գնում է մասնավոր հատվածի մասին, թե այս 30 տոկոսում կարող են ընդգրկվել նաև պետական գործատուների, ինչպես օրինակ՝ դպրոցների, նախարարությունների, մարզպետարանների և այլ ներկայացուցիչներ: Նման ձևակերպման պարագայում գոյություն ունի ռիսկ, որ բուհի հետ համագործակցող գործատուները կարող են նույնականացվել, օրինակ, պետական կառավարման մարմինների	Չի ընդունվել: Տե՛ս օրենքի Հոդված 29-ի մաս 11-ը: Օրենքի Հոդված 18-ն արդեն իսկ խմբագրվել է և բուհի հետ համագործակցող գործատուների ներկայացուցիչներին առաջադրելու է բուհի գիտական խորհուրդը, ելնելով բուհի առանձնահատկություններից:	

		կամ պետական այլ ձեռնարկությունների հետ, ինչի արդյունքում հիմնադիրը՝ ի դեմս ՀՀ կառավարության և պետական կառավարման լիազորված մարմնի, կարող է ձեռք բերել բացարձակ վերահսկողություն բուհի կառավարման խորհրդի նկատմամբ՝ ունենալով 50 % մասնաբաժին: Խնդիրն էլ ավելի կարող է ռիսկային դառնալ, եթե հաշվի առնենք, որ նույն հոդվածի 9-րդ կետն ամրագրում է, որ կառավարման խորհրդի նախագահ չի կարող ընտրվել ուսանողության և պրոֆեսորադասախոսական կազմից առաջադրված խորհրդի անդամը, ինչը նույնպես հակասում է բուհի ինքնավարության սկզբունքներին:		
25	Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան 20.12.2017 14:00:59	Շնորհակալություն ենք հայտնում Ձեզ Հայաստանի Հանրապետության Բարձրագույն կրթության մասին օրենքի նախագծի հանրային քննարկմանը հրավիրելու համար: Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանը (այսուհետ՝ ԲՀՀ-Հայաստան) մեծապես կարևորում է բարձրագույն կրթության բնագավառում իրականացվող զարգացման ծրագրերի և նախաձեռնությունների, այդ թվում՝ նաև Բարձրագույն կրթության մասին օրենսդրության բարեփոխումների գործընթացի և բովանդակության մեջ այնպիսի սկզբունքների և արժեքների որդեգրումն ու ամրագրումը, ինչպիսիք են՝ բարեվարքությունը, թափանցիկությունը, մասնակցայնությունն ու հաշվետվողականությունը:	Ընդունվել է ի գիտություն: Օրենքի նախագիծը լրացուցիչ քննարկվել է նաև ԵՄ, ԵԽ և ՀԲ միջազգային փորձագետների հետ:	

		Կարծում ենք, որ ոլորտում իրականացվող ցանկացած նախաձեռնություն պետք է միտված լինի բարձրագույն կրթության որակի բարելավմանը, համակարգային կոռուպցիայի ու քաղաքականացվածության վերացմանը և ՀՀ բարձրագույն կրթության համակարգի զարգացմանը՝ համահունչ միջազգային լավագույն փորձին ու արդի աշխարհի զարգացման միտումներին: Հիմնադրամի օժանդակությամբ 2013թ. Կենտրոնական Եվրոպական Համալսարանի Հանրային Քաղաքականության Վերլուծական Կենտրոնի փոխձագետների կողմից իրականացված «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն» հետազոտությամբ հստակորեն հատկորոշված են բարձրագույն կրթության ոլորտի զարգացման հրատապ և ռիսկային խոչընդոտները, որոնցից առավել էական են բարձրագույն կրթության համակարգի նկատմամբ քաղաքական վերահսկողությունը, ակադեմիական անկախության սահմանափակումը և շահերի բախումները՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններում: Նույն խնդիրները նշված են նաև Համաշխարհային Բանկի կողմից 2013թ.-ին հրապարակված «Կառավարման հետ կապված հարցերը Հայաստանի բարձրագույն կրթության ռեֆորմների կենտրոնում» հաշվետվության մեջ, Եվրոպայի Խորհրդի կողմից 2015թ.-ին անցկացված «Հայաստանի բարձրագույն		

		կրթության համակարգում բարեվարքության վրա ազդող ռիսկերի վերլուծությունը» զեկույցում: Այս համատեքստում գտնում ենք, որ ՀՀ ԿԳՆ կողմից սույն թվականի դեկտեմբերի 18-ին հանրային քննարկման ներկայացված Բարձրագույն կրթության մասին ՀՀ Օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), չնայած որոշակի կառուցողական դրույթների ամրագրման, այնուամենայնիվ, չի հասցեագրում վերոհիշյալ հետազատական աշխատանքներում գնահատված և վերլուծված համակարգային խնդիրներն ու խոչընդոտներն ամբողջությամբ: Նախագծում առկա են մի շարք հակասական և խնդրահարույց դրույթներ, որոնք լրամշակման և վերանայման խիստ անհրաժեշտություն են զգում:		
26	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 28-ի 14-րդ մասի 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «բուհում սահմանված ընթացակարգի համաձայն՝ աշխատանքային և մյուսների հետ հավասար հիմունքներով մասնակցության իրավունքների իրականացման համար օգտվել խելամիտ հարմարեցումներից»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 27-ը:	Ընդունվել է ի գիտություն: Լրացուցիչ քննարկման և հստակեցման անհրաժեշտություն ունի, քանի որ համապատասխան կարգավորումներ նախատեսվում են սահմանել տվյալ ոլորտի օրենսդրությամբ, մասնավորապես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծ:	
27	«Դիսըբիլիթի ինֆո»	Հոդված 24-ի 14-րդ մասի 2-րդ կետի «գ.»	Չի ընդունվել: Օրենքի Հոդված 27-ի	

	հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	ենթակետի «հավասարության» բառից հետո լրացնել «ներկայացուցչականության և ներառականության» բառերով: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի ընդհանուր առաջարկություն 4-ը, պարբ. 62:	(կարծում ենք 27, այլ ոչ 24) 14-րդ մասի համաձայն՝ ուսանողական մարմինների աշխատանքներում կարող են ընդգրկվել բուհի բոլոր սովորողները, այդ թվում՝ նաև հաշմանդամություն ունեցող անձինք:	
28	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 27-ի 5-րդ մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «բուհում սահմանված ընթացակարգի համաձայն օգտվել խելամիտ հարմարեցումների և կրթության ներառականությունն ապահովող այլ ծառայություններից»: Հիմնավորումը տե՛ս նախորդ առաջարկներում:	Ընդունվել է ի գիտություն: Լրացուցիչ քննարկման և հստակեցման անհրաժեշտություն ունի, քանի որ համապատասխան կարգավորումներ նախատեսվում են սահմանել տվյալ ոլորտի օրենսդրությամբ:	
29	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 26-ի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արգելվում է բուհերի վճարովի համակարգում սովորող, ուսումնառող փախստական ճանաչված և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած անձանց համար կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ բուհում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար:»: Տե՛ս Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի հոդված 22-ը, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի հոդված 5-ը, Փախստականների և միգրանտների համար Նյու Յորքի հռչակագիրը (A/RES/71/1):	Ընդունվել է մասնակի:	Օրենքում կատարվել է խմբագրում՝ «ծագումով հայ քաղաքացիների» բառերը փոխարինելով «անձանց» բառով:

30	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 26-ի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «Չի թույլատրվում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատչելիության ապահովման համար հավելյալ վճարների գանձումը»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն 4-ը, պարբ. 4. «Մատչելիությունը պահանջում է, որ կրթությունը բոլոր փուլերում լինի գնային առումով հասանելի հաշմանդամություն ունեցող ուսանողներին: Խելամիտ հարմարեցումները չպետք է հավելյալ ծախս լինեն հաշմանդամություն ունեցող սովորողների համար: Պարտադիր, որակյալ, անվճար և մատչելի առաջնային կրթությունը անհետաձգելի պարտավորություն է»:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան բովանդակությամբ լրացում:
31	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 23-ի 4-րդ մասի 2-րդ մասի «հաշմանդամներին» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձանց», իսկ «հաշմանդամ» բառը «հաշմանդամություն ունեցող» բառերով: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:	Ընդունելի է:	Խմբագրվել է:
32	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական	Հոդված 12-ի 12-րդ մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «բուհի	Ընդունվել է ի գիտություն: Լրացուցիչ քննարկման և հստակեցման	

	կազմակերպություն 20.12.2017 00:56:15	մատչելիության շարունակական ապահովման ռազմավարության և հաշմանդամություն ունեցող անձանց խելամիտ հարմարեցումների ապահովման ընթացակարգերի հաստատումը»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ (պարբ. 42) և Կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն 4-ը:	անհրաժեշտություն ունի, քանի որ համապատասխան կարգավորումներ նախատեսվում են սահմանել տվյալ ոլորտի օրենսդրությամբ:	
33	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 15-ի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «Բուհը պարտավոր է ապահովել ընդունելության քննությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող դիմորդների համար»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ (պարբ. 42) և Կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն 4-ը:	Ընդունվել է ի գիտություն: Տե՛ս նախորդ կետի պատասխանը:	
34	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 12-ի 2-րդ մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «Կրթական միջավայրի մատչելիությունը և տրամադրվող ծառայությունների առկայությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ (պարբ. 42) և	Ընդունվել է ի գիտություն: Ըստ անհրաժեշտության կսահմանվի ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ:	

		Կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն 4-ը:		
35	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 9-ի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ. «Ուսանողի կամ ասպիրանտի դիմումի հիման վրա կրթությունը կարող է կազմակերպվել հայերեն ժեստերի լեզվով, իսկ առանձին մասնագիտական դասընթացների օտար լեզվով դասավանդվելու դեպքում՝ համապատասխան ժեստերի լեզվով»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ, պարբ. 16 և Կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն 4-ը, պարբ. 23, 35, 36, 58:	Չի ընդունվել: Սույն օրենքի կարգավորման դրույթ չէ, այլ կարող է նախատեսվել ենթաօրենսդրական համապատասխան ակտերով:	
36	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 6-ը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «12. Բուհը պարտավոր է ապահովել կրթության, այդ թվում՝ կրթական ծրագրի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Բուհը ապահովում է խելամիտ հարմարեցումների տրամադրումը, որոնք համաչափ ու նպատակահարմար են և ուղղված են անձի կրթության իրավունքի իրականացմանը՝ մշակելով անհրաժեշտ քաղաքականությունը և համապատասխան ընթացակարգերը»: «Խելամիտ հարմարեցումներ» եզրը սահմանված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով և դրա տրամադրումը մերժելը համարվում է	Ընդունվել է ի գիտություն: Լրացուցիչ քննարկման և հստակեցման անհրաժեշտություն ունի, քանի որ համապատասխան կարգավորումներ նախատեսվում են սահմանել տվյալ ոլորտի օրենսդրությամբ:	

		հաշմանդամության հիմքով խտրականություն: Խելամիտ հարմարեցումներ չտրամադրելը խտրականություն է համարվում նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծով, որը խելամիտ հարմարեցումը սահմանում է որպես «անհրաժեշտ փոփոխությունների և հարմարեցումների (շտկումների) կատարում, որոնք համաչափ ու նպատակահարմար են և ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի մարդու հիմնական իրավունքներից և ազատություններից օգտվելուն.»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն 2-ը և 4-ը, պարբ. 28: Տե՛ս նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ, պարբ. 42 (2):		
37	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 5-ի 1-ին մասի 1-ին կետը «որակյալ» բառից հետո լրացնել «ներառական» բառով: «Որակյալ ներառական ... կրթություն» եզրը կիրառվում է ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի կողմից ընդհանուր մեկնաբանություն 4-ում, պարբ. 1: Կայուն զարգացման նպատակ 4-ը ևս հաստատում է ներառական որակյալ և արդար	Չի ընդունվել: Օրենքի Հոդված 5-ի մաս 1-ի 1-ին կետի համաձայն՝ բուհի խնդիրն որպես այդպիսին ընտրած մասնագիտությամբ որակյալ բարձրագույն կրթության ապահովումն է բոլոր անձանց համար:	

		կրթության արժեքը:		
38	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 4-ի 1-ին մասի 4-րդ կետը «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք» բառերից հետո լրացնել «և (կամ) հաշմանդամություն ունեցող» բառերով: Չբացառելով կրթության բնագավառում յուրաքանչյուր անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի կարևորությունը, անհրաժեշտ է երաշխավորել նաև հաշմանդամություն ունեցող անձանց կրթական հնարավորությունների հավասարության սկզբունքը: Հաշմանդամություն ունեցող մարդկանց խումբ առավել լայն է և ընդգրկում է նաև անձանց, ովքեր, նեղ իմաստով, չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, սակայն կրթության իրավունքն օգտագործելիս հանդիպում են բազմաթիվ արգելքների: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի՝ Ներառական կրթության մասին ընդհանուր մեկնաբանություն 4-ը, պարբ. 13:	Ընդունվել է:	Խմբագրվել է:
39	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 4-ի 1-ին մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «գենդերային հավասարությունը»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 6-ը և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի Ներառական կրթության մասին ընդհանուր մեկնաբանություն 4-ը, պարբ. 46: Տե՛ս	Չի ընդունվել: Սույն օրենքի կարգավորման դրույթ չէ:	

		նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Կանանց նկատմամբ գենդերային բռնության մասին ընդհանուր առաջարկություն 35-ը և Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիան:		
40	«Դիսըբիլիթի ինֆո» հասարակական կազմակերպություն 20.12.2017 00:56:15	Հոդված 4-ի 1-ին մասը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «5. Անհատին բնորոշ արժանապատվության, անհատի ինքնուրույնության, պահանջմունքների և կարողությունների նկատմամբ հարգանքը»: Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի Ներառական կրթության մասին ընդհանուր մեկնաբանություն 4-ը, պարբ. 6 (b):	Չի ընդունվել: Օրենքում առկա են բազմաթիվ դրույթներ, որոնցով իրացված է բարձրացված խնդիրը:	
41	Մարիան Թումանյան 02.12.2017 17:21:11	Չնայած տեքստում պարզ նշված չէր, բայց ինչպես հասկացա, նախատեսվում է փոփոխել ասպիրանտական համակարգը եւ գիտությունների թեկնածուից անցում կատարել դոկտորի աստիճանի: Գաղափարը ինքնին վատը չէ, բայց ունի մի քանի խնդիրներ: Բարձրակարգ Եվրոպական բուհերում դոկտորի կոչում ստանալու համար պետք է անել բավական որակյալ, հատուկ չափանիշների համապատասխանող գիտական աշխատանք եւ տպագրվել միջազգային հեղինակավար պարբերականներում: 1. Հայաստանում շատ քիչ են հեղինակավոր,	Ընդունված է ի գիտություն: «Բարձրագույն կրթության մասին» նոր օրենքով կանոնակարգվում և հստակեցվում են միջազգային չափանիշներին համապատասխան բարձրագույն կրթության բնագավառին վերաբերող հիմնական և կիրառվող հասկացությունների (այդ թվում՝ կրթական ծրագիր, բարձրագույն կրթության աստիճաններ, որակավորում և այլն)	

		միջազգային ստանդարտներին համապատասխանող, impact factor ունեցող պարբերականները, որոնք նաեւ հիմնված են կույր գրախոսության վրա (blind peer-review): 2. Միջազգային հեղինակավոր պարբերականների հասանելությունը եւ նրանց օգտագործումը հետազոտական գործընթացում եւս շատ սուղ է Հայաստանում: 3. Չկան նաեւ մեծ թվով այնպիսի դասընթացներ, որոնք կպատրաստեն որակյալ հետազոտական աշխատանք անելուն: 4. Գիտնականները անհրաժեշտ ֆինանսական աջակցություն չեն ստանում հետազոտական աշխատանքը կատարելու նաեւ միջազգային կոնֆերանսների մասնակցելու համար: Այդպիսով, անցում կատարելը դոկտորի աստիճանի ՝ առանց որակական փոփոխություններ կատարելու համակարգում, ուղղակի անթույլատրելի է: Արդյունքը միայն կլինի այն, որ կունենանք մի շարք դոկտորներ ՝ առանց անհրաժեշտ գիտելիքների, հմտություննեի եւ կարողությունների: Դա ոչ մի ձեւով չի օգնի մեր պետությանը, այլ միայն անպատվություն կբերի: Ելնելով վերոնշյալ կետերից, առաջարկում եմ կատարել հիմնավոր փոփոխություններ համակարգում ՝ ուղղված հայ գիտնականների աջակցմանը, գիտելիքների եւ հետազոտական հմտությունների հարստացմանը, գիտական աշխատանքների ֆինանսվորմանը: Միայն դրանից հետո, ապահովելով միջազգային ստանդարտներին համապատասխան որակ,	սահմանումները և անհրաժեշտ դրույթները, որը համադրելի և ըմբռնելի կդարձնի ՀՀ բարձրագույն կրթական համակարգի նկարագրությունը ազգային և միջազգային մակարդակներում: Մասնավորապես ներկայիս օրենսդրությամբ (այդ թվում՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով) կիրառվող հետբուհական կրթության՝ Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում եվրոպական որակավորումների շրջանակի և Զալցբուրգյան սկզբունքների (ասպիրանտական կրթությունն որպես բարձրագույն կրթական 3-րդ մակարդակ) հետ համապատասխանեցմամբ, որը հնարավորություն կընձեռնի որակյալ գիտական հետազոտությունների և աստիճան շնորհելու չափանիշներ ու որակի չափորոշիչներ սահմանելու համար: Հարկ ենք համարում նշել, որ «գիտությունների թեկնածու» սահմանումը միջազգային ասպարեզում առաջացնում է թյուրըմբռնում՝ որակավորման արդեն իսկ ձեռք բերված լինելու	

		անցում կատարել գիտության թեկնածուից դեպի դոկտորի (PhD) աստիճանին:	ուղղությամբ: «Մասնագիտության դոկտոր» որակավորումն իր գիտահետազոտական գործընթացով նախատեսվում է, որ կազմված է լինելու 30% կրթական բաղադրիչից, իսկ մնացածը հետազոտական: Միևնույն ժամանակ «գիտությունների դոկտորը» ամբողջովին գիտական աստիճան է, որը չի պարունակում կրթական բաղադրիչ և չի բնութագրվում կրթական վերջնարդյունքներով, այն շնորհվում է գիտությունների թեկնածուի աստիճան ունեցող անձին՝ համապատասխան ոլորտում իր կողմից իրականացրած ակնառու (նշանավոր) բացահայտումների, նորարարությունների և նորամուծությունների արդյունքում: Նշենք նաև, որ «Գիտության դոկտորը» ՀՀ-ում որպես գիտական աստիճան գործելու է, բայց կարգավորվող «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով և վերջինիս դրույթներից բխող այլ իրավական ակտերով: Հիշյալով պայմանավորված, օրենքի նախագծով նախատեսվել է «գիտությունների թեկնածու»	

			գիտական աստիճանը որպես այդպիսին նախատեսել «մասնագիտության դոկտոր (PhD)» որակավորումով՝ միջազգային որակավորման ճանաչելիության ապահովելու նպատակով և որակավորումը, որը ձեռք է բերվում ուսումնառության հաջող ավարտին՝ կրթական որակավորում է, իսկ երրորդ աստիճանի որակավորման շնորհման կարգի հաստատումը սահմանվելու է ՀՀ կառավարության կողմից համապատասխան ենթաօրենսդրական ակտով: Ավելին, օրենքով հստակ ամրագրված է, որ ասպիրանտական ուսուցման արդյունքում (կրթական աստիճանով կրթական ծրագրերի բեռնվածությունը պետք է կազմի 180 կրեդիտ) ուսանողը ձեռք է բերում խոր և համալիր գիտելիք, հմտություններ և կարողունակություն՝ մեկ կամ մի քանի փոխհատվող ոլորտներում հետազոտական և մասնագիտական գործունեություն իրականացնելու և նոր գիտելիք ստեղծելու համար, իսկ ուսուցումն ամփոփվում է ատենախոսության պաշտպանությամբ, իսկ ուսուցումն	

			ավարտած և ատենախոսությունը պաշտպանած անձին շնորհվում է գիտական աստիճան: Տվյալ դեպքում նշենք, որ օրենքը չի կարող ամենայն մանրամասնությամբ կարգավորել ասպիրանտական ծրագրի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջներին վերաբերող հարցերը: Որակավորումների տեսանկյունից խնդիրը կարգավորվում է Որակավորումներ ազգային շրջանակի (ՈԱՇ) 8-րդ մակարդակում ձեռք բերվող վերջնարդյունքների միջոցով՝ բարձրացնելով ակնկալվող գիտելիքների, հմտությունների և կարողունակության շեմը (տես՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 714-Ն որոշումը): Ելնելով վերոշարադրյալից նշենք, որ ՀՀ օրենքի նախագծով ամրագրվում է Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան ասպիրանտական կրթության ոլորտը բարեփոխելու ու վերջինովս պայմանավորված բուհերի ասպիրանտական կրթական ծրագրերը վերանայելու ու համապատասխանեցնելու	

			Ձալցբուրգյան սկզբունքներին և նորարարական դոկտորական (ասպիրանտական) դասընթացների պահանջներին: Միաժամանակ տեղեկացնենք, որ ՀՀ կառավարության 2017-2022 ծրագրի 4.1 «Կրթություն և գիտություն» բաժնի 10-րդ կետի 1գ) ենթակետով նախատեսված է 2019-2021 թվականների ընթացքում մագիստրոսի և ասպիրանտի կրթական ծրագրերում զարգացնել հետազոտական ու նորարական բաղադրիչները, ինչպես նաև ներկայումս ՀՀ ԿԳ նախարարի 13.04.2017թ. N 371-Ն հրամանի համաձայն ասպիրանտական կրթական ծրագրերի պարտադիր դասընթացների շարքում արդեն իսկ ընդգրկվել է «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» առարկան:	